

ԷՋԱԿԱՌԻՆ



ՌՆԸ
ԺԶ ՏԱՐԻ


Յոմէրս

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Զ

1959



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Կոմիտաս վարդապետ	3
Պաշտոնական հաղորդագրություն Տաթևի, Հաղարծնի և Հատինա	6
վանքերի Մայր Աթոռին հանձնման մասին	7
Խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի հիստոր	8
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	
Կոմիտաս վարդապետի ծննդյան 90-ամյակին նվիրված հիշատակի	12
հանդես Հոգևոր ձեմարանում	16
ՓԱՅԼԱԿ ԾԻԱՅԱՆ—Ո՛վ գիտեր սակայն	18
ՄԱՐԳԱՐԻՏ ԲՐՈՒՏՅԱՆ—Երգանան Կոմիտաս վարդապետը	29
ԱՂԱՎՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ—Չարենցը Կոմիտասի մասին	
ՊՐՈՅ.-ԴՈԿՏ. Լ. Մ. ՄԵԼԻՔՍԵՑ-ԲԵԿ—Հովհաննես Վանական	35
Տավուշեցու անտիպ երկերից	45
Ա. ԱԼՊՈՅԱՃՅԱՆ.— Բրուսայի շրջանի հայերը	51
Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ.— Նոր Գետկա վանք կամ Գոշավանք	
Քենտրբերիի Արևայիսկոպոս դոկտ. Ջեռֆֆրի Ֆիշերը Կալկաթայի	59
հայոց Սուրբ Նազարեթ եկեղեցում	62
Հայրապետական բարձր գնահատություն	



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝
 ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԷՋՄԻԱՅԻՆ
 «ԷՋՄԻԱՅԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
 Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»
 Redaction of the magazin „Etchmiadzin“, Etchmiadzin, Armenia, USSR

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՂՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Կ Ո Մ Ի Տ Ո Ս Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ



յս օրերին, թե՛ Մայր Հայրենիքում և թե՛ Սփյուռքի տարածքի վրա, համազգային արժանավայել հանդիսությամբ և երախտագիտական անվերապահ զգացմունքով նշվում է հայ ժողովրդի տաղանդավոր գավակ, Մայր Աթոռ Ս. էջմիածնի արժանավոր միաբան, հայ երաժշտական մշակույթի խոշորագույն և սիրելիագույն դեմքերից մեկի, Կոմիտաս վարդապետի ծննդյան 90-ամյակը:

Կոմիտաս վարդապետը իր երաժշտական մեծարժեք և անկրկնելի վաստակով, ամուր կերպով կանգնել է մեր մշակույթի պատմության անմահ փառերի յուսանույլին մեջ: Հավետ վառ ու կենդանի կմնա տարախոս վարդապետի խնկարույր հիշատակը հայ սերունդների երախտագետ սրտերում:

Կոմիտաս վարդապետի պայծառ անունը՝ որպես հայկական երաժշտության ռահվիրայի՝ և մեծ գործը՝ որպես հայ երաժշտական մշակույթի ինֆորմացիոն տեսաբանի և հայկական ինֆորմույն երաժշտական զրպրոցի հիմնադրի՝ շատ թանկագին ու եվրոպական են յուրաքանչյուր հայ մարդու համար: Կոմիտաս վարդապետի կյանքն ու գործունեությունը ուսանելի են և մոռումնենալ իրենց ողջ գրավչության, պարզության և վեհության մեջ: Կոմիտաս վարդապետը միաժամանակ սուրբ է և ճանաչակ: Նա 1915 թվականին, հավասար շափով ապրեց իր ժողովրդի գողգոթան, բաժանեց մտքի, գրչի, արվեստի իր բնկերների աշունհա հակատագիրը և թեև հրաշքով ազատված վերադարձավ ախարի ճանապարհից փշրված իմացականությամբ և այնկոծ

հոգով, սակայն մինչև 1935 թվականը ապրեց որպես ԿՍՆԴԱՆԻ ՄԵՌԵՆԸ, որպես ԲՈՂՈՔ՝ հայ ժողովրդի, երա մշակույթի և արվեստի դեմ կատարված անլուր զազանությամբ:

Կոմիտաս վարդապետը, որպես հայրենասեր ու ազնիվ մարդ, որպես երաժիշտ ու մանկավարժ, հմուտ ազգագրագետ, խմբավար և երգիչ, ԺՊ դարի վերջին շրջանի մեր հասարակական և մշակութային գարթոնի ամենաինֆուատիպ և անկրկնելի մեծություններից մեկն է: «Մահկանացու ձնեալ՝ անմահ գիրք յիշատակ եթող» (հուրենացի):

Կոմիտաս վարդապետը սեվել ու կրթվել է Մայր Աթոռի սրբազան կամարների տակ, Ս. էջմիածնի մրեռարտում: Նա իր երաժշտական առաջին կրթությունը ստանում է Մայր Աթոռում, որպես ծայնեղ և երաժրտական ընդունակություններով օժտված շնորհալի պատանի, Ղևոնդ եպիսկոպոսի հմուտ դեկավարության տակ, իսկ Սահակ վարդապետ Ամատունուց սովորում է հայկական ծայնանիշների ուսմունքը և ուրծայն շարականների երգեցողությունը: Ճեմարանի ուսանողության տարիներին, պատանի խոստովնայից Սոցոմանը, ապագա Կոմիտաս վարդապետը, առատորեն սնունդ է քաղում մեր ճագեռ երգերից և ժողովրդական երաժշտության գանձերից, իր հոգու և մտքի բազում թելերով կապվում մեր ավանդություններին, Մայրենի հողին, ջրին, աշխատանքին և բնությանը: 1893 թվականին եա սարկավագ է ձեռնադրվում, և բեղմիշտ իր անունն ու կյանքը անխզելիորեն կապում Մայր Աթոռ Ս. էջմիածնի հետ, և

Մայր Աթոռում ծավալում երաժշտական ընդարձակ գործունեություն բազմազան ուղղությամբ, որպես Գևորգյան ձեմարանի երաժշտության դասախոս, որպես երգչախմբի ղեկավար, երգահան, ազգագրագետ, երաժշտության տեսաբան: Մայր Աթոռը և Հոգևոր ձեմարանը կամփոսա վարդապետի համար հանդիսացել են յուրահատուկ ստեղծագործական մի աշխատանոց: Հայկական շենոլ և զգայնությամբ հարուստ այդ հոգևոր-իմացական հաստատության մեջ կամփոսա վարդապետը ոչ միայն վայելում է երաժշտասեր Գևորգ Գ կարողիկոսի և ապա ետիմյան Հայրիկի հայրական հոգատարությունը, պայտապանությունն ու սերը, այլ նաև անմիջականորեն շփվում զյուրական ժողովրդական շրջապատի հետ, և ժողովրդական ստեղծագործության ակունքից փայլում հայ երգի համը ու հոտը, քարմուռյունն ու պարությունը: 1893—1910 թվականներին, 17 տարի անընդհատ, կամփոսա վարդապետը իր ձեռքի տակ է ունեցել Գեվորգյան ձեմարանի երգչախումբը և ուսանողությունը, իր երաժշտական գործունեության և ազգագրական ուսումնասիրությունների համար: Հանախ նա հեմարանցիների բերած ժողովրդական երաժշտական գանձերից էր փառում իրեն անհրաժեշտ երաժշտական նյութերը և աշխատում նրանց վրա: Ապա ինքը անձամբ ման էր գալիս, մտնում ամեն տուն ու երգիկ, ազատորեն ներկա լինում գեղջկական հարսանիքների, կրոնական ուխտագնացությանը, արտի ու կայի, դաշտային աշխատանքների, և օժտված խորաթափանց մտնով ու զինված խուզարկու մեթոդներով, որսում, փառում մեր ազգային երաժշտության բարձրագույն ձևերը, ժողովրդական երգերն ու պարերը և մեր հոգևոր երգերի՝ շարականների, տաղերի, մեղեդիների, գանձերի՝ նախնական հարագատ եղանակները և ապա այդ բոլորը Մայր Աթոռում ենթարկում զիտական, երաժշտական ստեղծագործ ուսումնասիրության:

Ո՛րտեղ է կամփոսա վարդապետի մեծության գաղտնիքը, նրա անվան ու գործի նմայիքը, փաղցրությունը:— Դեպի հայ ժողովուրդը և նրա հոգևոր մշակույթը ունեցած նրա խորունկ սիրո և պայտամունքի մեծ: «ԺՈՂՈՎՈՒԹՅՈՒՆ Է ԱՄՆԵՄԱՄԵՄ ԱՅՆՂՄԱՎՈՐՄՈՂԸ, ԳՆԱՅԻՔ ԵՎ ԱՌՈՐԵՑԻՔ ՆՐԱՆՆՑ»: Եվ կամփոսա վարդապետը, մեծ արվեստագետի խորաթափանցությամբ, գնաց ժողովրդական ճշմարիտ արվեստի նախապարծով: Նա ապրեց ժողովրդի մեջ, և ստեղծագործեց ժողովրդի համար:

Կամփոսա վարդապետը մեծ է որպես երաժիշտ և որպես Հայ եկեղեցու վարդապետ, ինչպիսին էին Ա. Մեսրոպը, Ստեփանոս

Սյունեցին, Նարեկացին, Շնորհալին, Տարոնացին և ուրիշներ: Նա արժանավոր հաշարդեք էր մեր եռամեծ հոգևորականների, որոնք միաժամանակ եղել են մեծ արվեստագետներ, երաժիշտներ ու փիլիսոփաներ, բուհաստեղծներ ու երգիչներ:

Կամփոսա վարդապետը հայկական ազգային երաժշտությունը ընկալում էր հիմնական երկու մեծ հյուղերով՝ ՀԱՅ ԳԵՂՁՈՒՆ ԿԱՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ՀՈԳԵՎՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, որոնք, բառ նրան, երկու փայլեր են, ազգակիցներ. նույն մտո՛ հայ ժողովրդի հարագատ ծնունդներ: Նա երկար մարտեր գրազվել է հայ հոգևոր և աշխարհիկ երգերի, երաժշտության ծագման, զարգացման և զանազան փոխազդեցությունների հարցերով: Հստ կամփոսա վարդապետի, դրանցից ամեն մեկը ունի իր ռեալիստ առանձնահատկությունները, այդ պատճառով կամփոսա վարդապետը դրանցից յուրաքանչյուրի նկատմամբ ուներ իր ստեղծագործական առանձին մտեցումը, որից էլ մեծ լինեց հայ հոգևոր և աշխարհիկ երգերի ներքին աղերսը, կապը: Կամփոսա վարդապետը մեր հոգևոր և աշխարհիկ երաժշտության ուսումնասիրության բնագավառում տվել է անկորելչելի և մեհայուն արժեք ներկայացնող գիտական երաժշտական յուրջ աշխատություններ, որոնք նրա անունը կմիացնեն հայ մշակույթի մեծ երախտավորների սրբազան հույլին:

Հայ մշակույթի գանձարանում յուրահատուկ տեղ են գրավում մեր հոգևոր-եկեղեցական երգերը՝ շարական, տաղ, գանձ, մեղեդի, և որոնք կազմում են հայ երաժշտական մշակույթի ժառանգության մի պատկառելի մասը: Հոգևոր այդ երգերի մեջ, ինչպես նշում է կամփոսա վարդապետը, կա «նստակ, միամիտ, շերմեռանդ, հավատացյալ ոգի, ոգի, որի մեջ պայծառ փայլում է մեր նախնայաց անձման, զգայուն, կենդանի և վեհ սիրտը, որ շինջ է առավառյան օդի պես»:

Կամփոսա վարդապետը ներքին արվեստագետի ընկալումով և մասնագետի բժայիքնորությամբ գրազվել է հայ եկեղեցական-հոգևոր երաժշտության պատմության տեսության հարցերով, ինչպիսիք են այդ հարցերին նվիրված նրա գիտական աշխատությունները՝ «Հայոց եկեղեցական եղանակները» (1894), «Հայոց եկեղեցական երաժշտությունը ժ՞ դարում» (1897), «Երգեցողությունը՝ Ա. պատարագի» (1898), «Հայ եկեղեցական երաժշտություն» (1898), «Շարականների խազերի նշանակությունը» (1914) և այլ աշխատություններ:

Կոմիտաս վարդապետը ավելի քան 25 տարիներ զբաղվել է հայ գեղջուկ երաժրշտության պատմության և ուսումնասիրության հարցերով: Այդ բնագավառին նվիրված նա ունի բազմաթիվ մեծածեղ աշխատություններ, տեսական դիտողություններով և երաժշտական նոր դրույթով հարուստ և գիտականորեն հիմնավորված, օրոհի ապացուցում են, որ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՈՒՆԻ ԱԶԳԱՅԻՆ, ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ, ԻՆՔՆԱՏԻՊ ԵՐԱԺԸՇՏՈՒԹՅՈՒՆ, որ հայ նրզր շատ հին է և որի առմատները բարձրանում են մինչև հայ ժողովրդի ծագման դարերը, սկիզբ առնում պատմական հեռու անցյալից: Հայ ժողովրդական երգը, հանձին Կոմիտաս վարդապետի՝ գտել է իր ամենացայտուն վարպետին: Հայ ժողովրդական երգը Կոմիտասի համար, հայ շինականի կյանքի ու կենցաղի, աշխարհայացքի ու հոգեկան ապրումների, նրա պատմության և բնաշխարհի, ազգային մախուր ու իննետիպ լեզվի արտահայտությունն է: Այդ բնագավառում Կոմիտասը կատարեց պատմական և անփոխարինելի մեծ դեր հայ երաժշտության պատմության մեջ: Նա հանճարեղ հմտությամբ ստավ ՀԱՅ ՆՐԳԻ, ՀԱՅ ՆՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՃԸ, ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ՈՒՃԸ: Կոմիտաս վարդապետի համար ժողովրդական երաժշտությունը ներշնչման անսպառ աղբյուր էր: Դրա համար դժվար է ասել, թե ո՞րտեղ է ավարտվում ժողովրդական երաժշտությունը և ո՞րտեղ է սկսվում Կոմիտասյան սեփական ստեղծագործությունը:

Հայ կլասիկ երաժշտության մեջ, հայկա-

կան իննետիպ, իննուույն երաժշտական ռեի բացահայտման պատիվը պատկանում է Կոմիտաս վարդապետին: Նա հայ ազգային երաժշտության հիմնադիրն է:

Դժվար է, խմբագրականի այս սեղմ տողերի մեջ, սպասիչ կերպով խոսել Կոմիտասյան երաժշտության ժառանգության բուր արժանիքների վրա, հայ երգին և հայ ժողովրդին նրա մատուցած ծառայության վրա:


Տարաբախտ վարդապետի Բնարը լուց իր ստեղծագործ ուժերի ծաղկման և կարողությունների ամենածաղկուն և բեղուն շրջանում: Մոտ 20 տարի նա ապրեց՝ փշրված իմացականությամբ և հոգեկան անհավասարակշիռ վիճակում, շարվեստի ստեղծագործության կյանքին շատ կանոխ խլվելով:

Լուց վաղաժամ Կոմիտասյան սուրբ Բնարը և ՀԱՅ ՆՐԳԻ ՄԵՄ ՎԱՐՊԵՏԸ ներամփոփվեց ինքն իր մեջ, հեռու իր ժողովրդից և այնուհետև ստումաշուր երգեր և լեզուց միայն ինքն իր մեջ, ինքն իրեն համար: Նա մեռավ Լեզելով ու գերեզման տարավ իր նետ հայ երաժշտության վերաբերյալ լուսավոր նոր մտքեր, գանձեր, հայտնություններ: Նա կյանքից թռավ երազի նման, բայց բացեց լուսավոր ախոս հայ երաժշտության մեջ:

Կոմիտաս վարդապետը հայ ժողովրդի ազգային հպարտությունն է, պարճաներ: ՆՐԱ ՊԱՅԾԱՌ ԱՆՈՒՆՆ ՈՒ ԱՆՄԱՀ ԳՈՐԾԸ ՀԱՎԵՐԺ ԿԱՊՐԵՆ, ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՐԱԽՏԱԳԵՏ ԱՐՏՈՒՄ, ՀԱՅ ՆՐԳԻ ՀԵՏ:

Փա՛ռ! անման Կոմիտաս վարդապետին և նրա մեծ գործին:





ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԹԵՎԻ, ՀԱՂԱՐԾՆԻ ԵՎ ՀԱՌԻՃԱ ՎԱՆՔԵՐԻ ՄԱՅՐ ԱԹՈՒԻՆ ՀԱՆՁՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Վեճափառ Հայրապետի անաչադրությամբ Տաթևի, Հաղարծնի և Հառիճա վանքերը, Հայաստանի Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից, հանձնվեցին Մայր Աթոռիս խնամքին և լզորձածության՝ իբրև կրոնական սրբատեղիներ:

Տաթևի (Թ դար), Հաղարծնի (ԺԱ—ԺԲ դարեր) և Հառիճա (Է—ԺԳ դարեր) վանքերը մեր նշանավոր պատմական հուշարձանների շարքին են պատկանում իրենց ճարտարապետական ռեզվ և հոգևոր-մշակութային անցյալով:

Մայր Աթոռը՝ մոտ ապագայում պիտի կազմի ճատուկ ծրագիր՝ պատմական այս վանքերի վերանորոգման և կյանքի կոչվելու կապակցությամբ:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԳ

20 Վայիսի 1859 թ.

Ս. ԱՄԻԱՆԻՆ





ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԸ

Մայիսի 6-ին, Երևանում, Միությունների տան դահլիճում, առաջտայան ժամը 12-ին, կայացավ Խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի ընդլայնված նիստը, որին մասնակցում էին արվեստի, զբաղանության, գիտության անվանի զործիչներ և հասարակայնության բազմաթիվ ներկայացուցիչներ:

Խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի նիստին ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը, ընկերակցության մեր Հոգևոր Ժեմարանի վերատեսուչ գերապատիվ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանի, որը նիստում, հանուն Վեհափառ Հայրապետի, հանդես եկավ Խաղաղության նվիրված կրոնաշունչ բովանդակալից ճառով:

Սրբազան հայրը Խաղաղության նվիրված իր ճառում նշեց, որ Խաղաղությունը սմարտուր համար անհրաժեշտություն մըն է, հասնելու համար բարձր կատարելության, և այն, իբրև հոգեկան պահանջ, ամեն բանն առաջ յուրաքանչյուր մարդու խղճմտանքի հանգրստությունն է: «Եռալաղութիւն աբաբէլ բնդ միմեանս».— կրսն Պողոս առաքյալ: Ընդ, ուր Խաղաղությունը կթագավորն, մարդոց բոլոր զործերը առավել ևս կարգունավորվին: Խաղաղության սերմերը շուտով կպտղաբերին և մարդկային կյանքը կդառնա տանելի և աշխարհն կվերնան թշվառությունն ու ատելությունը: Ահա այս ոգիով Հայաստանայաց Առաքելական Ս. Եկեղեցին, իր երգերով, աղոթքներով և շարականներով, կոչ կուղղե իր հալատադայներուն, որպեզի ապրին խա-

ղաղության մեշ և կաղթն շարունակ «Վասն Խաղաղութեան ամենայն աշխարհի»:

Հայ ժողովրդի ծոցնն ծնած Հայաստանայաց Առաքելական Ս. Եկեղեցին, իր հարազատ ժողովուրդին հետ միասին, շարունակ փնտոած է Խաղաղությունը: Այդ ոգին մեզի կուգա դարերու մեջնն մինչև մեր օրերու հայրապետները:

Մասնավանդ այս օրերուն Խաղաղության համար եռանդուն զործիչ կհանդիսանա Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը, որ իր սրբատառ կողակներուն և քարոզներուն մեշ կոչ կուղղե բոլոր աշխարհին և մասնավանդ իր հավատացյալ զավակներուն, պատգամելով, «Եռալաղութիւն աբաբէլ բնդ միմեանս, եզրաբ մեռ սիբելիբ»: Ու մեր ձայնը կմիացնենք Խաղաղության համար պայքարող բազմամիլիոն մարդոց ջանքերուն և կպահանջենք փակել պատերազմի ճանապարհները, կանխել ոճիրներն ու ավերածությունները, որոնք կսպառնան քնաշնչել մարդկության կողմն ստեղծված հոգևոր, իմացական արժեքները և խլել մարդկային բազմաթիվ կյանքեր:

Թող աստվածային սերը և միությունը թագավորն մարդոց, ժողովուրդներու և պետություններու միշեւ:

Նիստի մասնակիցները ջերմ ծափահարությունների տակ ընդունեցին ողջուն՝ ուղղված Խաղաղության Համաշխարհային Խորհրդին և Դիմում՝ կառավարություններին՝ զադարեցնելու միջուկային զինքի փորձարկումները:





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ւ Ո Ւ Մ

ՄԱՅԻՍԻ 3-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա պատարագեց արժանապատիվ **Տ. Հակոբ քահանա Հակոբյանը:** Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նույն օրը, հրեկոյան ժամը 4-ին, Վեհաբանում տեղի ունեցավ ճարտարապետական խորհրդակցություն Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, որտեղ քննարկվեց Մայր Տաճարի Ավագ Սեղանի մարմարապատման աշխատանքների ընթացքը:



ՄԱՅԻՍԻ 5-ԻՆ, ԵՐԵՎԱՆԻ, Թրիփսիեց Մայր Աթոռ վերադարձան գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը և հոգեշնորհ Տ. Բարգեն վարդապետ Ապատյանը, որոնք հին տոմարով Զատիկական տոների անցկացնելու համար գնացել էին Թրիփսի:



ՄԱՅԻՍԻ 7-ԻՆ, ՀԻՆԳՇԱՔԹԻ, ժամարածումն Քրիստոսի: Մայր Տաճարում հանդիսավոր եպիսկոպոսական սուրբ պատարագ մատուցեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը և օրվա տոնի նշանակության մասին քարոզեց ռեվի ի հօրէ և եկի յաշխարհ, դարձնել թողնում զաշխարհ և երթամառ Հայրս քնարանով: Իր քարոզի երկրորդ մասը սրբազան հայրը նվիրեց հիշատակին Եփոսյանի թեման Հայրապետական Աթոռոյն Հայոց ի Սույ ի Ս. Էջմիածին յամի Տեառն 1441: Այգ առթիվ սրբազան հայրը մաղթանքներ արեց Վեհափառ Հայրապետի արևշատության և բարվոք գործունեության համար:

Հավարտ սուրբ պատարագի, օրվա ազգային տոնի առթիվ Վեհափառ Հայրապետի հանդիսազրույթյամբ կատարվեց Հայրապետական մաղթանք:



ՄԱՅԻՍԻ 8-ԻՆ, ՈՒՐԱԿ, Թեմական գործերով Մայր Աթոռ ժամանեցին Վրաստանի հայոց թեմի ժամանակավոր առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը, Երևակի թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը, Աղբրեղյանի թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը և Ս. Գեղարդի վանքի վանահայր հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը:



ՄԱՅԻՍԻ 11-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա, իր եպիսկոպոսական անդրանիկ պատարագը մատուցեց Հարավային Ամերիկայի Հայրապետական պատվիրակ նորապսակ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Ապատյանը: Սուրբ պատարագի հրապարակումը կատարեցին Հոգևոր Ճեմարանի սաները:



ՄԱՅԻՍԻ 15-ԻՆ, ՈՒՐԱԿ, առավոտյան ժամը 8-ին, ինքնաթիռով Մոսկվա մեկնեց Հարավային Ամերիկայի Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Ապատյանը: Երևանի օդանավակայանում սրբազան հորը ճանապարհեցին Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը, Եջմիածին ամսագրի խմբագիր Աթոռոն Հատիտյանը, դիվանապետ Հայկ Առաքելյանը և ուրիշները:

Նույն օրը, Հոգևոր Ճեմարանի ամբողջ ուսանողությունը և ուսուցչական կազմը, զբոսավորությամբ վերատեսուչ սրբազանի, ուխտազնացություն կատարեցին դեպի Գառնի և Գեղարդ: Գառնիի պատմական ավերակներում, ինչպես նաև Ս. Գեղարդի վան-

քի հոյակապ վիճափոր տաճարներում, վանքի շինությունների և մշակութային մեծ կենտրոն լինելու մասին պատմական արժեքավոր բացատրություններ տվեց Հոգևոր Ծննդարանի հայ ժողովրդի պատմության գասախոս գոցենտ Է. Հարությունյանը: Գեղեցիկ օր անցկացնելուց հետո Ս. Գեղարդի վանքում, ուսանողները տաճարում մասնակցեցին նաև երեկոյան ամենօրյա ժամերգությանը: Սրբազանը «Հոգևոր» ասաց վանքի կառուցման և պահպանման գործում իրենց իմացական, բարոյական, նյութական նպաստը բերած բոլոր հանգուցյալ հոգիների հիշատակին: Ուսանողությունը երեկոյան ժամը 6-ին, լավագույն տպավորություններով և անմոռանալի հուշերով, վերագարձավ Մայր Աթոռ:



ՄԱՅԻՍԻ 17-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, ՀՈԳԵԳԱԼՈՒՍ: Մայր Տաճարում հանդիսավոր եպիսկոպոսական պատարաղ մատուցեց գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը և օրվա տոնի նշանակության մասին խոսեց ոգեշունչ քարոզ՝ «Եւ հղիցի յետ այսորիկ հեղեղ յՈղտյ իմմէ՝ ի վերայ ամենայն մարմնոյ. և մարգարէացցին ուստերք ձեր և դստերք ձեր. և ծերք ձեր երազովք երազեսցին, և երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն» (Յովկ Բ 28) քնարանով: Իր քարոզում սրբազանը ծանրացավ Սուրբ Հոգու զորության և ներգործության, ինչպես առաքյալների, այնպես էլ հավատացյալների վրա և հորդորեց «շշիշուցանելս Ս. հոգին»:



ՄԱՅԻՍԻ 21-ԻՆ, ՀԻՆԳՇԱՐԹԻ, Ժամբ 1-ին, Հոգևոր Ծննդարանի դահլիճում, Մայր Աթոռի միաբանության, Հոգևոր Ծննդարանի գասախոսական կազմի, ուսանողության և վանքի պաշտոնների համար ելույթ ունեցավ Հայաստանում հյուր գտնվող Լենինգրադի ֆիլհարմոնիայի արտիստների խումբը «Էմիրիտոն» երաժշտական գործիքի վրա: Գաղնամուրի ընկերակցությամբ և Ալ. Իվանովի ղեկավարությամբ, «Էմիրիտոն»-ը ուսական երաժշտական գործիք է, որի ստեղծարարը կարող է փոխարինել սիմֆոնիկ նվագախմբում գործածվող գործիքները միանգամից: Գործիքի հեղինակն է Ալ. Իվանովը, այն պատրաստվել է 1952 թվականին Լենինգրագում: Համերգին ելույթ ունեցավ նաև երգչուհի Բոկաստովան, որը կատարեց ուսական և արևմտյան ստեղծագործություններից որոշ երաժշտական համար-

ներ: «Էմիրիտոն»-ի վրա նվագում էր արտիստ Լազարեր, գաղնամուրի պարտիան կատարում էր արտիստ Իսկոսովը:

Համերգին ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը, որը համերգից հետո Վեհարանում ընդունեց շնորհայի արվեստագետներին և գրույց ունեցավ նրանց հետ:



ՄԱՅԻՍԻ 24-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, առավոտյան ժամը 8-ին, Վեհափառ Հայրապետը մեկնեց Մոսկվա, մասնակցելու համար Խաղաղության Պաշտպանության Համաշխարհային Խորհրդի ստեղծման 10-ամյակի հոբելյանական հանդիսություններին: Վեհափառ Հայրապետին ճանապարհեցին Գերագույն Հոգևոր Խորհրդի, միաբանության անդամները, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը, քահանայից զասը և Մայր Աթոռի պաշտոններով:

Նորին Ս. Օծուխյանը ճանապարհելու համար օդանավակայան էր եկել նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը:

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էր հոգեշնորհ Տ. Եղիշև վարդապետ Սարգսյանը:



ՄԱՅԻՍԻ 24-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «սկիզբն յարութեան կիրակէից, յիշատակ եղիայի մարգարէին»: Մայր Տաճարում, Իշման Ս. Սեղանի վրա պատարագեց և քարոզեց գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը՝ «եղիցի կրկին ոգից ք ի վերայ իմ» (Գ Թագ. Բ 9) քնարանով: Քարոզիչ սրբազանը այս քնարանով եղիա մարգարեին քննադրեց իբրև ճշմարիտ աստվածապաշտ, նախանձախնդիր մովսիսական օրինաց, ճշմարիտ հայրենասեր և անվախ քարոզիչ միակ Աստուծո:



ՄԱՅԻՍԻ 25-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, ԵՏՕՆ սրբոց կուսանացն Հոփսիմեանց: Հոփսիմյանց վանքը վերանորոգության մեջ լինելու պատճառով նախատեսվեց, առավոտյան ժամերգությունը կատարվեցին և սուր պատարագը մատուցվեց Մայր Տաճարում: Պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը, քարոզեց գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոսը՝ «Թաղում դստերք ստացան դեմծութին, ըագումք արարին զօրութիւն, բայց զու առանկ եղեր և անցուցեր զամենեւրումք: Սուտ հաճութիւն և ընդունայն գեկ

կնոջ ոչ գոյ ի քեզ...» (Առակք Սողոմոնի, (Ա 29-30) բնարանով:

Սրբազանը նախ տվեց Հոփսոսիմյանց կույսերի պատմությունը և ապա վեր առավ այդ խմբին Հոփսոսիմ կույսի ճշմարիտ հավատը և այն հոգեկան ուժը, որով նա արհամարհեց աշխարհիկ և ունայն փառքերը: Սրբազանը շեշտեց հոգեկան գեղեցկության բարոյական մեծ նշանակությունը և կոչ արեց քրիստոնյա մայրերին՝ իրենց զավակները մեծացնել այդ ոգով:



ՄԱՅԻՍԻ 26-ԻՆ, ԵՐԵՎԱՆԻ, ԵՏՕՆ սրբոց կուսանացն Գայիանեանցա: Ս. Գայանյանց վանքում պատարագեց և քարոզեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը, ժանրանալով նահատակ կույսերի հավատի և հոգեկան քաղցրության վրա:



ՄԱՅԻՍԻ 28-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, ԵՏՕՆ Սրբոյն Յովհաննու կարապետին և Աթանազիեայ եպիսկոպոսին: Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցվեց: Պատարագիչն էր արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը: Ս. Ծողկաթ վանքի վերանորոգման պատճառով այնտեղ եկեղեցական պաշտամունք տեղի չունեցավ:



ՄԱՅԻՍԻ 30-ԻՆ, ԵԱՐԱԹ, ԵՍՐՐՈՅՆ ԳՐԻՔՐԻ Լուսաւորչին մերոյ ելն ի վիրապէն: Օրվա տոնի առթիվ իշման Ս. Սեղանի վրա եպիսկոպոսական հանդիսավոր պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյանը և քարոզեց Ս. Գրիգոր Լուսավորչի կյանքի և առաքելական գործունեության մասին:

Նույն օրը խոր վիրապի վանքի ուխտագնացության օրն էր: Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը, ուխտավորների բազմության ներկայությամբ, պատարագեց խոր վիրապի վանքում և քարոզեց մեծ սրբի՝ հայ ժողովրդին բերած հոգևոր ու բարոյական լուսավորության շուրջը:

Ա Յ Ց Ե Լ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՄԱՅԻՍԻ 5-ԻՆ, ԵՐԵՎԱՆԻ, Մայր Տաճար այցելեցին ամերիկահայ և հայկազհայ մի խումբ տուրիստներ: Իշման Ս. Սեղանի առաջ իրենց ուխտը կատարելուց հետո, երանք այցելեցին եկեղեցա-հնագիտական թանգարանը, որից հետո Վեհափառ Հայրապետը բարեհաճեց Վեհարանում ընդունել

ՄԱՅԻՍԻ 31-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, ԵՏՕՆ կաթողիկէ Ս. Էջմիածնի: Մայր Աթոռի տոնի ուրախ առիթով Մայր Տաճարում, Իշման Ս. Սեղանի վրա մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ: Պատարագեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Արարհամայանը և քարոզեց Բագատր երկնատր, գեկեղեցի քո անշարժ պահեա, և գերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղութեան 2արականի բնարանով: Քարոզիչ սրբազանը նախ խոսեց Ս. Էջմիածնի շինության պատմության մասին, ապա ծանրացավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հայ ժողովրդի կյանքում կատարած հոգևոր, բարոյական, մշակութային մեծ առաքելության վրա: Քարոզի վերջում սրտագին բարեմաղթություններ արեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անասանության, Հայ եկեղեցու պայծառության, հայ ժողովրդի հավերժության և Վեհափառ Հայրապետի կյանքի արևշատության համար:

Հավարտ սուրբ պատարագի Մայր Տաճարում կատարվեց մաղթանք Ս. Էջմիածնի համար:



ՄԱՅԻՍ ԱՄՍԻՆ, Հոգևոր Ճեմարանի դահլիճում, միաբանության և ուսանողների համար, ԵՂայ ճարտարապետությունը» հետաքրքիր թեմայի շուրջ շորս դասախոսություն կարդաց ճարտարապետական գիտությունների թեկնածու և Մայր Աթոռի ճարտարապետական հանձնաժողովի անդամ դոցենտ Վարդադատ Հարությունյանը, Հարգելի դասախոսը մոգական լապտերով ցույց տվեց հայ ճարտարապետության նշանավոր հուշարձանների նկարները: Այս շատ հետաքրքիր և դիտական դասախոսությունների լավեցին հարաճուն հետաքրքրությամբ:

Վերատեսուչ սրբազանը իր զգացված շնորհակալությունը հայտնեց հարգելի դասախոսին՝ իր այնքան շահեկան դասախոսությունների շարքի համար:

Հայրենակարոտ ուխտավորներին: Ընդունելությունը տևեց մոտ մեկ ժամ: Հայ տուրիստները Վեհափառ Հայրապետին պատմեցին իրենց տպավորությունների մասին և հետաքրքրվեցին Մայր Աթոռի շինարարությանը և տպարանի վերաբացման վերաբերյալ հարցերով: Վերջում Վեհափառ Հայրապետը

պետը որհնեց բուրբին և մաղթեց, որ նրանց մեջ վառ մնա հայ հավատն ու սերը դեպի Ս. Էջմիածինն ու Հայրենիքը:



ՄԱՅԻՍԻ 9-ԻՆ, ՇԱՐԱԹ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց ՍՍՌՄ Շինարարության ակադեմիայի ակադեմիկոս Հյուսիսինովը: Հարգելի հյուրը դիտեց Մայր Տաճարը, ծանոթացավ նրա ճարտարապետական առանձնահատկություններին, նոր պեղումներին, որտեղ նրան բացատրություն էր տալիս ճարտարապետության թեկնածու Ալ. Սահինյանը, որը զլխավորում է նոր պեղումների աշխատանքները: Ակադեմիկոս Հյուսիսինովը լավագույն տպավորություններով մեկնեց Մայր Աթոռից:



ՄԱՅԻՍԻ 12-ԻՆ, ԵՐԵՎԱՆԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին հունգարական գրողներ Լասլո Նեմեշը (արձակագիր) և Կլարա Ֆեհերը (արձակագիր-գրամատուրգ): Նրանք եղան Մայր Տաճարում, եկեղեցահնազիտական թանգարանում և լավագույն տպավորություններով վերադարձան Երևան:




ՄԱՅԻՍԻ 23-ԻՆ, ՇԱՐԱԹ, Մայր Աթոռ ժամանեց Միավորված Արարական Ռեսպուբլիկայից (Սիրիական շրջան) և ԱՄՆ-ից Հայաստանում հյուր գտնվող քսան հայերից բաղկացած տուրիստական մի խումբ: Նրանք եղան Մայր Տաճարում, եկեղեցահնազիտական թանգարանում և Վեհարանում, որտեղ նրանց ընդունեց Վեհափառ Հայրապետը: Նրանց ցանկության ընդառաջելով, ցույց տրվեցին Մայր Աթոռի տպարանական և Ավագ հորանի մարմարապատման աշխատանքները:

Հյուրերը եղան նաև Հոգևոր Ընթացքում, ծանոթացան ուսանողական կյանքին, զրուցեցին ուսանողների հետ, վերատեսուչ սրբազանը նրանց տվեց Հոգևոր Ընթացքի կյանքի մասին անհրաժեշտ բացատրություններ:



ՄԱՅԻՍԻ 24-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին Սովետական Միության հետ բարեկամության Սենեգալի ընկերության նախագահ Աբդուլ Լաթիֆ Գեյներ և Քենիայի քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների Կահիրեի կոմիտեի քարտուղար Վիլյամ Օթելոն: Սև Աֆրիկայի հյուրերը Մայր Աթոռում դիտեցին Մայր Տաճարը, պեղումները, թանգարանը և Էջմիածնի տեսարժան այլ վայրերը:





ՎՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԵՍ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Մայիսի 22-ին, ուրբաթ օր, առավոտյան ժամը 12-ին, Հոգևոր Ծեմարանի հանդիսութանց սրահում տեղի ունեցավ հիշատակի հանդես՝ նվիրված անմահ Կոմիտաս վարդապետի ծննդյան 90-ամյակին:

Հանդեսին նախագահում էր Վեհափառ Հայրապետը, շրջապատված Գերագույն Հոգևոր և որհրդի անդամներով: Հանդիսութանց ներկա էին Մայր Աթոռի ամբողջ միաբանությունը, Հոգևոր Ծեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը, Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Մայր Աթոռի պաշտոնեությունը և այլ հրավիրյալներ:

Հնչում է Հայաստանի Պետական Հիմնը, որն ունկնդրվում է հոտնկայս, և որին հաջորդում է սորգ գարդարեցի՝ շարականի երգեցողությունը: Հանդեսի քացման խոսքն է ասում Հոգևոր Ծեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը, վերահենդանացնելով Կոմիտաս վարդապետի խնկարույր հիշատակը Հոգևոր Ծեմարանի նվիրական կամարների տակ, ուր նա ուսավ, մեծացավ, աշխատեց և ստեղծագործեց:

Ապա Հոգևոր Ծեմարանի դասախոսական կազմի անունից ողջույնի սրտագին խոսք է ասում պր. Գրիգոր Գյուլյանը:

Վեղարարվոր, առաքելատիպ այս վարդապետը, անկասկած, նույնքան մեծ է, որքան մեր առաջին Ուսուցիչը՝ «տարոնածին» Մեսրոպ հսկան:

Տասնհինգ դար հետո, պատմական այլ պայմաններում, Կոմիտասի կատարած գործը իր նշանակությամբ հավասար է Մեսրոպ Մաշտոցի հանճարիմաց սխրագործության:

Գիր և երգ— ո՞րն է ավելի բարձր. դժվար է որոշել: Երկուսն էլ հանդիսացան այն ու-

մենաընդարձակ հայելին, որի մեջ արտացոլվեց մեր ազգային ոգին՝ իր բյուրեղային պարզությամբ:

Եկավ առաքելատիպ վարդապետը, եկավ Կոմիտասը՝ հայ երգի արքան: Նա սուզվեց հայ ալեկոծ ծովի հատակը, փնտռեց, որունց, գտավ մեր ոգու գանձերը, իր մոգական մատներով փայլեցրեց արևի տակ, Կոմիտասը գտավ ու մեզ վերընծայեց մեր ոգին, մեր ոճը:

Կոմիտասը շրջեց գլուղից գլուղ, պառկեց կտուրների վրա, թաքնվեց ծառերի և տին՝ որսալու համար հայ երգի ամենավերջին հնչյուններն անգամ: Նա հավաքեց, գրի առավ հայ ժողովրդական երգերը: Այդ բալորը ձուլեց իր ստեղծագործական քուրայի մեջ, մաքրեց, զտեց, կոփեց, դեն շարստեց օտարն ու անհարազատը, և մերը մեղ վերընծայեց՝ մեր ոգու նմանությամբ:

Կոմիտաս վարդապետը, վեղարի մեջ շրջափակած իր սուրբի գլուխը, հոգում ու շրթներին գանձերը մեր ոգու, հաղթականորեն շրջեց եվրոպական մայրաքաղաքները, ապացուցեց, որ հայն ունի երգ ու երաժշտություն, որով բարի է, իրավունք ունի ապրելու և ստեղծագործելու:

Անկարելին է արվեստի հավիտենական կենսահյուսթը՝ պատմությամբ վավերականացված, սրբագործված փաստերի բյուրեղացումն ու իմաստավորումը: Ավելի քան երեք հազարամյա մեր ազգային անկրկնելի գոյության բյուրեղացած հոյակերտումն է Կոմիտասյան երգը: Կոմիտասյան երգի մեջ անդամաճան հավատարմությամբ անգորագարձվեց այն երկինքը, որ մեր հայրերը նվաճեցին իրենց արդար ու սուրբ վաստակով, մեր նահատակները՝ իրենց արյունով, մեր սուրբերը՝ իրենց հոգեբուխ, երկնազորդ աղոթքներով: Կոմիտասյան երգի

մեջ անդրադարձվեց մեր հարուստ բնաշխարհը՝ իր ծիրանավառ արշալույսներով, ցողաթարմ ծաղիկներով, իր լուսե լճերով, երկնահաս լեռներով: Կոմիտասյան հրգի մեջ անդրադարձվեց ըյապինդ հայ մանկային հերոսական աշխատանքն ու հոգու աղապատանքը, հարսնացող հայ աղջիկներին ամօթխած շիկնութունն ու հոգու դրնդուն միծաղը, լեռների առանձնության մեջ՝ արեհից շիկնած, հովերից սրսփացող հայրենի հաստարմատ ծիրանի ծառը, հայրենական արտերի վրա աղերգ արշալույս բացվող հայ սերմնացանի օրհնածիր ըուրը, աստար ուղիներում մուրրված հայ անտուն պանդուխտի սրտակեղծը, աղեգալար մորմառը՝ թաթախված սակայն արեալին լույսի մեջ, տխուր, բայց ոչ գետնաքարշ, միշտ վերասլաց, քաղցրորեն դաժան, եղերակա նորին գեղեցիկ: Եվ մենք ունեցանք մեր հրգերի մարգարտաշարը՝ «Կուժն առա երս սարք», «Փնսխն գովքը», «Էլուովա հորովելք», «Կայի երգ», «Ծիրանի ծառ», «Կուտնկ», «Անտունի»-ն և բազում այլ պոեմա-դործոցներ:

Կոմիտասի երամշտական հանճարի մեկ այլ երեսն է կազմում նրա անմահ «Պատարագը»: Միշտ և բոլոր դեպքերում մեր ժողովուրդը մի է և անբաժան, Մեր հոգևոր երգերը սնվել են այն նույն ակունքից, ինչ մեր ժողովրդի սիրտ, բնության և աշխատանքի երգերը: Մեր հոգևոր երգերի մեջ դարձյալ մեր բարի, տեսլապաշտ ժողովուրդն է, որ իր ապրելու իրավունքի մեջ խոցված՝ ի խորոց սրտի, երկինքն ի վեր, զեպի աստվածային բարձունքներն է ոլորում իր թախծոտ, բայց լուսակարկառ հոգին: Կոմիտասի մշակմամբ մեր հոգևոր երգերը մանավեցիկ կենդանության գետի ափին ծաղկած, աստվածային հովից օրորվող սպիտակ, մաքրամաքուր շուշանների: Կոմիտասի հոգևոր երգերի մեջ անդրադարձվեց քրիստոնեական սիրով սանձահար՝ մեր հեթանոս ոպու քարե ծաղիկը՝ եռահարկ մեծղի, երկնասլաց ապստամբ Զվարթնոցը, և աստվածային անանց երազին անձնատուր՝ մեր արվեստագետ հոգու հարսնացյալ գեղեցկուհին՝ ինքնամփոփ, շնորհազեղ, ազոթասաց Հոփիսիմեն, Կոմիտասի «Տէր, ողորմեա»-ն այն ամենաազգայինն է, որ երբեհից ստեղծված լինի մեր բազմադարյան մշակութի պատմության մեջ, Մեր ազգային ճակատագիրը ոչ մեկ ժամանակ այնքան ամբողջական չէ արտահայտված, որքան այս եղանկի ստեղծագործության մեջ. «Տուր աշխարհիս խաղաղութիւն, ազգիս Հայոց սէր, միութիւն. Տէ՛ր, ողորմեա, Տէ՛ր, ողորմեա, Տէ՛ր ողորմեա»: Իր ապրիլու իրավունքի

մեջ խոցված՝ սա մի ազնվական ժողովրդի հոգու ճիշն է, սրտի աղապատանքը, աղոթքն առ Աստված, որ լինի խաղաղություն, սեր և միություն:

Կոմիտասը, հայ երգի արքան, լուսե, երբ նորից շարացավ աշխարհը: Զարիքից զարհուրած՝ նա քինոտեցավ աշխարհի հեռ, քաշվեց իր հոգու մեջ, լուսե, լուսե, երբ ամայացավ Արեմտահայաստանը: Կոմիտասը լուսե աշխարհի առաջ՝ հավիտենապես երգելու համար գերեզմանված, բայց նորից հարություն առած իր ժողովրդի սրտի մեջ:

Եվ այսօր, վաղը, միշտ, երախտապարտ հայ ժողովուրդը, դարերի այս անխոնջ ուղեկիցը, իր անմահության շքերթում, ի նշանավորումն իր ազգային հանճարի, որպիս ընծա, հավիտենության զահակային կենդանացնի քաղցր ու նվիրական, առանց տիտղոսի, պարզ և անպաճույճ, բայց անհուն, մի սուրբ անուն՝ Կոմիտաս:

Ողջունի այս խոսքերից հետո գործադրության գրվեց զրական-գեղարվեստական մի ճոխ հայտագիր, ամբողջովին կազմված Կոմիտասյան երգերից և Կոմիտաս վարդապետին նվիրված քերթվածներից: Հոգևոր ճեմարանի երգախումբը հաջողությամբ կատարեց «Քաղհան», «Սարերի վրով զնաց», «Էս զիշեր լուսը տեսա» խմբերգերը: Գ դասարանի ուսանող նույաբ Պայլանը խոր ապրումով երգեց «Ա՛խ, մարայ ջան»-ը, բուռն ծափեր խլելով: Նույնպիսի հաջողությամբ երգեցին նաև A յարանի ուսանող բարեշնորհ Հակոբ սարկավազ Պողապայլանը՝ «Անտունի»-ն, նույն յարանի ուսանող բարեշնորհ Պետրոս սարկավազ Պերպերյանը՝ «Ծիրանի ծառ»-ը, Գ յարանի ուսանող բարեշնորհ Կարապետ սարկավազ Բենյամինը՝ «Կանչե՛, կո՛ւնկ, կանչե՛»-ն: Բարեշնորհ Հակոբ, Պետրոս, Հովհաննես սարկավազները և ուրարակիր խորեն Մեխանաշյանը փայլուն հաջողությամբ կատարեցին քառաձայն Կոմիտասյան պատարագի «Սուրբ, Սուրբ»-ը:

Հանդիսության ընթացքում, Կոմիտաս վարդապետին նվիրված սրտառուլ, գողտրիկ քերթվածների արտասանությամբ հանդես եկան Գ յարանի ուսանող Սանդրո սարկավազ Բեհհրությանը՝ «Գեպի կառափնարան» (Գ. Սարյանի), Գ դասարանի ուսանող Կարպիս Սերայտարյանը՝ «Կոմիտաս» (Ն. Զարյանի), նույն դասարանի ուսանող Արամուխի Սահակյանը՝ «Կոմիտասին» (Արր. Ալիբյանի), նույաբ Պայլանը՝ «Կոմիտասի համար», հատվածներ (Ե. Զարեցի), Գ. յարանի ուսանող բարեշնորհ Ժիրայր սարկավազ Ծերեճյանը՝ «Կոմիտաս վարդապետին» (Կ. Զարյանի):

Կոմիտաս վարդապետի խնկարույր հիշատակին նվիրված իր ինքնագիր գեղեցիկ բանաստեղծությունը կարդաց Հոգևոր Ընծարանի փոխ-տեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը:

Կոմիտաս վարդապետի կյանքի ու գործունեության և երաժշտական մեծարժեք վաստակի գնահատմանն էր նվիրված օրվա հանդիսության զխավոր բանախոս տիկին Մարգարիտ Բրուտյանի գիտական բովանդակալից գեկուցումը, որը լսվեց մեծ սիրով և հարաճուն հետաքրքրությամբ:

Հանդիսության ընթացքում նույնպիսի ոգևորությամբ և հուզմունքով հնչեց Կոմիտասյան պատարագի «Տէ՛ր, ողորմեա՜ն, օՓրիստոս պատարագեալս՝ը՝ Արմենակ Շահմուրադյանի կատարմամբ և Կոմիտաս վարդապետի դաշնամուրի ընկերակցությամբ (երգապնակ):

Կոմիտաս վարդապետի ծննդյան 90-ամյակին նվիրված ավելի քան երկու ժամ տևող այս շատ գեղեցիկ և բովանդակալից հիշատակի հանդեսի վերջավորության խոսք առավ Վեհափառ Հայրապետը՝ իր օրհնությունը բերելու անմահ Կոմիտաս վարդապետի՝ Մայր Աթոռի մեծանուն միաբանի՝ խընկելի հիշատակին:

«Նուզիչ է անշուշտ խոսիլ Կոմիտաս վարդապետի մասին այսօր, երգել ու լսել անօր երգերը: Ավելի հուզիչ է սակայն ոգեկոչել լուսաբնակ Կոմիտաս վարդապետի հիշատակը այս սուր բարկի տակ, Ա. էջմիածնի կամարներուն ներքև, ուր ան, ինչպես շատ գեղեցիկ կերպով ըսեր է Չարենցը՝ «հայրենացավ»: Մենք կավելցնենք նաև, որ Կոմիտաս վարդապետը հայու երգը նշմարտապես հայրենացուց:

Կոմիտաս վարդապետը Ա. էջմիածնի պարզև է հայ ժողովուրդին:

Անշուշտ ժամանակը շատ կարև է, Մեյ համար զոհե, որպեսզի ընթացք տանք Մեր հուզումներուն, մտքերուն և սպրումներուն՝ այս պահուն: Բայց կուզենք շեշտել մեկ հիմնական պարագա, երևույթ, որուն մեջ է ճանհարեզ վարդապետին մեծ արժեքը: Եվ առաջինը չենք Մենք անշուշտ, որ կխոսիմք այդ մասին:

Մենք Մեր խոսքը կուզենք մանավանդ մեր ուսանողներուն, որոնք նոր կսկսին ծանոթանալ մեր մեծ արժեքներուն: Կուզեինք պատկերավոր օրինակով մը բացատրել Մեր միտքը:

Չեզմե շատերը լսած են, թե հին եկեղեցիներու պատերուն երբեմն կհայտնաբերվին հին որմանկարներ, ավելի ուշ ժամանակներու նկարներու տակ: Կպարզվի, որ հետագա դարերուն եկեր են նոր վրձիններ, շատ անգամ միջակ, անհաշակ կամ անբարեխիղճ, որոնք կեղծեր են ու աղհատեր, նայելիս այլանդակներ հիմը, հարագատն ու գեղեցիկը: Այսօր խղճամիտ ձեռներ, գեղագետի շէ ու հոգի, հմտություն, հաշակ ունեցույ արվեստագետներ կուզան սրբելու, հանելու անհարագատը, տգեղը, որ կծածկեր նախկինի վավերական գեղեցկությունը: Եվ այսպիսով եկարք հիմա երևան կուզա իր բովանդակ ու հշմարիտ, անհարատ գեղեցկությամբ:

Մտավորապես այս աշխատանքը կատարեց եղբարախտ Կոմիտաս վարդապետը հայ երաժշտության նկատմամբ: Մեր ժողովուրդին արվեստը, մեր դժբախտ պատմության վերիվայրումներու հետևանքով, ենթարկվեցավ խաբարման: Ստարամուտ տարբեր, մակարույժներու պես, կպան մաքուր հայկականին, մեր ժողովուրդի կյանքին, հոգիին, զգայնության: Ատոր համար եղծվեցավ մանավանդ մեր երաժշտությունը, որ հիմնական նյութական կովան շուներ հետագա դարերուն փոխանցվելու համար, ինչպես ունեին զրականությունը, հարտաբանությունը, եկարչությունը, այլ կպանպանվեր միայն բանավոր ավանդություններով ժողովուրդի բերնին մեջ, կամ դպիրներու և տիրացուներու միջոցով:

Կոմիտաս վարդապետ գիտցավ տեսնել այդ երգերու խորքը, թափանցել այդ երգերու տարբերուն և երևան հանել անոնց մեջ առկա հայ հոգիին հշմարիտ լույսը, հայուն բյուրեղ երաժշտությունը:

Դժբախտություն է, սակայն, որ այստեղ թե արտասանմանի մեջ, միջոց է, որ հավատարիմ կմեանք Կոմիտաս վարդապետի ոգիին և ժառանգության: Ոմանք կուզան սրբագրել, կամ վերամշակել կամ մեկնել անոր ստեղծագործությունները: Այդ տեսակ մը սրբապղծություն է: Մեր պարտքն է հիշեցնել, որ Կոմիտաս վարդապետի երաժշտությունը անաղաբտ պետք է պահել և հարագատ շունչով երգել: Ձանառիկ ըլլալու

աստիճան պետք է պահպանվի Կոմիտասյան շունչն ու ոգին: Այս պահուս կհիշեն Կոմիտաս վարդապետի մասին ըսված նշանավոր խոսք մը, որ ուղեցույց պետք է ըլլա բոլորիս. «Մեկ ձայնանիշի համար Կոմիտաս վարդապետը պատրաստ էր արշունք քափելու»:

Ուրախալի է, որ Հոգևոր Ճեմարանի հարկեն ներս կհնչի Կոմիտասի երգը: Մենք կուզենք, որ այս ավանդությունը սրբությամբ պահպանվեր այս հարկին տակ և ավելի հեշտ Կոմիտասյան երգը:

Մենք ուրախ ենք, որ այսօր այնքան առատ և ուժեղ հոսեցավ Կոմիտաս վարդապետի երգը: Մենք գոհունակությամբ ներկա եղանք Հոգևոր Ճեմարանի վերատեսչության ղեկավարությամբ և ուսանողության ուժերով կազմակերպված այս գեղեցիկ և ոգեշնչող


հանդեսին և մեծ հետաճիւղությամբ լսեցինք մանավանդ հարգելի տիկին Մարգարիտ Թրուտյանի հմուտ բանախոսությունը հայ Լեզի մեծ վարպետի մասին:

Կոմիտաս վարդապետը մարմնապես մեր մեջը չէ, բայց ան կապրի իր Լեզով մեր մեջ, հայ ժողովուրդի հոգիին մեջ հափիտյան: Փա՛ռք իր հիշատակին, փա՛ռք իր գործին և փա՛ռք իր մեծ ժառանգությանը:

Կոմիտաս վարդապետի ծննդյան 90-ամյակին նվիրված գրական գեղարվեստական այս հանելի և ոգեշունչ հանդիսությունը վերջացավ Կոմիտասյան «Հայր մեր»-ի կատարումով:

Կոմիտաս վարդապետի պայծառ անունն ու խնկելի հիշատակը միշտ վառ կմնան Հոգևոր Ճեմարանի նվիրական կամարների տակ:





ՓԱՅԼԱԿ ԾԻԱԾԱՆ
(ՄԵՆՄՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ)

Ո՞Վ ԳԻՏԵՐ ՍՆԿՍՑՆ...

Կոմիտաս վարդապետի խնկարույր ճիշատակին


Գիտեին մարդիկ թե՛ շար, թե՛ բարի,
Ռուբեն անխտիր գիտեին հաստատ,
Որ հայր մանվան եղել էր գերի.
Հուր ու ավեր էր տեսել անընդհատ:
Եվ ո՞ւմ չէր հայտնի, որ մեր նաիրյան,
Մեր հագարամյա երկիրը շքնաղ,
Մուգ ձով էր դարձել հարազատ արյան,
Մի տրտում շուկա դարձել էր, ավա՞ղ,
Որ ոսոխները և՛ նենգ, և՛ նկուն,
Վաճառի էին զրել ամեն ինչ,
Մեր վաստակն արդար ու գանձերն անհուն...
Սակայն ո՞վ գիտեր, գիտեի՞ն միթե,
Որ մեր էլ սրտում հույզեր են կիզվել,
Մենք էլ ենք պարել տեսիլում ոսկե,
Մեր հոգու մեջ էլ երգեր են կիտվել,
Եվ մեր երկնաճաս վես յեռներն ի վեր,
Նետել ենք նրանց թավաճեք շռայլ.
Որ այնտեղից էլ դեպ երկինք՝ քենն,
Հասնեն մեր իրերի պայծառ աստղերին,
Գեթ այնտեղ հայի խոսքը շոնդա,
Քեկուզ լոկ այնտեղ, Աստծուն մտիկ,
Վեճորեն հենչի մեր համերգն ընծա...
Մեր արյունն առին, ու մեր կյանքը ողջ
Մեռելաբաղի հանդես սարքեցին.
Բայց ձեռք գարծյալ ոգին մեր բողբոջ,
Գարծյալ մեր կարմիր երգն հյուսեցինք...
Շինաբառ ու խոյ պայքարի անցանք,
Անհագ տաշեցինք՝ տուֆ և որձաբար,
Որ վեր խոյանան վանք ու դպրեվանք,
Կամուրջներ թռչել խենթ գետերն ի վար,
Որ մեր սուրբ հողը խաչվար ունենա,
Քեղերն անառիկ միշտ կանգուն մնան
Ու մեր փառն աննաս անցնի քարից քար...
Եվ ապա որդան մեր արյան գույնով,
Գրչները մեր ծառավ ու ետքի,
Մագաղաթներ են ծաղկել անհամար,


Որ մեր հույզերն են շնչել հոգեթույլ
Ու մեր միտքն է միշտ հառազել պայծառ:
Բայց մարդիկ միթե՞, միթե՞ գիտեին,
Որ մեր հրկիզված հողի ընդերքից,
Լույս արգասիքներ են բխել առատ,
Որ մեր մայրերի հյուսված արգանդից
Բազում հանճարներ են ծնվել անհաղթ,
Պեղել ենք անխոնջ երկրե՛ք և երկիր,
Մեր բազուկները մեկնել արևին,
Որ լույսը առատ հոսի մեր վրա,
Որ խավարն երբեք մեզ չտիրանա...
Գիտեի՞ն արդյոք, որ մեր երկնի տակ,
Մեր կապո՞ւյտ, կապո՞ւյտ երկնքի ներևո
Հրաշք երկունքում աշխարհ են եկել
Գիր ու դպրության արհամարհ հգոր,—
Մեսրոպը հսկա, Սահակը Պարթևի,
Ու միշտ ճենճերող մեր նախնիացին,
Մեր անցյալ փառքի հրաշքը վսեմ,—
Աշխարհ են եկել մեր սուրբ քարերի,
Մեր հաղթ մուրհերի մշակներն անգին,—
Տրդատն հանճարեղ, Մանվելը խոճուն,
Ու դեռ վարպետներ անթիվ, անաճուն:
Բյուր մագաղաթյա քերթերի վրա,
Գույն ու գծերի հրաշք են ծաղկել,
Ասես մեր աշխարհն են հոգեհմա
Գարեբի համար դրոշմել այնտեղ
Սարգիս Պիծակն ու Ռուսիներ Թորոս
Ու մյուս անհամար գրիչները մեր:
Ու թեև դարձյալ տեսանք արճապիրտ,
Արնասպառ ընկանք քարի տակ մանվան,
Թվաց, թե արդեն ամեն ինչ կորցրինք,
Ամեն ինչ արդեն արիւն փարուճանդ,
Բայց նոր ու նորից, նոր կյանքի ճեճով,
Արյունը խայտաց մեր երակներում,
Վառվեցինք դարձյալ ապրելու տենչով,
Խուսեղեն փառքով լույս աշխարհ բերինք

Միտ խնջույից արքեցած մարդիկ՝
 Լահապետ Քուշակն ու Սայաթ-Նովան,
 Ազգի թեմ սիրով այրված ու խանձված
 Հավերժ անշիրիմ Արոյվանը մե...
 Կրճուտ հույզերի բոր բոցերի մեջ
 Տրտում մխացող Դուրյանը անշեջ,
 Վայրագ եղեռնին նահատակ դարձած
 Վագրենամուսնչ սեզ Սիամանթոն
 Եվ խռոխտածայն Վարուժանը վես,
 Ու դեռ Լանինե ր, որոնք մեր սիրույն,
 Հանուն մեր անվան ու խղճմտանքին
 Դիմակալեցին մահն անագորույն,
 Բայց և երկնեցին մեր հոգու, մտի,
 Ու մեր դպրության փառքը վիթխարի...
 Եվ ապա տրտում, անձայն, անշշուկ,
 Դայուկը հակտին, վտիտ ու հյուժված,
 Մեր հողի կրճիկն ուտ դրեց հանկարծ
 Մի մանուկ տղա, մի որբ պատանի,
 Հայացքը տարտամ արձակած հեռուն,
 Միշտ խռովանույց ու միշտ էլ խոճուն...
 Կռճիտասն էր նա. տիրակալն անհաղթ
 Աշխարհին անհուն հայոց երգերի,
 Ջայն ու շեշտերի կախարդը հսկա,
 Մեր խոր վերհերի սուրբ սպեղանին,
 Մեր դարիք հոգու կանչը կարտտի,
 Մեր «ձյունոտ գարնան» թախժոտ մեղեդին,
 Մեր ֆեֆուջ սրտի նազը ընտանի,
 Մեր «Միրան Մառ»-ն ու «Մոկաց Միրզեն»,
 Ու «Տէր ոգորմեա»-ն մեր պատարագի,
 Ուտ դրեց անձայն սրտին մեր հողի
 Ու մեր հիաստանչ համերգը երկնեց...
 Բայց ավա՜ղ, եղավ մեր հակառակորդ
 Ու սեւ եղեռնի նահատակը խեղճ:
 Եվ այնուհետև դարձյալ որբ ու կռճ,
 Դարձյալ ջարդ, թալան ու մանահանդես,
 Ցիրուցան եղած անթրջ մեռելներ...
 Մահից հողուպրած որբեր անհամար,
 Եվ երկարածի՛ց ախորի համբա...
 Դարձյալ մահվան սև մագիլն է անհ
 Ի բունոտ նանկը խեղճ հեզհորեն
 Մեր ժողովրդի սրտում կարեվիր...
 ...Բայց հին հրաշքը գործում է կրկին,
 Կյանքը մեզ ընդմիշտ չի նահատակում,
 Շարունակվում է երկունքը մեր հին,
 Մեր ստեղծագործ երկունքն անհատնում:
 Քեւ մշտապես մնաց կիսավեր
 Տրտում երկիրը մեր կոտորակված,
 Բայց հայու հոգին եղավ անհերե
 Եվ դեմքը հայու անաղարտ մնաց:
 Դարձյալ հուրհրազ կայծր մեր մտքի,
 Դեր ու արվեստի մշակներ եկան,
 Եկան ու իրենց Լանկարը բերին
 Որ ոգու գանձը մեր նվիրական
 Հավերժ ուտնեա ու հառազայթի...:
 Ո՛վ գիտեր սակայն, միթե՞ գիտեին,
 Գուշակել անգամ կհանդգնե՞ին,

Որ մերկաձուփ փոթուկից հետո,
 Պիտի գար մեծ օ՛րք հերոսածին
 Մեր դայուկ հակտի սև գիրը չնշել,
 Չունենար այլևս կյանքը մեր նորոգ
 Մղձավանջով յի և ոչ մի գիշեր:
 Է՛լ չէր խամբելու ծաղիկը վառման
 Դարերով հյուսված մեր երազների,
 Չէր խափանվելու մեր երթն հաղթական
 Վե՞ն բարձունքն ի վեր մեր հուր տենչերի:
 Ու տիտանական թափով վերստին,
 Պիտի նորոգվեւ ուժը մեր բազկի,
 Մեր շենքերն հսկա երկինք թևեին,
 Մխնեկույզների ծուխը պիտ մխար,
 Մեր մագոզների նեխը շեղեզներ
 Ու մեր գալիքի ուղին անդադար
 Արևի լույսի հեղեղով օձվեր...:
 Ու դեռ ո՛վ գիտեր, թե պիտի մի օր
 Ունենայինք պերն նեխանք մեր,
 Մեր հեֆիաթների հրաշք զիցունհին,
 Լույսը մեր այժի, հույսը դարավոր,
 Ու մեր հանճարի մանյակը անգրին,
 Որի լուսարձակ շողերի ներսո,
 Գիմացն Արարատ ձյունափառ լեռան,
 Ջահի պես շողար Չարենցը հզոր,
 Պոետը հսկա երկրին նախրյան...:
 Եվ ապա խոճուն, ծանրանիստ, կայտառ,
 Մեր գիտունների փառանգն ուտնեա:
 Հագիվ թե անցներ ինչ-որ ակերտը
 Ու մեր երկիրը հառսի պես գուզվեր,
 Ու մեր երբեմնի ապառաճներն իսկ
 Այսօր գմրուխտյա շուրջառ հագնեին:
 Ուրախ քրեխով կապույտ Աւանից,
 Հրազդանը լույս բաշխեւ բոլորին,
 Տուն վերադարձի կարկաչը հնչեւ
 Քոյր տարագիր հայուդիներին:
 Եվ մենք մահեն Կանգնած անհեր
 Մեր Արագածի բարձրադիր գահին,
 Լուսավորչի վառ կանթեղի ներսո,
 Հպարտ զենեթեթ տիեզերքն անհուն,
 Կարդայինք շննաղ մեր գիշերների
 Ու մեր աստղերի խոհուրդը խորին:
 Խիեղը հրկիզվեւ մեր աչքերի մեջ,
 Մեր երազների առագաստն ուղչեւ,
 Մեր տեսիլների հուր բոցկտար
 Ու ազա՛տ, ազա՛տ մեր երգը հնչեւ,
 Խանդավառ գուզը մեր նոր օրերի,
 Մեր գալիք կյանքի նախերգանքը վե՞ն...
Ու տե՛ս, ի՛նչ պայծառ վառվում է
հեռվում

Ի՛նչ վառ շողում է ջինջ հորիզոնում
 Լուսեղեն փառքը պայծառ գալիքի
 Մեր արևաբույր
 Մեր լուսապարտ
 նախրյան երկրի...
Եւ այս բոլորը
 Ո՛վ գիտեր սակայն:





ՄԱՐԳԱՐԻՑ ԲՐՈՒՏԵԱՆ

(Նրևանի կոմիտեոյի անվան
երաժշտական դասառու)

ԵՐԳԱՅԱՆ ԿՈՄԻՏԵԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ*

Կոմիտաս վարդապետը հայ ազգային պրոֆեսիոնալ երաժշտական դպրոցի հիմնադիրն է: Նա նախասովետական շրջանի այն կարկառուն դեմքն է, որն իր տաղանդի ուժով կարողացավ ոչ միայն ընդհանրացնել հայրենի երաժշտական մշակույթի նախորդ ձեռքբերումները, այլև նրա հետագա զարգացման ուղիները: Կոմիտասը ժԹ դարի վերջին քառորդի և ի դարի սկզբի մեծագույն կոմպոզիտորն ու մտածողն է, ժողովրդական երաժշտության գոհարների հավաքողը, մշակողն ու կատարողը, այն ստեղծագործական կատարյալ ու պայծառ անհատականությունը, որի ավանդները ծառանգեց կոմպոզիտորների ու երաժիշտ-տեսարանների, կատարողների ու ազգագրագետների հաջորդող սերունդների մի փայլուն կաճա՝ Արմեն Տիգրանյան, Գրիգոր Սյունի, Ռոմանոս Մելիքյան, Ալեքսանդր Մպենդիրյան, Արամ Խաչատրյան և այլք:

Կոմիտասը մի ամբողջ կոնսերվատորիա է, ինչպես բնորոշում են նրան իր ժամանակակիցները, որը պրոֆեսիոնալ բարձր հիմքերի վրա դրեց իրապաշտական ուղղության հայ ազգային երաժշտական արվեստը:

Կոմիտասի բազմաբովանդակ գործունեությունն սկիզբը համընկավ անցյալ դարի վերջին քառորդի հետ: Այդ շրջանը հայ ժողո-

վրդի պատմության մեջ բնորոշվում է որպես քաղաքական ու մշակութային կյանքի տեղաշարժերի մի շրջան: Պետք է ասել, որ ընդհանրապես շատ երկրներում ժԹ դարն ամբողջությամբ ընթանում էր հասարակական ազգային շարժման, ազգային ինքնագիտակցման նշանաբանի տակ: Այդ նշանաբանը գործնականում արտահայտվեց մեկ կողմից ազգային երաժշտական դպրոցների հիմնադրմամբ ու վառ անհատականության գծեր ձեռք բերելով (գերմանականը՝ հանձին վերերի, լեհականը՝ Շոպենի, սկանդինավականը՝ Գրիգի, ռուսականը՝ Փլինկայի, հայկականը՝ Կոմիտասի և այլն), իսկ մյուս կողմից՝ ժողովրդական-դեմոկրատական, պատմականորեն առաջավոր միտումների խիստ աշխուժացմամբ:

Ահա ինչու պատահական չէ, որ Կոմիտասը՝ իր ժամանակի առաջագեծ արվեստագետը, հանդես եկավ որպես ընդգծված հայրենասեր, որպես հայ աշխատավոր ժողովրդի և հատկապես գյուղացիության գաղափարների ու համոզմունքների արտահայտիչ (դրան անկապած օժանդակեց նաև նրա ժողովրդական ցածր խավի ծնունդ լինելը):

Կոմիտասի ժողովրդա-դեմոկրատական գաղափարախոսությունն իր ամբողջությամբ ընկավ նրա գեղագիտական հայացքների հիմքում, որոնց կենտրոնական դրույթը խտացված է հենց նրա այն արտահայտության մեջ, թե՛ ԲՈՒՏԵԱՆ է ամենամեծ

* Գասախոսություն կարգացված շոգեր ժամառանում, Կոմիտասի ծննդյան 90-ամյակին նվիրված Հանդիսության առթիվ:

ստեղծագործողը, զնացե՛ք և սովորեցե՛ք նրանից»:

Ժողովուրդը կոմիտասի համար կյանքն առաջ տանող կենսունակ ուժ է, իր կենցա-

Արվեստի և գրականության դարազույս կազմող բոլոր հանճարները, բոլոր ժամանակներում ժողովրդական ստեղծագործությանը մոտեցել են միայն այս ճիշտ տեսան-



Կ Ո Մ Ի Ց Ա Ս

ղով ու կյանքով, արվեստով՝ յուրօրինակ ու ինքնատիպ, և այդ պատճառով էլ այն պարարտ հողը, որից պետք է սնվի իրապատական ուղղության արվեստի ամեն մի ճյուղ, լինի դա գրականություն թե երաժշտություն, նկարչություն թե ճարտարապետություն:

կյունով, Այստեղ կարելի է բերել այդ առթիվ բազմաթիվ արտահայտություններ, սակայն բավարարվենք թեկուզ հետևյալով. «ես համոզվեցի, որ այն երկրներում, որոնք հատկապես հարուստ են ժողովրդական երգերով, բնականաբար զարգանում է մեծագույն երաժշտություն», — դրում է ռուսա-

կան երաժշտութիւնի մեծագույն երգահան Սեդրէյ Ռախմանինովը:

Կոմիտասի համար ժողովրդական ստեղծագործութիւնը նույնպէս անսպառ ներշնչանքի աղբյուր է, սակայն նա ոչ միայն հենվում է այդ ստեղծագործութիւն վրա, այլ մերվում նրա հետ և այնպիսի օրգանական կապով, որ, ինչպէս ընդունված է ասել, գծվար է սահմանագծել, թե ո՞րտեղ է ավարտվում ժողովրդական երաժշտութիւնը և ո՞րտեղ սկսվում կոմիտասի սեփական ստեղծագործութիւնը:

Այն հարցին, թե ի՞նչ է ազգային երաժշտութիւնը, ի՞նչ է նյութ տալիս ազգային ժողովրդական երգերին, կոմիտասը պատասխանում է այսպէս. «Նրա հպարտ լեռները, խոր ձորերը, դաշտերը, բազմազան կլիման, պատմական հազար ու մի դեպքերն ու անցքերը, ժողովրդի ներքին ու արտաքին կյանքը, մի խոսքով այն ամենը, ինչ ազդում է այդ ազգի զգայարաններին ու մտքի վրա: Անկասկած, այս դրուժն առաջ քաշելիս կոմիտասն ի նկատի ունի ինչպէս ամեն մի ազգ և ազգային երաժշտութիւնը ընդհանրապէս, այնպէս էլ՝ իր ազգն ու նրա ազգային երաժշտութիւնը, երաժշտութիւն, որի զարգացման ու առաջընթացին նվիրեց հայրենասիր կոմիտասն իր գիտակցական ողջ կյանքը, որի տարած հաղթանակն ու փառքը սփռվում էին նրա շարքաշ կյանքից տանջված հոգին, որի ախորժալուր հնչումները հանգստացնում էին նրա մշտալեկոծ ներաշխարհը:

Եվ գտնվեցին մարդիկ, որոնք ժխտեցին հայ երաժշտութիւնի գոյութիւնը, կոմիտասի խոտվահույզ վիճակի աստիճանը կարելի է պատկերացնել թեկուզ այն համառ և հետեւողական պայքարից, որ նա մղեց իր տեսականում ու գործնականով: Ընդ որում այդ պայքարում նա շատ անողոր էր: Զխնայեց անգամ իր ուսուցիչ Մակար Եկմայանին, որը գտնում էր, թե հայ երաժշտութիւնը իրանա-արարական երաժշտութիւն մի մասն է: Հայ ազգային երաժշտութիւն ինքնուրույնութիւնը ժխտող հեղինակներին քիչ թիւրյաքայն էլ գտնում էր, որ հայ երաժշտութիւնը ընդհանրապէս գոյութիւն չունի, իսկ այն, ինչ որ կա, առաջացել է ասորա-բյուզանդական և հնդկա-պարսկական ազդեցութիւն տակ:

Եվ եթե կոմիտասը եվրոպական երաժշտութիւնի որոշ գիտնականների կողմից արտահայտված նման կարծիքները վերագրում էր նրանց հայ և ընդհանրապէս փոքր ազգերի երաժշտութիւն անտեղյակութիւն, ապա ի՞նչ ասենք Եկմայանի կամ հետագայում Սպիրիդոն Մելիքյանի մասին, որոնցից ըստ վերջինի՝ մեր

երաժշտութիւնի ողջ տեսութիւնը, հետեւաբար և երաժշտութիւնը, ընդօրինակված են հույնեոնից: Բարեբախտաբար կոմիտասը Ս. Մելիքյանի այս ոչ գիտական, հակահայրենասիրական հայացքների մասին ոչինչ չի մտցավ: Դա նրա համար կլինէր սարսափելի հարված, որովհետև կոմիտասը առանձնապէս էր հոգ տանում իր աշակերտ Սպիրիդոնի կրթութիւնը ճիշտ ընթացքի մասին: Հայտնի է, որ 1904 թվականին, երբ Մելիքյանը մեկնում է Գերմանիա սովորելու, կոմիտասը վախենալով, որ նա կընկնի գերմանական երաժշտութիւնի ազդեցութիւն տակ, արտագրել է տալիս նրան հայկական ժողովրդական երգերի իր մի ժողովածուն, Դա այն ժողովածուն էր, որն այսօր մնում է հայ երաժշտական ժողովրդական ստեղծագործութիւն բնագավառում որպէս չգերազանցված իր բարձր գեղարվեստականութիւնը, և որն այդ արտագրութիւն շնորհիվ փրկվեց կորստից:

Կոմիտասը Եկմայանին պատասխանում է. «Երգեցողութիւնը սուրբ պատարագիւ հողվածում, ուր ցույց տալով ներդաշնակման սկզբունքներում հեղինակի թույլ տված սխալները, միաժամանակ գիտականորեն հիմնավորում է իր քննադատութիւնը, իսկ քիչ թիւրյաքայնի նա պատասխանում է աշայն ունի ինքնուրույն երաժշտութիւն խորագիրը կրող հատուկ հողվածով: Այստեղ վրդովված կոմիտասը բացականչում է. «Ե՛հ, հայ ժողովուրդ, ազգ ես և ինքնուրույն այնքան, որքան մյուսները, այդ ոչ ոք կարող է հերքել: Ունիս հատուկ լեզու, կխոսիս: Ունիս հատուկ ուղեղ, կդատես: Ունիս հատուկ մարդաբանական կազմ, որով կգատվիս այլ ազգերին ու անոնց կազմին: Սակայն սիրտդ, որ զգացմանդ աղբյուրն է, քուկդ է՛ կղեր. այլ, մի ինչ-որ ասորա-բյուզանդական և հնդկա-պարսկական է եղեր:»

Այս հողվածում, հայի ինքնուրույն երաժշտութիւն ունենալու դրուժը գիտականորեն ապացուցելու համար, կոմիտասը դիմում է արեւմտյան ազգերի զարգացման պատմութիւնը և եզրակացնում. «Ամբողջ արեւմտյան ազգերը զարգացան՝ սնունդ առնելով հին հունական քաղաքակրթութիւնի րեկտրներին՝ լատինականի միջոցով, բայց և այնպէս յուրաքանչյուր ազգ ունի ուրույն երաժշտութիւն, որ ոչ հույն է և ոչ վլ լատինա: Ապա նույն տեղում շարունակում է. «Ճիշտ նույն ճանապարհն են անցել մեր Ե դարի սրբազան վերանորոգիչները: Անոնք կրթվեցան Աթենք և Ալեքսանդրիա՝ այդ ժամանակների լատինականութիւնից կենտրոններում, որպէս մենք այժմ Եվրոպայում, ապա Հայրենիք վերադառնալով կերտեցին ու վերականգնեցին, ըստ օրինակի հույն և ասորի

լեզուներին՝ մեր գրաբարը և մեզ ավանդեցին ոսկեդարու մատենագրութիւնը: Եթե ճշմարտութիւն են այս բոլորը, ապա ուրեմն ճշմարտութիւն է և այն, որ մեզ տվին և երաժշտութիւն, որ այնքան հարազատ է ու աղփային և այնքան ինքնուրույն է ու ինքնատիպ, որքան իր լեզուն ու գրականութիւնը, որովհետև յուրաքանչյուր ազգի երաժշտութիւնն իր ազգի հնչնական ելեէջներին կծնի ու կծափայի: Հայ լեզուն ունի իր հատուկ հնչնավորութիւնը, ուրեմն և համապատասխանող երաժշտութիւնը»:

Կոմիտասն ընդունում է զանազան ազգերի, հետևաբար և երաժշտական մշակութիւնների կայի ու փոխադարձ ազդեցութեան գոյութիւնը իրենց ծագման ու զարգացման տարբեր շրջաններում, բացատրելով այն նրանց կյանքի պայմանների ընդհանրութիւնը, այսինքն չի հեռանում պատմականութիւնից, որով և հետևէ մնում ազգային արվեստների անհատականութեան ու ինքնուրույնութեան ժխտման արատավոր տեսութիւնից: Սա անկասկած Կոմիտասի զեղազիտական հայացքների արժեքավոր գծերից է:

Կոմիտասը հայ ազգային երաժշտութիւնը ընկալում էր ոչ իբրև միատարր, միաձուլ մերժշտութիւն, այլ այնպես, ինչպես նա միշտ եղել է, այսինքն բաղկացած տարբեր ճյուղերից—գեղջկական երաժշտութիւն, գուսանական-աշուղական արվեստ, հոգևոր երաժշտութիւն, քաղաքային ֆոլկլոր: Դրանցից ամեն մեկը, որպես տարբեր հասարակական խավերի զաղափարների ու ձգտումների զեղարվեստական արտացոլում, ունի իր ոճային առանձնահատկութիւնները: Կոմիտասն էլ դրանցից յուրաքանչյուրի նկատմամբ ունի իր ստեղծագործական տարբեր մոտեցումը: Ըստ նրա, ազգային տեսակետից ամենաինքնատիպն ու անադարտը գեղջկական երգն է, որը և նա ընդունում է որպես հիմք իր ողջ քաղմարնագավառ գործունեութեան համար:

Ազգային տեսակետից մյուս վառ արտահայտված ճյուղը Կոմիտասը համարում էր հոգևոր երաժշտութիւնը: Ըստ նրա, հոգևոր և ժողովրդական երգերը երկու քույրեր են, նա բազմիցս զբաղվել է եկեղեցական երաժշտութեան տեսական հարցերով, կատարել այդ երգերը զանազան դասախոսութիւններին, ինչպես նաև եկեղեցական ժամասացութիւնների, արարողութիւնների ժամանակ, սակայն ոչ որպես միայն հոգևորական, որը Գևորգյան Ճեմարանի սանից հասել էր մինչև վարդապետի աստիճանին, Անկախ այդ հանգամանքից, Կոմիտասը զեղարվեստական բարձր արժանիքներ էր վերագրում հայ հոգևոր երաժշտութեանը, ինչ-

պես նաև անվիճելի պատմական մեծ նշանակութիւն, որի պատճառով հոգևոր երգերը մտնում էր անգամ իր համերգային-կատարողական ծրագրերի մեջ:

Գուսանա-աշուղական արվեստի նկատմամբ Կոմիտասը անտարբեր էր: Դրա պատճառը թերևս այն բանում էր, որ ժողովրդապրոֆեսիոնալ այդ արվեստը ոճի և լեզվի տեսակետից լուրջորէն այն մարտութիւնը, ինչ գեղջկականը, որ օտար տարբեր նրանցում ազգայինի հետ միշտ չէ, որ օրգանապես մերվում էին, որ այստեղ ընդօրինակվում էին արաբական ու պարսկական աշուղական արվեստի տաղալափական ձևերն ու կանոնները, քացակալում գեղջկական երգերի ստեղծման ու կատարման ինքնարույն բնույթը, հորինվում համերգային կատարման, կամ այս ու այն հասարակական վայրերում հավաքված բազմութեանը զվարճացնելու համար և այլն:

Ազգային երաժշտութեան լեզվական ինքնատիպութիւնից զուրկ երգեր էր համարում Կոմիտասը նաև հայկական քաղաքային ֆոլկլորի երգերը, շունենայով առարկութիւն նրանց զաղափարական նկատմամբ: Այս անվան տակ նա նկատի ունի ազգային-հայրենասիրական երգերը («Բամ, փորոտան», «Հերիք որդյակ», «Շայ ապրիլ», «Շայ մեռնինք» և այլն), որոնցում զգացվում են հակումներ դեպի եվրոպական երաժշտութեան ոճային որոշակի առանձնահատկութիւններ:

Գնայի գուսանա-աշուղական և դեպի քաղաքային երգերն ունեցած իր անտարբերութեամբ հանդերձ, անհրաժեշտ եղած դեպքում Կոմիտասը ձայնագրել է այդ ճյուղերից թմ՝ մեկի, և թե՛ մյուսի նմուշները՝ «Առտ», «Միծեռնակ», Շիրինի «Ալլոբայան», ի՞նչ ես անում», Ջիվանու «Ախ կորափ», Ֆիզայի «Վարդ կոշիկ», Շերամի «Ալ ու ալվան ես հազել» և այլն: Կոմիտասի արխիվում կան նույնիսկ նրա Անուշ օպերայից երկու հատված, որոնցում օգտագործված են գուսանական-ժողովրդական երգեր: Դրանցից մեկը Սարոյի և Մոսիի կոխի տեսարանում օգտագործված Շիրինի «Ակնարկյա» երգն է, մյուսը լորրորդ գործողութեան մեջ Անուշի «Ախ, էն կանաչ» երգում օգտագործված Ջիվանու «Քո փափագով» երգը:

Ազգային երաժշտութիւնը կազմող ճյուղերի նկատմամբ Կոմիտասի ունեցած տարբեր վերաբերմունքը իր համապատասխան արտահայտութիւնն է գտել նաև նրա տեսական աշխատութիւններում: Ազգային և գուսանա-աշուղական արվեստի մասին Կոմիտասի մոտ գտնում ենք հատ ու կենտ կցկտուր արտահայտութիւններ, դրա փո-

խառնն գեղջկական և հոգևոր երաժշտությունների մասին՝ բազմաթիվ հատուկ ուսումնասիրություններ, հոգվածներ, զանա-սումնասիրություններ, որոնք հայ երա-ջան դասախոսություններ, որոնք հայ երա-ջարային նշանակութուն: Այդ աշխատու-թյունների հիման վրա զարգացավ հայ և մասնավորապես սովետահայ երաժշտագի-տական տեսական միտքը, որը մեր օրերում ապրում է իր ծաղկման շրջանը: Հիմնակա-նում Կոմիտասը իր տեսական աշխատու-թյուններով գիտական դիրքերից դարձյալ պայքարում է ահայն ինքնուրույն երաժշ-տություն շունչ առնելու տեսության դեմ:

Հոգևոր երաժշտության պատմության ու տեսության հարցերով Կոմիտասը շատ է զբաղվել: Այդ հարցերին են նվիրված նրա «Հայոց եկեղեցական երաժշտությունը» և «Հայոց եկեղեցական երաժշ-տությունը» (լույս է տեսել 1894 թվականին), «Հայոց եկեղեցական երաժշ-տությունը» (հրատարակված 1897 թվականին), «Եր-գեցողությունը սուրբ պատարագի հոգվածը» (հրատարակված 1898 թվականին), «Հայ եկեղեցական երաժշտություն» ուսումնասի-րությունը (հրատարակված 1898 թվականին գերմանական հանդեսներից մեկում), «Շա-րահանի խազերի նշանակութունը» հոգվածը (հրատարակված 1914 թվականին Կոստանդ-նուպոլսում, «Տաճար» հանդեսում):

Հայ գեղջկական երաժշտության պատմու-թյան ու տեսության հարցերով Կոմիտասը զբաղվել է իր ամբողջ կյանքի ընթացքում: Այդ քննադատական են նվիրված նրա աշխա-տություններից «Հայ ժողովրդական և եկեղե-ցական երգեր» դասախոսություն-հոգվածը (հրատարակված 1905 թվականին «Մշակա-նում»), «Հայ գեղջուկ երաժշտություն» աշխա-տությունը (հրատարակված 1907 թվակա-նին «Անահիտ»-ում, Փարիզում և նույն թվա-կանին Ֆրանսիական հանդեսներից մեկում), «Հայն ունի ինքնուրույն երաժշտություն» հոգվածը (հրատարակված 1913 թվականին Կոստանդնուպոլսում, «Ազատամարտ»-ում), «Լոռու գուլիաները՝ Վարդաբլուր գյուղի ոճով» ուսումնասիրությունը (հրատարակված 1914 թվականին Կոստանդնուպոլսում, «Նա-վասարդ»-ում):

Բոլոր այս արժեքավոր աշխատություննե-րը, ուսումնասիրվող նյութը սպառնի կերպով դրսևորելու հավակնությունը լուսննալով հանդերձ, բովանդակում են բազմաթիվ տես-ական գիտողություններ ու գրույթներ այն-պիսի գիտական հիմնավորությամբ, որ ոչ միայն դիտարկում են հայրենի երաժշտու-թյունը ժխտող տեսարանների, այլ ընդհա-կառակը ճանաչողական մեծ հետաքրքրու-թյամբ գեպի հայի երաժշտությունը հրավի-

րեցին համաշխարհային երաժշտագիտական մտքի ականավոր ներկայացուցիչների ուշա-դրությունը: Հիշենք թեև ոչ նրա 1899 թվա-կանին Հայրենիք վերադառնալուց առաջ Բեռլինում կարգացած երկու անդրանիկ դա-սախոսությունները, որից հետո անմիջապես Կոմիտասն ընտրվում է «Միջազգային երա-ժշտական ընկերության» անդամ: Սա մեծ պատիվ էր նորապարտ, այն ժամանակ դեռևս մեծ երաժշտի անուն լուսնեցող Կոմիտասի համար, որովհետև ընկերության անդամ կա-րող էին լինել միայն մեծագույն երաժիշտ-ները:

Կոմիտասն իր տեսական աշխատություն-ներում շոշափում է ժողովրդական և հոգևոր երգերի ժանրերին, ձևին ու բովանդակու-թյանը, լադերին, տաղաչափական, շեշտադրա-կան, կետադրական օրինակափություններին, ժողովրդական երգերի մշակման և ներդաշ-նակման սկզբունքներին, հայկական ձայնա-գրության սիստեմի պատմական և գործնա-կան նշանակությունը, խազերի ուսումնասի-րությանն ու վերծանմանը նվիրված կարևո-րագույն հարցեր և շատ ու շատ այլ հարցեր, կապված ժողովրդական երգերի հեղինակի, կատարման, հորինման ժամանակի ու տեղի, ժավալման ու ազդեցության հետ: Կոմիտասն զբաղվել է նաև գործիքային երաժշտության (սեփագական երաժշտություն), ինչպես նաև պարային արվեստի հարցերով: Ընդ որում «Հայ գեղջուկ պարը», «Պարն ու մանուկը» ուսումնասիրությունները, որպես խոր վեր-լուծական և հետաքրքիր աշխատություններ, հայ պարարվեստի քննադատում ունեցան հատկապես մեծ նշանակություն:

Հայտնի է, որ խազերի վերծանման գաղտ-նիքը Կոմիտասը համարյա գտել էր, սակայն վերջնական եզրակացությունների չէր հան-գել: Իր «Շարահանի խազերի նշանակությու-նը» հոգվածում նա հայ հասարակությունից ներողություն և համբերատարություն է խնդ-րում, մինչև որ վերջացնի իր «16-ամյակից ալիլի տևող տաժանագին ուսումնասիրու-թյունները և հնարավորություն ունենա մո-տիկ ապագայում իր ուսումնասիրության արդյունքները առանձին հատորներով հասարակության սեփականությունը դարձնելը:

Դժբախտաբար Կոմիտասի այս իղձը մնաց անկատար: Բայց չէ՞ որ մինչև օրս էլ աշխարհիս շատ ու շատ հայրենասեր ու ար-վեստասեր հայեր չանք չեն խնայում հայ երաժշտության հանճարի բազմաբեղուն ստեղծագործության ցաք ու ցրիվ բեկորները վերականգնելու համար, բեկորներ, որոնց հայտնաբերումը թերևս նոր լույս կսփռի հայրենի երաժշտության տարբեր քննադա-վանների բազմաթիվ կնճառու հարցերի վրա և գուցե մեկ օր կգտնվեն և խազերի քննադա-

վառում Կոմիտասի կատարած ուսումնասիրությունները ևս, կվերակենդանան հայ արվեստի բազմաթիվ արժեքներ, որով Կոմիտասի դարավոր երգերը իրականություն կդառնա: Մակայն այդ թողնե՞ք ապագային:

Այսօր փաստ է այն, որ Կոմիտասի «Շարականի խաղերի նշանակությունը» վերտառությամբ աշխատությունը, իր բոլորովին անավարտ վիճակում անգամ, դառնում է հիմք ժամանակակից շնորհալի երաժշտագետ Ռոբերտ Աթաբեյանի «Հայկական խաղերի ուսումնասիրություն» և վերծանման հարցերը վերնագիրն ունեցող մեծածավալ գիտական աշխատության համար, մի ուսումնասիրություն, որը սովետահայ երաժշտագիտության մեջ խաղաբանությունը նվիրված առաջին լուրջ փորձն է (այս աշխատությունը շուտով լույս կընծայվի):

Կոմիտասի տեսական դրույթների վրա է հիմնված մեկ իրիշ տեսական և պատմական բնույթի ուսումնասիրություն ևս, որն իր գիտական խորությամբ, նյութի ընդգրկման մեծ ծավալով, շոշափած հարցադրումների լայնությամբ ու բարդությամբ ներկայացնում է իր տեսակի մեջ հզակի աշխատություն: Այդ աշխատությունը ժամանակակից սովետահայ տաղանդավոր տեսաբան, պրոֆեսոր Քրիստափոր Քուշնարյանի ուսումնասիրությունն է, որ կրում է «Հայ մանողիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր» խորագիրը: Աշխատության մեջ հեղինակը վեր է բարձրացնում հայկական ժողովրդական երաժշտության ծագման ու զարգացման հարցերը, կապված պատմության ընթացքի հետ: Մյուս կողմից՝ այդ զարգացումը դիտվում է ինչպես հայ երաժշտության տարբեր ճյուղերի, այնպես էլ հայ և այլ ազգերի երաժշտական մշակույթների անխուսափելի փոխհարաբերությունների ու փոխազդեցությունների տեսանկյունով, որով աշխատությունը դուրս է գալիս հայկական երաժշտագիտության նեղ սահմաններից, Մասնավոր ուսումնասիրության են ենթարկվում ժողովրդական երաժշտության բոլոր ճյուղերի և հատկապես գեղջկական երգի «հային առանձնահատկությունները ըստ պատմական ժամանակաշրջանների, ինչպես սասցինք՝ այս չափազանց արժեքավոր աշխատության հիմքերը խորանում են Կոմիտասի տեսական դրույթների մեջ:

Նկատենք նաև, որ համարյա չկա, կամ շատ քիչ է սովետահայ երաժշտագիտական այն աշխատությունների թիվը, որոնք եթե չեն հիմնվում, ապա և չեն վկայակոչում տեսաբան Կոմիտասին իրենց գիտական այս կամ այն միտքն ու տեսանկյունը հիմնավորելու համար: Եվ դա այն պարզ պատճառով, որ Կոմիտասը ուսումնասիրել է հայկական ժո-

ղովրդական ստեղծագործությունն իր ողջ բազմազանությամբ և խորության այնպիսի աստիճանով, ինչպիսին կարող էր թույլ տալ մեկ մարդու և հատկապես տարաբախտ Կոմիտասի կարճատև կյանքը:

Այսպիսին էր ահա Կոմիտաս-մտածողի, երաժշտագետ-տեսաբանի դիմանկարը, որին լրիվ ներդաշնակ է նաև Կոմիտաս-կատարողը՝ Կոմիտաս երգիչն ու խմբավարը:

Իրավամբ Կոմիտասը համարվում է նաև հայ վոկալ արվեստի ազգային դպրոցի հիմնադիրը: Նա ստեղծեց հայկական երգեցողության այն ազնիվ ու բարձրարժեք դպրոցը, որն իրենից ներկայացնում է հայ և համաշխարհային երաժշտական կատարողական արվեստի հարուստ ձևաբանությունների օրգանական միասնությունը:

Ազգային կատարողական դպրոցի հիմնադրման գործում Կոմիտասը նորից ու նորից հավատարիմ մնաց իր այն համոզմունքին, որ ամենակարող, ամենակենսունակ և ինքնատիպ ստեղծագործող ուժը ժողովուրդն է. «Ժողովրդի երգեցողությունն ունի ինքնուրույն դպրոց, ուր դաս են առնում ամենքը, ամեն ժամանակ, երբ կարիք են դրում», — գրում է Կոմիտասը:

Հայտնի է, որ Կոմիտասն ուներ ձայնական լավ տվյալներ: Նրա ձայնը փափուկ բարիտոն էր, որն ընդգրկում էր մոտ 20 ձայնաստիճան, այսինքն բարձր տենորի և ստորին բարիտոնի ձայնածավալներն ի մի վերցրած: Սակայն հարցը միայն ձայնի մեծ ծավալ ունենալու մեջ չէ, այլ նրանում, որ Կոմիտասի ձայնի մեջ զուգակցվում էին տենորին բնորոշ ճկունությունը, թեթևությունն ու նուրբ երանգները՝ բարիտոնի լի և բամբ հնչեղության հետ: Ահա ինչու Կոմիտասի ձայնը հարուստ էր թե՛ երանգների, և թե՛ հնարավորությունների իմաստով:

Իր ձայնի կատարելագործմամբ Կոմիտաս վարդապետը զբաղվել է Բեռլինում սովորած տարիներին՝ 1896—1899 թվականներին:

Երգեցողության բնագավառում Կոմիտասի ձևաբանական բարձր պրոֆեսիոնալիզմը նրա հետևողական և գիտակցված աշխատանքի արդյունքն էր: Սակայն Կոմիտասի նորարարությունը այդ ասպարեզում նշված պրոֆեսիոնալիզմի օրգանական միաձուլումն էր իսկական հայկական երգեցողության ոճի, նրա առանձնահատկությունների հետ, հայ պրոֆեսիոնալ կատարողական այն նոր դրույթի ստեղծումը, որն այժի էլ ընկնում գունեղության, անկաշկանդ ու ճկուն կատարումով, անցումների և ույշ ձայնածավալի տարբեր հատվածների հավասար հնչեղությունը:

Կոմիտասի երգական դպրոցի կարևորագույն կողմերից մեկն էլ կատարողական ա-

ունձնահատկութիւնները տվյալ ստեղծագործութեան ժանրի ու բովանդակութեան հետ կապելն է: Ահա ինչու նա ժողովրդական երգիչների օրինակով գույների մի երանգով է երգում ասեմք էպիկական լայնաշունչ երգը, մեկ ուրիշով՝ քնարական և բոլորովին երրորդով՝ անտուն դարբնի երգերը:

Կատարողական արվեստի բոլոր հնարավորութիւնները ենթարկել երաժշտական լիարժեք կերպարի ստեղծմանը, նրա ամբողջական դրսևորմանը — ահա՛ Կոմիտասի սկզբունքը վոկալ արվեստում: Այս սկզբունքից է բխում նաև այն, որ նա պահանջում էր կատարողից ունենալ պարզ արտասանութիւն, երգի բնագիրը լիովին ունկնդրողին հասցնելու համար:

Այս ամենի ճշմարտացիութեան մեջ զբժվար չէ համոզվել, եթե դիմենք Կոմիտասի կատարած երգերից թեկուզ որևէ մեկի ձայնագրութեանը, որոնք բարեբախտաբար պահպանվել են, քննենք իր հարուստ նյութ ժամանակակից և զայիջ սերունդների թե՛ կատարողական ոճի ու զգացական գույներին, և թե՛ ժանրերի բովանդակութեան տեսակետից: Այդ ձայնագրումներն են՝ «Արորն ու տատարակը», «Մոկաց Միրզա-ն», «Լոռվա հորովել»-ը, «Կայի երգ»-ը, «Հավիկ»-ը և այլն: Հուզիչ է Կոմիտասի երգը, հուզիչ նրա, որպես կատարողի կենսագրականում հիշատակված այն բազմաթիվ դեպքերը, որոնք պատմում են մեզ, թե ինչպես Կոմիտասի քաղցրալուր երգեցողութիւնը, իրենց ամբողջ էութեամբ լսողութիւն դարձած ունկնդիրներին հաճախ է փոխադրել կախարդական հրնյութներին մի աշխարհ, շարժել մարդկանց սրտի լարերը, դուրս կորզելով նրանց աչքերից զգացվածութեան չեքմ արտասուքներ:

Կոմիտաս-երգչի հետ սերտորեն առնչված է Կոմիտաս-խմբավարի գործունեութիւնը:

Կոմիտասը կատարելապես տիրապետում էր խմբային երգեցողութեան արվեստին, և դա ոչ միայն նրա այդ արվեստի ներազույն գաղտնիքների բնածին զգացողութիւնն ունենալու հետևանք էր, այլ նաև այն ավանդների, որոնք նա ստացավ իր նախորդ անվանի հայ խմբավարներից՝ Կարա-Մուրզայից և Մակար Եկմալյանից: Կոմիտասը Կարա-Մուրզային աշակերտել է էջմիածնի ճեմարանում և շատ կարճ ժամանակով (1892—1893), սակայն կրել է նրա բարերար ազդեցողութիւնը հատկապես ժողովրդական երգը բազմաձայնութեան սկզբունքներով մշակելու գործում, իսկ Մակար Եկմալյանին նա աշակերտել է Թիֆլիսի ներսիսյան դպրոցի երգչախմբի պարապունքներին հաճախելիս (1895—1896), ուր ձեռք է բերում խմբավարական և եկեղեցական երաժշտական արվեստի անհրաժեշտ ունակութիւններ:

Սակայն, ինչպես երաժշտական արվեստի բոլոր բնագավառներում, այնպես էլ խմբավարական գործում Կոմիտասը չի մնում իր նախորդների կամ ժամանակակիցների ձեռքբերումների սահմաններում: Նա մշտապես աշխատում է հարստացնել ու զարգացնել այդ նվաճումներն իր գործնականից բխող անձնական դիտողութիւններով: Դրա համար տվյալ բնագավառում Կոմիտասն ունի հատկապես մեծ հնարավորութիւններ, որովհետև, լհաշված որոշ ընդմիջումները, շուրջ 17 տարի՝ 1893—1910 թվականներին, նա իր ձեռքի տակ է ունեցել էջմիածնի ճեմարանական երգչախումբը, որի մեջ ինքը՝ Կոմիտասն անցնել է երգչից մինչև խմբավարի խիստ անհրաժեշտ և ուսանելի ճանապարհը:

Խմբային արվեստի իր բարձր իմացութեան ու վարպետութեան շնորհիվ Կոմիտասին հաջողվում էր արագ կերպով մաստեղ ու այնտեղ կազմակերպել զանազան երգչախմբեր մասնազետ ու ոչ մասնազետ երգիչներից և արժանանալ ամենատարբեր լսարանների, հայրենի ու օտարազգի ունկնդիրների ամենաչքեմ ու փայլուն ընդունելութեանը:

Բեռլին, Փարիզ, Լոնդոն, Յուրիխ, Ժընև, Լոդան, Բեռն, Կոստանդնուպոլիս, Իզմիր, Ալեքսանդրիա, Կահիրե, Թիֆլիս, Բաքու, Երևան, էջմիածին և այլն, և այլն, ահա քաղաքների այն շարանը, ուր Կոմիտասի կատարողական արվեստը դափնիներով է պսակվել:

Հայ ժողովրդին, նրա երաժշտական մշակույթին Կոմիտասի մատուցած անգնահատելի երախտիքներից մեկն էլ հենց այն է, որ նա իր առավելագույն պարզ, ուժեղ, ներգործող, խորապես հուզիչ ու սրտառուչ կատարողական արվեստի միջոցով հայի երաժշտութիւնը դուրս բերեց Հայաստանի սահմաններից, հասցնելով այն համաշխարհային երաժշտական մշակույթի բարձր մակարդակին:

Ամբողջական և ցայտուն անհատականութիւն էր Կոմիտասը, գործունեութեան շափազանց վառ նպատակասուլացութեամբ: Նրա մեջ զարմանալի օրգանական միասնութեամբ միաձուլված էին հայ ժողովրդի կյանքի ու մշակույթի խոր ուսումնասիրութեանը նվիրված նրա գործունեութեան տարբեր բնագավառները, այն է՝ ժողովրդական երգի հավաքումն ու ստեղծագործական մշակումը, տեսական մեկնաբանումն ու կատարումը: Գործունեութեան նման նպատակասուլացութիւնը հենց Կոմիտասին հասցրեց հայ ժողովրդական երգարվեստի լքեբազանցված գիտակցաստիճանին: Ամեն մի երգ Կոմիտասի կողմից ձայնագրվելուց հետո, անցնում էր ոճային և կատարողական առանձնահատկու-

թյունները բացահայտելու տեսական վերլուծութեան նախնական շրջանը, որից հետո միայն մնում կ'ամ իբրև ազգագրական նյութ, կ'ամ դառնում գեղարվեստական մշակման ու կատարողական արվեստի առարկա։ Սրանում է Կոմիտասի գրչի տակից դուրս եկած երաժշտական գործերի կատարելությունը ու երաժշտականության զարդանիւթներից մեկը։

Սակայն ասենք, որ ազգագրագետ Կոմիտասը խիստ գիտականություն է ցուցաբերել հենց երգերի հավաքման ու գրառման մեջ, ինչնելով միանգամայն հեռու այսպես կոչված «անհատ երաժշտի էսթետիկ ընտրության մեթոդ»-ից, նա երգերի ընտրությունը մտնեցել է ազգային ինքնատիպության, անադարտության ու անարատության նշանաբանով։ Կոմիտասը ձայնագրել է միայն հայկականին բնորոշ ու տիպականը, դեն նետելով օտար ազդեցություններից, ինչպես չի մտնեցել ժողովրդական երգերի կրթականը, ասենք, Կոմիտասի աշակերտ գրառմանը, ասենք, Կոմիտասի աշակերտ Սպիրիդոն Մելիքյանը, որը ձայնագրում էր ամեն մի երգ, հետապնդելով նրանց կորստից փրկելու նպատակը։ Երկու մեթոդներն էլ քնդունելի են և որոշ հետազոտական աշխատանքների ընթացքում տեսարաններին ընձեռում անհրաժեշտ հում նյութ, սակայն գեղարվեստականության իմաստով Կոմիտասի ձայնագրումները մնում են անհամեմատ բարձր և զերազասելի։

Եթե նկատի ունենանք ժանրային այն բազմազանությունը, որով բնորոշվում է Կոմիտասի ազգագրական ողջ ժառանգությունը, ինչպես նաև այն, որ նրա տեսականին ու կատարողականին վերաբերող արժեքավոր գիտողություններն ու գրույթները և երգահանական ողջ գործնականությունը հիմնված են այդ ժողովրդական երգերի խոր հետազոտության ու գեղարվեստական օգտագործման վրա, ապա միանգամայն պարզ կլինի ազգագրագետ-Կոմիտասի մեծությունն ընդհանրապես և հսկայական դերը հայ երաժշտության պատմության մեջ մասնավորապես։

Կոմիտասը իր գիրքերից ընահանջեց և լզադարեց ժողովրդական երգը որպես տրվյալ ժողովրդի կյանքի ու կենցաղի, աշխարհայացքի ու հոգեկան կերտվածքի, նրա պատմության ու բնաշխարհի, ազգային մտքեր ու ինքնատիպ լեզվի արտահայտությունը համարելուց նույնիսկ այն ժամանակ, երբ մամուլի միջոցով բուրժուական ու պահպանողական մտքի որոշ ներկայացուցիչներ գտան, թե Կոմիտասի երաժշտությունից եզոմի հոտ է փչում։

Հայտնի է, որ Կոմիտասի ձայնագրած երգերի թիվը 3000-ից անցնում է և որ նա գրի

է առել ոչ միայն հայ ժողովրդական ու հոգևոր երգեր, այլև թուրքական, քրդական ու պարսկական ժողովրդական մեղեդիներ։ Այս փաստը խոսում է ընդհանրապես այն մասին, որ Կոմիտասը Արևելքի ժողովուրդների երաժշտական մշակույթները գիտեր մտակիրը։ Անկասկած պատահական չէր, որ նրա դիսերտացիան նվիրված էր քրդական երաժշտությանը։

Կոմիտասի կորստից փրկված լավագույն երգերի մեծ մասը ղետնդված են երկու ազգագրական ժողովածուներում, հրատարակված 1931 և 1950 թվականներին, որոնցից իր գեղարվեստական բարձր արժանիքներով աչքի է ընկնում հատկապես առաջինը։ Այստեղ են տեղավորված նաև Ակն քաղաքի 25 ժողովրդական երգերի Կոմիտասյան ձայնագրումները։ Այդ ժողովածուներում տեղ չգտած որոշ երգեր էլ մեզ հասել են Կոմիտասի մշակումների միջոցով, օրինակ «Կունկա»-ը, «Միծեռնակ»-ը և այլն։

Ժողովրդական երգի հավաքմամբ Կոմիտասը զբաղվել է իր ողջ կյանքի ընթացքում։ Այդ մարզաբիտները գրառման անհրաժեշտության գիտակցումը հաճախ է նրան ստիպել ոտքով շրջել Հայաստանի գյուղերն ու դավառները, առանց խնայելու իր առողջությունը, թանկագին ժամանակը և նյութականը, որի կարիքն ի միջի այլոց նա միշտ զգացել է։

Կոմիտասի ողջ ազգագրական ժառանգությունը, նրա դաշնամուրային պարերի հետ միասին, գտնվում է բազմաթիվ սովետահայ երգահանների ստեղծագործական հետաքրքրությունների տեսադաշտում։ Գրանցից մենք կուզենայինք հատկապես հիշատակել Մարգիս Ասլամազյանին, որը ժողովրդական երգերի Կոմիտասյան ձայնագրումները մշակել է բարձր ճաշակով ու մեծ վարպետությամբ, ելնելով Կոմիտասյան երաժշտության ոգուց ու ոճից, ստեղծագործական սկզբունքներից և ստեղծել կվարտետային գրականության իսկական գլուխգործոցներ՝ «Վաղարշապատի պար»-ը, «Հարբախ»-ը, «Գարուն առ»-ն, «Շոյ նազան իմ»-ը, Զինարես»-ը և այլն։

Սրգահանություն. ահա՛ Կոմիտասի գործունեության վերջին բնագավառը։ Գրանց նրա մեներգներն են, խմբերգերը, դաշնամուրային վեց պարերը և պատարագը։ Բացի պատարագից մյուս գործերն իրենցից ներկայացնում են ժողովրդական երգերի մշակումներ։ Սա՛ է ստեղծագործական այն բնագավառը, որին նվիրվեց Կոմիտաս-երգահանը։

Կոմիտասն ունի և ինքնուրույն ստեղծագործություններ, ինչպես «Կաքավիկ»-ը (խոսք՝ Հովհ. Թումանյանի) և ստեղծագոր-

ծուփյունները գրված ժողովրդական թեմաներում, օրինակ «Անտունի»-ն, սակայն դրանք հորինված են ժողովրդական երգի ոգուն ու ոճին այնպիսի հարազատությամբ, որ հաճախ են դասվում ժողովրդական երգի մշակումների թվին:

Զհեռանալ ժողովրդական երգի ոգուց, զգացական հագեցվածությունից, լեզվական առանձնահատկություններից, կերպարային բովանդակությունից. սա է կոմիտասի ստեղծագործական հիմնական սկզբունքը և իհարկե դրանում է նրա ստեղծագործությունների լայն ընդունելության գրավականներից հիմնականը:

Սակայն ժողովրդական երգի ոգուց և ոճից լհեռանալը դեռ չի նշանակում մնալ ժողովրդական երգի շրջանակներում, ինչպես դասնում էին հայ երաժշտության որոշ ներկայացուցիչներ՝ Սպիրիդոն Մելիքյանը, Վասիլի Դավիդովիչ Կորզանովը, սահմանափակելով Կոմիտաս-ստեղծագործողի պատմական նշանակությունը միայն ազգագրագետի դերով:

Ենդիրը նրանում է, որ Կոմիտասը այդ ժողովրդական փոքրիկ երգերին հաղորդում է կենսական նոր ու թարմ շունչ, տալիս նրանց ձևի կատարելություն, դարձնում նրանցում ստեղծված կերպարներն ավելի լիարժեք, հասցնում դրանք զեղարվեստական ավելի բարձր աստիճանի: Դա անվիճելի փաստ է: Իրոք, չէ՞ որ չի կարելի հավասարության նշան դնել, ասենք, Վարդուն աս կամ Վիրանի ծառ երգերի ժողովրդական և մշակված օրինակների միջև:

Կոմիտասը ստեղծագործական ամենատարբեր հնարամտությունների միջոցով է հասնում ժողովրդական երգի այդ նոր ու հարստացված տարբերակին: Այսպես, նա մի դեպքում, օրինակ՝ Վիրանի ծառ երգում դիմում է տարբեր, տվյալ դեպքում թեմատիկ ընդհանրությամբ աչքի ընկնող երգերի միակցման սկզբունքին, ստեղծելով զգացական գաղափարական հարուստ բովանդակությամբ լայնածավալ կատարյալ ձև, մի ուրիշ դեպքում նա այդ անում է բազմաձայնության այս կամ այն հնարներն օգտագործելու միջոցով, օրինակ՝ պոետական մեծ բուլլո ունեցող Վուսնակն անուշա երգում, մի երրորդ դեպքում՝ կատարողական տարբեր ուժերի, տարբեր տեմպերի օգտագործմամբ, օրինակ՝ Վոսնա յարա խմբերգում, որը գրված է երգչախմբի և մենակատարների համար և այլն, և այլն:

Ստեղծագործական անսահման պրպտումներով համակված, Կոմիտասը որևէ երգի մշակման հարցում այս կամ այն արտահայտչական միջոցին և ձևին դիմելը խու-

տորեն կապում է տվյալ երգի ժանրի հետ: Լինելով լափազանց խորհմուտ հայկական ժողովրդական երգի ժանրերին, Կոմիտասը այն մեկնաբանում է ամենայն բազմազանությամբ ու գիտակ մարդու նրբին ընկալումով: Յուրաքանչյուր ժանրի ներսում նա ստեղծում է գույների մեծ հարստություն, տրամադրությունների բազմազանություն, կերպարների վառ անհատականություն: Որպես օրինակ վերցնենք քնարական երգի ժանրը, որը ոչ միայն Կոմիտասի, այլև ընդհանրապես հայ ժողովրդական երգի ամենամեծ բաժինն է: Հիմնականն այստեղ մարդկային զգացմունքների ու ապրումների պատկերավոր արտահայտումն է: Սակայն քնարական երգեր են թե՛ պայծառ-գովք Քելեի-քելեա-ն, թե՛ ողբերգական Վարուն աս-ն, թե՛ բնության, մարդկային հոգեկան աշխարհը լրացնող այդ անմիջական գործոնի հրաշագեղ պատկերների նկարագրող Վեյսգյազ-ը կամ Վուսնակն անուշա-ը, և թե՛ զգացական այլ գունավորումներ ունեցող շատ ու շատ ուրիշ երգեր:

Եթե յուրաքանչյուր ժանրի ներսում Կոմիտասի ամեն մի երգը բնորոշվում է այսպիսի անհատականությամբ, ապա կարելի է միանգամայն պարզ պատկերացնել, թե ինչպիսի պերճախոսությամբ են զանազանվում իրարից նրա մշակած երգերի առանձին ժանրերը: Ո՞վ, ո՞ր հայը կամ օտարազգին լափազանց գունեղ, ինքնատիպ ու արտահայտիչ, ստեղծարար, աշխատանքի հիմն հնչող մեր հորովելները (Վուսնակի երգա-ը, Վեյսի երգա-ը, Վերկրագործի երգա-ը և այլն) կարող է շփոթել երբեմն հումորով, երբեմն կատակային ուրախ տրամադրությունների շղարշով պարուրված խաղերի ու պարերգերի հետ (Վեմ ու չեմ, Վեղեր ջան, Վեմ գնա և այլն), կամ ո՞վ կարող է, ինչպես Մանուկ Աբեղյանն է արտահայտվում, Վարդկանց մեջ մենակ մարդու, դարիբի հոգեկան խոր վիշտն ու տրտմությունն արտահայտող անտունիները (Վանչե, կունկա, Վենտունի, Վոսնակ և այլն) շփոթել ծիսական-հարսանեկան (Վեսի գովքը), Վեռտվտուն բարի լուս, Վեղթանք, Վեքսեմ գնում և այլն), ողբերի (Վերփեն ջան, Վեղր և այլն) կամ էպիքական լայն շունչ ունեցող Վեկաց Միրզա-յի հետ:

Մայրահեղ ցայտուն են Կոմիտասի ստեղծագործությունները և միայն այդպիսի գործերը կարող էին ֆրանսիական մեծանուն երգահան Գերյուսիի համար այնպիսի հիացմունքի հիմք դառնալ, որ նա հայտարարեց, թե՛ Վեթե Կոմիտասը գրեք միայն Անտունի-ն, այդ էլ բավական կլինեք նրան խոշոր արվեստագետ համարելու:

Կոմիտասի ստեղծագործությունների այսպիսի վառ անհատականությունը հետևանք է նրա այն ստեղծագործական մոտեցման, որի համաձայն նա լեզվական և կառուցվածքային առանձնահատկությունները՝ ուրիշներ, մետրը, լարը, ինտոնացիան, զարգացման սկզբունքը, երգի բնագիրը օգտագործում է որպես մի ամբողջություն, որպես կերպարի էությունն ու լիարժեք դրսևորումն ապահովող արտահայտչական միջոցների մի ամբողջ համակարգ:

Նրա ժողովրդական արտահայտչական միջոցների կողքին Կոմիտասի համար չափազանց կարևոր նշանակություն ունի և բանաստեղծական խոսքը, երգի բնագիրը, քանի որ նրանով են պայմանավորվում ոչ միայն երգի թեմատիկ և ժանրային բազմազանությունը, այլ հաճախ նրա կառուցվածքային առանձնահատկությունները, երգային-խոսակցական ունը և երգի այլ հատկանիշները:

Կոմիտասի կենսագրականից հայտնի է, որ Գևորգյան ճեմարան ընդունվելիս նա հայերեն չգիտեր: Սակայն միաժամանակ հայտնի է, որ այդ բացը նա շուտով հաղթահարում է, և այն էլ այնպիսի հիմնավորությամբ, որ հետագայում գրում է իր «Բնարեքություններ» գիրքը (հրատարակված 1939 թ.) և Մանուկ Արեղյանի հետ միասին կազմում ու հրատարակում իրենց բանասիրական երկարատև ու համաստից աշխատանքի արդյունք, ժողովրդական երգի բնագրերի «Հազար ու մի խաղ» ժողովածուն:

Թե՛ երաժշտության և թե՛ պոեզիայի բնագավառում Կոմիտասն աշխատեց խորպես ճանաչել իր ժողովրդի հոգևոր մշակույթը, սովորել նրա իմաստությունը, արվեստի վարպետությունը, նույնիսկ բազմաձայնությունը, որի հիմնադիրը հայ երաժշտության մեջ հանդիսացավ դարձյալ Կոմիտասը, նա հիմնեց ժողովրդական երգի առանձնահատկությունների վրա, որով և հաջողվեց Կոմիտասին մի նոր էջ բաց անել հայրենի երաժշտական մշակույթի պատմության մեջ:

Անբռնադրուսիկ, ինքն իրենից բխող մեր գյուղական կյանքի՝ աշխատանքի, ուրախության, սիրո և բնության պոլիֆոնիան է, որ զարձնում է Կոմիտասի յուրաքանչյուր երգը մի ինքնուրույն պատկեր, մի օրիգինալ պեյզաժ և հիացմունք պատճառում թե՛ մեզ, թե՛ օտարներին շուրջ 30 տարիների ընթացքում, — գրում է Սպիրիդոն Մելիքյանը: Ահա սրա մեջ է մեր Կոմիտասի մեծությունը:

Կոմիտասի պոլիֆոնիան իր արտահայտությունը գտավ հատկապես նրա հիասքանչ խմբերգերում, որի բնագավառում նա բացարձակ մեծ վարպետ է: Հիշենք նրա խրմբերգերից «Վալի երգ»-ը, «Լո լո»-ն, «Լուս-

նակն անուշ»-ը, «Երկրագործի երգ»-ը և այլ երգեր, որոնք Կոմիտասին զարդարեցին անմահության դափնեպսակով:

Ինքնօրինակ է Կոմիտասը նաև իր դաշնամուրային վեց պարերում (գրված և առաջին անգամ կատարված հեղինակի կողմից 1906 թվականին Փարիզում): Այդ ձևի տեսակետից հակիրճ, ոճային առանձնահատկությունների տեսակետից առանձին վայրերի՝ Սրևանի, Շուշու, էրզրումի, Վաղարշապատի ժողովրդական պարային և գործիքային երաժշտության հետ կապված դաշնամուրային պարերը միևնույն ժամանակ այքի են զարուսում իրենց նրբությունը, պարզությունը, զգացմունքների ներքին զսպվածությամբ և դարձյալ ու դարձյալ տրամադրությունների բազմազանությամբ: Այստեղ կանանց նախնայություն ու հեղուկությամբ լի պարերի կողքին՝ «Երանցի», «Ունարի», «Մարալի», «Շուշուկի», կարելի է լսել տղամարդկանց կլոր պար օձտ ու առաջ-ը, կամ էպիքական-հերոսական բնույթի «Շորոր»-ը:

Կոմիտասի դաշնամուրային պարերի մեծ երգայնության շնորհիվ նրանք հնչում են որպես երգեր, որոնք ձայնի փոխարեն կատարվում են դաշնամուրով:

Կոմիտասի թողած ստեղծագործական ժառանգության մեջ առանձնանում է իր ժանրով, գաղափարական բովանդակությամբ, երաժշտական լեզվով և հետապնդող նպատակով նրա պատարագը: Պատարագը ուրույն տեղ է գրավում նաև ընդհանրապես հայ եկեղեցական երաժշտական գրականության մեջ իր բազմաձայն մտածողությամբ: Հայտնի է, որ Մակար Եկմալյանի պատարագը հիմնված է հարմոնիկ մտածողության վրա:

Պատարագը Կոմիտասի անավարտ գործերից է: Նրա 39 համարներից միայն առաջին վեցն է համարել Կոմիտասը վերջնականապես ավարտված: Մնացած 33-ը սևագիրների համաձայն և իր հիշողությամբ վերականգնել է նրա աշակերտ երգահան Վ. Սարգսյանը: Պատարագում պահպանված են Կոմիտաս վարդապետի այն ստեղծագործական սկզբունքներն ու ոճը, որոնք բխում են նրա այն հիմնական գրույթից, թե՛ հայ եկեղեցական և ժողովրդական երգերը ազգակից են: Իրոք Կոմիտասի պատարագի հոգեզմայլ թովյությունը ու հոգեպարար շերտ շնչով աչքի զարնոց մեղեդիները նույնքան անմիջական ու ինքնարուխ են, որքան և մեր ժողովրդական երգերը, այնպես դինամիկ, ճկուն, զարգացման տարրեր սկզբունքներով հարուստ, բնական, ինչպես և մեր զեղչկական հուզիչ մեղեդիները: Այս ամենի մասին են վկայում պատարագի «Երկրագործի խորին»:

«Բարեխօսութեամբ», «Ընտրեալը յԱստուծոյ» և մի շարք այլ համարներ: Պատարագն իր այս նոր բովանդակութեամբ և ձևով մի նոր խոսք էր հայ եկեղեցական երաժշտական կյանքում:

Ըստ պատմական տեղեկությունների՝ Կոմիտասն ունեցել է նաև որոշ գեղարվեստական մտահղացումներ: Այսպես, մտադիր է եղել գրելու օպերա ըստ Հովհաննես Քումանյանի «Անուշ» պոեմի, ընդ որում այդ ուղղութեամբ նա որոշ աշխատանքներ ծամանակին կատարել է: դրանց մասին են վկայում «Անուշ»-ից մնացած մի քանի հատվածները: Կոմիտասը մտադիր է եղել գրելու նաև «Վարդան» պատմական օպերան, նվիրված մեծահամբավ զորական Վարդան Մամիկոնյանի սխրագործություններին, «Սասնա ծռեր» էպիգրական-հերոսական օպերան և «Թաղաքավարության վնասներ» կոմիկական օպերան (ըստ Հակոբ Պարոնյանի): Վերջինիս մասին որոշ հատվածներ ու տեղեկություններ այժմ գտնվում են Հայաստանի Գիտությունների ակադեմիայում պահվող Կոմիտասյան արխիվում:

Գծախտարար Կոմիտասի կյանքի ողբերգական դիպվածը խանդարեց նրան իրականացնելու իր հանճարեղ մտահղացումները, և նա իր հետ գերեզման տարավ կախարղական հնչյունների մի աշխարհ, թերևս զրկելով հայ երաժշտության պատմությանը օպերային ժանրի կոթողներով ևս հարստանալու հնարավորությունից:

Հայտնի է, որ մեծանուն Կոմիտասը՝ այդ զգալուն, նիհար ու դալուկ արտաքինի տեր

մարդը, աշխատասիրության ու մեծագույն լավատեսության մարմնացում հանդիսացող այդ ցայտուն անհատականությունը անվերադարձ կորցրեց իր հոգեկան հավասարակշռությունը թուրքական բարբարոս կառավարության կազմակերպած արքայի ու արհավիրքների սարսափից: Վախճանվեց նա 1935 թվականի հոկտեմբերի 22-ին Փարիզի հոգեբուժական հիվանդանոցում: Նրա աշխույնը տեղափոխվեց Հայաստան և իր հանգիստը գտավ հայ ժողովրդի համար այնպիսի նվիրական անունների կողքին, ինչպիսիք են Իսահակյանն ու Շիրվանզադեն, Աբելյանն ու Հովհաննես Հովհաննիսյանը և այլք:

Հովհաննես Քումանյանը իր «Թմկաբերդի առումը» պոեմը սկսում և վերջացնում է աշխարհի անցավոր լինելու մասին փիլիսոփայական մտորումներով և հանգում հետևյալ եզրակացության.

«Գործն է անմահ, լավ իմացեք,

Որ խոսվում է դարեդար,

էրնեկ նրան, որ իր գործով

Կապրի անվերջ, անդադար»:

Անմահ է մեծ Կոմիտասը, այս տողերի հեղինակի նման: Այսօր, աշխարհի բոլոր ծայրերում, հանձին Կոմիտասի անվան կվարտետի, Գոհար Գասպարյանի, Զարա Դուրսխանյանի, արտասահմանյան բազմաթիվ տաղանդավոր հայ երգիչների՝ երգահան Կոմիտաս վարդապետի երգերն արժանանում են փառավոր ընդունելության և այդ փաստն արդեն նրա գործի անմահության ամենալավագույն վկայությունն է:



ՉԱՐԵՆՑԸ ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՍԻՆ՝



1920 թվականին Հաստատվեցա Քրիլիսի, Փարիզարնակ ծնողներս և հարազատներս, իրենց հաճախակի նամակներով իրազեկ կպահանջին զիս Կոմիտաս վարդապետի առողջական վիճակի մասին:

Այդ տարիներուն մեր տան և Հայարտան մեջ ինձ վշրջապատելին Կոմիտասի մտերիմներեն դատ նաև անոր արվեստին սիրահար մտավորականներու և ուսանողներու խոճրհեր՝ ինձմե թարմ տեղեկություններ քաղելու համար:

1923-ի աշնան երիտասարդ բանաստեղծ Ծղիշե Չարենց, առաջին անգամ ըլլալով, էկավ Քրիլիսի Կամովսկի փողոցի թիվ 23 բնակարանս, իմ մանկութիան ընկերուհի Արուս Ոսկանյանի հետ:

Ներողություն խնդրելիք վերջ իր անժամանակ այցելություն համար, հուզումեն զողացող շրթունքներով, Չարենց նախ երանի տվավ ինձի, որ ևս իմ սեփական աչքերով տեսած էի Կոմիտաս վարդապետը, և ապա հայտնեց, որ իր այդ օրվան այցելության դրդապատճառը եղեր էր Կոմիտասի մասին թարմ տեղեկություններ առնել, Կոմիտասն, որու երգերով և քարձր արվեստով տարվեր էր ան զեռ իր պատանեկան օրերեն:

Այդ օր, Չարենցի խնդրանքով, երկար մամանակ պատմեցի Կոմիտաս վարդապետի պոլսական կյանքեն զրվագներ: Չարենցի աչքերուն մեջ կտեսնեինք անոր հոգին անցնող հուզումի ալիքները, երբ իրեն կպատմեի Կոմիտաս վարդապետի վերջին ողորդական վիճակի մասին:

Կոմիտաս վարդապետի կյանքին ու գործունեության վերաբերյալ ամեն մի հիշա-

տակը Չարենց կհամարեր սրբազան մասունք և կրկին ու կրկին կխնդրեր, որ ոչինչ չպահեմ իրմե և ցույց տամ ամենաանշան մանրամասնություններն ալ, որ ոճնի իմ ձեռքիս տակ— Կոմիտաս վարդապետի լուսանկարներ, անկե բացիկներ, պոլսական կամ եվրոպական մամուլի արձագանքները անոր համերգներուն կամ դասախոսություններուն առթիվ, անոր նվիրած հիշատակ նոտաները կամ անոր ձեռքը դպած ամենաանշան առարկաներն իսկ:

Հատկապես մեծ եղավ Չարենցի հափըշտակությունը տեսնելով թղթն այն ծաղկազարդ թաշկինակը, զոր Կոմիտաս վարդապետ նվիրած էր ինձ, 1913 թվականին Կոստանդնուպոլսո Պըտի Շանի մեջ հայ տառերու գյուտի 1500-ամյակի առթիվ իր կազմակերպած ութօրյա հորելյանական հանդիսություններուն իմ մասնակցությունն րեքած ըլլալուս համար: Չարենց ընկավ խորունկ հուզման մեջ, երբ տեսավ թաշկինակի վրա Կոմիտասի ձեռագիրը, և սեղմելի վերջ գալն իր սրտին, իրեն հատուկ ներշնչումով սկսավ բարձրաձայն կարգալ անոր վրա տպագրված «Ով մեծասքանչ դու լեզուսն և ապա խնդրեց ինձմե նվազել այդ երգի Կոմիտասյան հիանալի ներդաշնակությունը: Իմ նվագիս Չարենց ընկերակցեցավ իր հուզումնալից, փոքր ու մեղմ ձայնը միացնելով Արուսի քաղցր ձայնին:

«Ով մեծասքանչ»-ի Կոմիտասյան նվիրական հնչյուններու այդ ողևորության տակ պահ մը մտքով վերապրեցա Կոմիտաս վարդապետի փառքի այդ օրերը և հիշեցի, թի ինչպես, այդ օրերուն, թուրքական դաժան վարչակարգի տակ, հայկական մեծ եղեռնի նախօրյակին, այդ երգը կարծես վեր էր ած-

1 Գրական մշակումը Գ. Ն. Գառապոյանի:

վեր սփոփարար ուժի մը՝ ազգային հիմնի, և կարճագանձքեր կոստանդնուպոլսո ամեն մեկ անկյունը, ամեն հայու սրտին մեջ ու շրթունքներուն վրա...
 Նվագելու և իրենց ձայնակցելուն վերջ, Չարենց խնդրեց, որ այդ թաշկինակը իրեն նվիրի։ «Սա իմ թախամանն է... դա կլինի ինձ համար ներշնչման աղբյուր։ Քող գեթ մի առժամանակ մնա ինձ մոտ»։ Ես խոստացա զայն իրեն նվիրել Երևան հաստատվելու հետո։

Այդ նույն օրը Չարենց ծանոթացավ նաև Փարիզեն՝ հորմես իմ նոր նվիր ստացած կոմիտաս վարդապետի յոթ տետրերուն, զորս հրատարակեր էր Փարիզի կոմիտասյան հանձնախումբը։ Երկուր ժամանակ ուսումնասիրելի և հայ ժողովրդական երգի իր խորունկ հասկացողությամբ մի քանի մոտիվներ մեղմագին մրմնջելի վերջ, Չարենց մանրամասնորեն զննեց տետրերու ամբողջ կազմը, գովեց հանձնախումբը իր այս օգտավետ ձեռնարկի համար, առարկելով միայն այն թերության մասին, որ հարկավոր էր տետրերու սկիզբը գետեղել մեծանուն հեղինակի լուսանկարը։ Ոգևորությամբ ու ներքին հպարտությամբ Չարենց ավելցուց, որ այդ պահասն ալ ինքը կլրացներ՝ մոտավոր ապագային մեր Հալլենիքին մեջ վերահրատարակելով կոմիտաս վարդապետի ամբողջական երկերը՝

Վերոհիշյալ տետրերն մեկը նվիրված էր «Սիրական քաչեր»-ուն։ Երբ Չարենց, առաջին էջը ըսեց, ձեռքի ուրիշիկ շարժումներով «Լուսն»-ն կերպրեց, Արուս միջամտեց, գովարանելով այդ տետրի կարմորակ-նարնջագույն կողքի յուրահատուկ գեղեցկությունը։ Չարենց, ընդհատելով իր երգը, Արուսին դարձավ և ըսավ. «Միջերկրականի ծովեզերյա բոլոր նարնջաստանների բուրմունքն ու գույները միասին վերցրած չեն կարող հասնել այդ տետրին...»։

Այդ օր Չարենց ինձն հատկապես խընդրեց նվագել «Գինար» ես՝ կուսնալ մի, մեր դռնից հեռանալ մի՛ն-ն։

Երգեցողության ընթացքին մեկ-երկու անգամ ներքին անհանգստություն մը զըսպելի վերջ, Չարենց ի վերջո ընդհատեց երգը և խոսքը ուղղելով իրեն ձայնակցող Արուսին, նրբորեն կշտամբեց մեզ և ըսավ. «Հայ ժողովրդական երգերը ավելորդ պա-

ճուճանքի կարոտ չեն... նրանց մեղեդիական պարզ ու վճիտ, անկեղծ ու հանդուգն երանգները բխում են հայ գյուղացու հոգու խորքերից... Այդ երգերի միակ մեծ վարպետը եղել է և մնում է հանճարեղ կոմիտասը... Այդ հանճարի հզոր ու սրտագին ձայնի մեջ հայ գեղջուկ երգը դրսևորեց հոգեկան այնքան նրբերանգներ, որ հայ երաժշտությունը հասավ մեր հարտարապետության, մանրանկարչության, դարդաքանդակների ու էպոսի նախանձելի բարձրության...»։

Ժամեր վերջ երբ այդ օր կմեկներ, Չարենց հիշեցուց կոմիտասի թաշկինակը և խնդրեց, որ Երևան գալուս հարգեմ խոստումս։

1929-ի գարնան, կոմիտասյան ծրագրով քանի մը համերգներ տալու համար, Քրիլիսի բնակարանին մեջ կոմիտաս վարդապետի էջմիածնական հայտնի սան վահան Տեր-Առաքելյանը, անոր աշակերտուհի Արփիկ Սելիթ-Սուշկամարյանն ու ես մեր վերջին փորձերը կընեինք, ի ներկայության մեր խնդրանքով հավաքված Քրիլիսիի հայտնի երաժշտագետներ կատիա Սպանդարյանի, ուսուցչիս՝ Նիկողայոս Տիգրանյանի, վիրտուոզ քեմանչիստ Սաշա Օգանեսաշվիլիի և ուրիշներու։

Անկանկալորեն ներս մտավ Չարենց և առաջին ռոպին զգալով կոմիտասյան մոտիվներու շունչը, լուռ ու մունչ, առանց նույնիսկ բարեկու, դիտու թեթև շարժում մը վերջ, մատներու ծայրի վրա անցավ ու նստավ անկյունի դիվանի վրա։

Կոմիտասյան եղանակները սկսան կենդանանալ վահան Տեր-Առաքելյանի քաղցր ձայնի միահյուսվող տենտոի ու բարիտոնի մեջ, պարզ ու խորունկ հուզումներու ալիքներով... Հայտագրի առաջին մասի ավարտումն հետո, Չարենց, ոգևորված, մոտեցավ մեզ և առանձին-առանձին բարեկելի վերջ, դարձավ վահանին և ըսավ. «Երգը են ասում, թե քաներորդ դարը հրաշքներ չի ճանաչում... ահա ձեզ երկու հրաշք. առաջինը՝ կոմիտասյան երգերի ձեռ կատարումը... իսկ երկրորդը՝ ձեր կատարումը լսելու այս անկնկալ երջանկություն...»։

Մոտեն գիտնալով Չարենցի ծխելու սովորությունը, երբ ծխախոտ հրամցուցի իրեն, մերժելով ըսավ. «Այսօրվա ձեր երգերը իմ մեջ խեղդեցին բոլոր մտորություններս. հավատացյալը տաճարում թույլ կտա՞ իրեն ծխել...»։ Եվ ողջագուրելով վահան Տեր-Առաքելյանը, Չարենց ավելցուց, «Հանճարեղ կոմիտասի արժանավոր սանն եք դուք ինձ համար...»։

Կես ժամ անց, վերսկսանք հայտագրի երկրորդ մասի փորձը։ Չարենց նորեն գրա-

1) Չարենց գործնապես ալ իր այդ վերաբերմունքի ապացույցը ավել կոմիտասի ժողովրդության նկատմամբ, Հայաստանի գեղարվեստական բաժնի պաշտոնը վարած ժամանակ կազմակերպելով կոմիտաս վարդապետի երկերու հրատարակման և անոր երգերու ձայնագրման հատուկ հանձնաժողովներ։

վեց իր նախկին անկյունը և ամբողջ էութիւնը կապվեցաւ վահանի ներքոր ձայնին: Անոր գլուխը թուցեք էր ուսերուն վրա, և ան, ամբողջ երկրորդ մասի ընթացքին, գլխահան ու խոկուն, կորովի: Այդ րուպին իրարու հետ կարծես մրցութիւն էին էլիբ հայ ժողովուրդի երեք զավակները: Կոմիտաս վարդապետը՝ իր հայ գեղջուկ երգով, անոր սանը՝ վահան Տեր-Առաքելունը՝ այդ երգի հարազատ կատարողը, և վերջապես ինքը Չարենցը՝ Կոմիտաս վարդապետի գործին մեծութեան և վահանի ձայնի քաղցրութեան խորունկ ըմբռնողը: Այդ րուպին հայ գեղջուկ երգը դադրեցաւ ինձ համար սոսկ ձայնի նեղաշնակ ելեւէջներ ըլլալի և աչքիս առջև մեծցուց, լայնցուց ու խորացուց իմ հարազատ ժողովուրդիս ծով հոգին, որմե ծնեք էին և՛ Կոմիտաս վարդապետը, և՛ վահանը, և՛ Չարենցը:

Փորձի ավարտելին վերջ Չարենց կրկին ու կրկին անգամ ողջագուրեց վահանը և տանուտերի պես ներկաներուն առաջարկեց, որ այդ օր մնան այնտեղ և այդ օրը նվիրեն Կոմիտասի հիշատակին: Մեր տան ամենահարազատ անդամ, ծերունազարդ ուսուցիչս՝ Նիկողայոս Տիգրանյանը նույնպես ոգևորված, երկրորդեց Չարենցի այդ առաջարկը:

Չարենց, իր արտահայտութեամբ մեր լինելակերպը հլուրը», եղաւ նաև մեր համեստ սեղանի ինքնակերպ թամազան: Զորս ժամ տեղը մեր այդ մտերմական հավաքույթին առանցքը կազմեց Կոմիտաս վարդապետը իր երգերով: Կոմիտաս վարդապետի, անոր սաներուն, անոր հիշատակը հարգողներուն ի պատիւ մեր թամազայի կողմն առաջարկված բազմաթիւ բաժակները ոչ միայն չկարողացան թուլցնել մեր Չարենցի շիղերը, այլ ընդհակառակը, առավել ես ոգևորեցին և՛ ներկա եղող կատարողներու, և՛ մանավանդ իրեն՝ Չարենցի տրամադրութիւնները: Օրվան ստեղծված մթնոլորտը զգալով իր հոգիին համար այնքան հարազատ, Չարենց անընդհատ արտասանեց բաժակաճառեր, որոնց մեջ հաճախ հասաւ հանճարեղ ներշնչումի բարձրութեան և միշտ ցուցարբերեց Կոմիտաս վարդապետի նկատմամբ սրտագին նվիրման հաղորդական շերմութիւն: Իր ամեն մեկ բաժակաճառին, Չարենց վերկհաներ Կոմիտաս վարդապետի մեծութեան մեկ կամ մյուս կողմը և հայ ժողովուրդի մեծ սրտին ու տաղանդին իսկական արտահայտութիւնը մատնանշելով անոր երգերին մեկ կամ մյուս տողի, մեկ կամ մյուս մտտիվի մեջ, կսուզվեր հանկարծ անոր մեջ, կարտասաներ երգի քանի մը հատկանշական տունները, կընդգծեր անոնց բանաստեղծական լարանձնահատուկ գեղեցկութիւնները:

ըր և իր փոքր ու մեղմ ձայնով, գլուխը օրորելով և բթամատն ու ցուցամատը միացուցած օդի մեջ մեղմ ճոճելով կերպեր գանձեք, աչքով ու գլխով հրամայելով մեզ, որ շարունակենք երգել կամ նվագել զայն:

«Վահանի եմ՝ զայ շեմ կարող, կցվել եմ՝ յաւ շեմ կարող...», «Երբմում եմ, էրվում...», «Գարունն ա, ձուն ա արեւ...», «Ախ, մարալ ջան, կոկոնս թոռմած մնաց...» և այլ նման տողեր առնելով որպես բնաբան, Չարենց այդ օրվան մեր հավաքույթը իրականին մեջ վերածեց Կոմիտաս վարդապետի արվեստի հանճարեղութիւնը վեր հանող խտացած ու ոգեշնչված դասախոսութիւններու շարքի մը: Չարենց հատկապես կընդգծեր Կոմիտասյան գեղջուկ երգի պարզութիւնն ու հարազատութիւնը:

Ներկաներես ամեն մեկու հասցնին մեղրեղմեջ, պատեհ առիթներ ստեղծելով, ան կըններ գովասանական կամ կշտամբողական դիտողութիւններ: Զեմ կրնար մոռնալ այն սուր կշտամբանքը, որ ան ըրաւ իմ հասցնիս: Չարենց զիս կշտամբեց սեղանակիցներուն հայտնելով, որ առաջին անգամ երբ ինձմե խնդրեր է բան մը նվագել, ես ձգած մեր ժողովուրդի այս անդուգական գանձերը, իրեն նվագեր եմ Բեթհովենի 8-րդ սոնատան: Դովեց իմ կատարողական վարպետութիւնս, բայց ալիցուց, որ այդ և այդ կարգի նվագներս երբեք չէին կարող զինքը հուզել, որքան հայ ժողովուրդական երգի վերահիշալ տողերին ու մտախմբերին որեւէ մեկը...: Ե՛մ ժողովուրդը իր պարզ ու անպաճույճ լեզվով ալիլի է խոսում իմ սրտին, քան որեւէ Բեթհովեն, Մոցարտ, Եւերբտ կամ Եւուման», — բնավ ան և կրկին ու կրկին անգամ խնդրեց Նիկողայոս Տիգրանյանին և վահան Տեր-Առաքելունին՝ ուշադրութիւն դարձնել, որ իմ մեջ զարգանան հետաքրքրութիւնն ու սերը հայ ժողովուրդական երգի նկատմամբ:

Եվ իրապես, այդ երեկոն ունեցաւ խոշոր նշանակութիւն ու ներգործութիւն հայ ժողովուրդական երգի ու Տիգրանյանի գործերու կատարման անցնելու տեսակետին:

Ուշ երեկոյան, երբ կպատրաստվեին մեկնելու, բացառիկ գուրգուրանքով մը վահանին թեր մտնելով, Չարենց մեզի դարձաւ ու ըսաւ. «Կոմիտասի հիշատակին նվիրված մեր այս մտերմական հավաքույթը մի օր կանմահացնեմ իմ գրչով», — և ալիցուց. — «Ամենքդ էլ դեպի Երևան... մեզ մի՛ տանջեք ձեր կարտուով...»:

1929 մայիս 6-ին, երբ մեր առաջին Կոմիտասյան համերգը կուտայինք լենինականի Պետական թատրոնի դահլիճին մեջ, մեղ ի սրտե ծափահարողներին մեկն էր Եղիշի

Չարենցը, որ այդ օր Երևանն մասնավորապես եկած էր իր սիրելիագույն երգիչին՝ Վահան Տեր-Առաքելյանն լսելու իր Կոմիտաս վարդապետը:

Չարենցի խանդավառութիւնը անսահման եղավ տեսնելով, որ լենինականի ժողովուրդը շատ չերձօրեն ընդունեց Կոմիտասին նվիրված մեր շորտ համերգներն ալ:

1931 թվականին հաստատվելով Երևան, երկար տարիներ ես եղա Երևանի ռադիոհաղորդման կոմիտեի հայկական և արևելյան հրաժշտութիւն մենակատար դաշնակահարուհին: Չարենց նույնպես կրնակեր թմնտուրիստա հյուրանոցի երկրորդ հարկի վրա, որու վերը կգտնվեր ռադիոհաղորդման կայանը: Ամին անգամ, որ ռադիոհաղորդման կոմիտեի գրավոր ու բերանացի հայտարարութիւններն իմացած կըլլար, որ հայտագրի մեջ կար Կոմիտաս վարդապետի գործերն որևէ մեկը, ինձ համար սովորական էր դարձեր ներս մտնելուս տեսնել Չարենցը արդեն ինձմե առաջ ներս մտած և դաշնամուրի կողքը, աթոռակի մը վրա սուսուփուս նստած:

Չարենց Մոսկվային բերել տված էր կարիներային դաշնամուր մը: Դաշնամուրի հասնելուն առաջին օրն իսկ Չարենց խնջույք մը սարքեց՝ հրավիրելով իր արվեստագետ մտերիմները: Այդ առթիվ Չարենց, Արուս Ռսկանյան ու Վառիս Մտեփանյան եկան ինձ տանելու, պահանջելով, որ ինձ հետ առնելի Կոմիտաս վարդապետի յոթը տետրերը:

Երբ ներս մտանք, մեզ ուրախութամբ դիմավորեց Շիրվանզադեն, շրջապատված իր արվեստագետ ընկերներին: Չարենց, հաղթական տոնով, ըսավ անոնց. «Երվա խնջույքի երաժշտական մասը սրանով ապահովեցինք»:

Առաջին անգամ էր, որ կտեսնէի մեր սիրելի Չարենցը այդքան վայելուչ հագված: Գոց կապույտ նոր կոստյում մը, ոսկե ինքնահոսք կրծքի գրպանը, ծաղկավոր ասեղնագործած թասակին տակ՝ իր իմաստուն ճակտին վրա ցիրուցան ինկած մուգ-շագանակագույն խոպոպներ, իր փոքր մարմինը ավելի մեծցած կթվեր այդ շքեղ արտաքինին մեջ: Բաց կրեմագույն շապիկն ու կապված կարմրավուն փողկապը, ինչպես նաև ժաքտի գրպանն հաճախակի գուրս հանած արծաթյա ծխամանը կվկայէին Չարենցի նուրբ ճաշակի մասին:

Պահ մը իմ վրա ոլորելով իր սիրուն տպավորիչ աչքերը, թեանցուկ գիս տարավ սև հայելիի նման փայլուն, նոփ-նոր դաշնամուրին առջև: Այնտեղ ես շատ քան գտա ինձ հուզող — առաջինը՝ Կոմիտասի ծանոթ յու-

զաներկ նկարն էր, դաշնամուրի վրա, ծաղկամանի մը քով զետեղված:

Կոմիտասի նկարի մոտ Չարենց դրած էր իր վաղամեռ սիրելիագույն կնոջ՝ Արփիկի լուսանկարը:

Երբ հիանալով դաշնամուրի վրա, հարցուցի իրեն, թե նվիրուպալի ո՞ր ֆիրմայի արտադրութիւնն էր այդ, Չարենց, ներքին հպարտութամբ, ըսավ. «Մոսկվայի մեր սովետական «Մուզտրեստ» ֆիրմայի արտադրութիւնն է սա»:

Նկատելով դաշնամուրի անկյունը զետեղված Մայակովսկիի կիսանդրին, խորհուրդ տվի Չարենցին, որ անմիջապես վերցնե զայն, քանի որ անոր ծանրութիւնը՝ կրնար վնասել դաշնամուրի հնչողականութիւնը: «Թող գոնե այսօր իմ երկու սիրելիագույն մեծութիւնները՝ միասին մասնակից լինեն մեր խնջույքին», — ըսավ Չարենց:

Այդ օր Չարենց իր տունը զարդարեւ էր մեծ ճաշակով, նոր ու թանկարժեք զեղարվեստական առարկաներով: Չինական ու ճապոնական պատեն կախված ասեղնագործված, մետաքսյա երփնեղանգ գույնով, ոսկի ու արծաթ թելերով եզերված գորգներ, անկյունի ապակեծածկ դարակները, հայ և օտար վարպետ նկարիչներու գործերը, հախճապակյա Վենետիկյան նուրբ ծաղկամանները, հնդկական Բուդդայի քրոնջալ արձանը, և մարմարակերտ բազմաթիվ արձանիկներ, որոնք մեծ ճաշակով դասավորված էին իր ապակեծածկ խոշոր ու մասմաքուր գրասեղանի վրա: Այդ բոլորին մեջ զիս ամենն ավելի հուզեց իմ կողմնմ Չարենցին նվիրված Կոմիտաս վարդապետի փոքրիկ մեկ լուսանկարը, զոր զետեղած էր իր գրասեղանի մեջտեղը, ապակիի տակ, իր թանաքամանի ու գրչակալի մոտ, և ըստ իր վկայութիւնի, կհամարեր իր ներշնչման աղբյուրը:

Չարենցի ընակարանը այդ օր թանաքանային նվիրական անկյունի մը տպավորութիւնը թողուց վրաս:

Այդ օրվան խնջույքի ամենաուշագրավ մասը Կոմիտաս վարդապետի «Շորոր»-ն ու «Թանգի»-ն հանդիսացան:

Չարենցի ընդարձակ սենյակի մեկ ծայրն մյուսը բացված խրախճանքի սեղանը, հայրենի բազմապատակ ընտիր բարիքներով հարստացած, տեւեց մինչև լուսաբաց, հայ ժողովրդական երգի ու պարի փոխնիփոխ կատարումներով:

Երևան հաստատվելու տարի մը վերջ, 1932 թվականի մայիսին, Կուլտուրայի տան համերգային դահլիճի մեջ կազմակերպվե-

2 Գործ Փանոս Թերլեմեզյանի, որ իր ձեռքով նվիրել էր Չարենցին:

3 Կոմիտասն ու Մայակովսկին:

ցավ իմ անհատական առաջին համերգս՝ նվիրված հայ կոմպոզիտորներու ստեղծագործություններուն, ընդ որում և Կոմիտաս վարդապետին:

Գահլիճին մեջ առաջին հայացքով նշմարելի մեր սիրելի Չարենցը, որ նստած էր առաջին կարգի աթոռներու ճիշտ մեջտեղը, փաթթված ձմեռնային վերարկուի մեջ, վարպետ Գերենիկ Գեմիրճյանի կողքին:

Համերգն վերջ մեծ եղավ դարմանքս, երբ կուլիսնն ներս մտավ Եղիշ Չարենցը, ու երբ շնորհավորեց զիս և ըսավ, թե հակառակ իր հիվանդ ըլլալուն՝ եկած էր Կոմիտաս վարդապետը լսելու, ինձ հասկնալի դարձավ այդ տաք եղանակին վերարկուով նստելու տարօրինակությունը:

1933 թվականին, օր մը արվեստագետներու խումբ մը, ըստ սովորականին, նորեն նստած էր Գնունի փողոցին վրա գտնվող Տուրխատի պարտեզը և այդ օր այ կվիճաբաներ հայ երաժշտության ներկա վիճակի և ապագայի մասին: Հայտնված թե՛ր ու զեմ կարծիքներուն մեջ ամենեն բուռն կերպով պաշտպանվողը Չարենցիին էր, որ կպնդեր, թե ամեն մի հայ երաժիշտ այնչափով իսկական արվեստագետ է, ինչքանով կյուրացնե Կոմիտաս վարդապետի երաժշտական հայտնագործությունները, ինչքանով կհետևի անոր ուղիին: Այդ տեսակետն, այդ ժամանակվան հայ երաժիշտներին միայն Ռոմանոս Մելիքյանն էր, որ Չարենց կընդուներ որպես որոշ չափով Կոմիտաս վարդապետին հետևող:

Այդ տարիներուն Երևանի ամեն մեկ երաժշտական անկյունը Կոմիտաս վարդապետ լսելու ներքին ցանկությունը Չարենցի մոտ տարերային ընույթ էր ստացելու: Հաճախ պատահեր է, որ ան հավաքույթներու ընթացքին պահանջեր է նվագել միայն Կոմիտաս վարդապետ:

1933-ին Չարենց ամուսնացավ շուշեցի 23-ամյա Իզաբելա Նիազյանի հետ: Հարսանեկան խնջույթին հրավիրված խումբ մը արվեստագետներու մեջ էր նաև Թբիլիսիեն հատկապես եկած Վահան Տեր-Առաքելյանը: Երբ ներկաներն մեկը նորահարս Իզաբելային առաջարկեց երգել հայկական երգ մը, Չարենց շոյելով Իզաբելան, պատասխանեց անոր փոխարին. «Մեր Իզաբելան գրական հայերեն խոսել անդամ չի իմանում, ուր էր որ հայերեն երգեր... Բայց նրա փոխարեն ես եմ խոստանում ձեզ, որ մի տարուց, երբ նորից հավաքված

կլինենք մեզ մոտ, Իզաբելան ոչ միայն հայերենով է հյուրասիրելու ձեզ, այլև երգելու է Կոմիտասի «Գարուն առ-ն...»:

Նետագայում, նոր քնակարան ստանալու առթիվ, Չարենց ինձ հաշի էր հրավիրել: Որոշյալ ժամուն երբ դուրը գարկի, ինձ դիմավորեց Իզաբելան, հազիվ միամյա Արփենիկը գրկին: Երբ արցունքոտ... Շփոթած, խոսք կփնտոտի Իզաբելայի վրդովմունքի պատճառը հասկնալու համար, երբ խոհանոցի կողմեն լսեցի Չարենցի հետզհետև սաստկացող ձայնը, որ կխառնվեր տղամարդու կուպիտ ձայնի մը հետ: Տաք-տաք կվիճեր Չարենց և շատ չղայնացած էր:

Իզաբելային առաջարկեցի, որ միասին երթանք և հանդարտեցնենք Չարենցը: Ներս մտա և անցնելով դաշնամուրի առաջ, սկսա բարձրաձայն նվագել Կոմիտաս վարդապետի «Գարուն առ-ն»: Հազիվ քանի մը տակտ էի նվագած, երբ ներս մտավ Չարենց և հանդարտ ու ժպտազին խնդրեց ինձմե շընդհատել և մինչև վերջ նվագել սկսած եղանակս:

1935 թվականի աշնան մեծատաղանդ բանաստեղծ Եղիշ Չարենց ինձի ցույց տվավ իր մեկ ձեռագիր աշխատությունը՝ «Կոմիտաս—Պոեմա» խորագրով:

Այսօրվան պես թարմ կհիշեմ այդ գործը, իր արտաքին բոլոր մանրամասնություններով: Գրասենդանին ձախ կողմը, խնամքով դասավորված, գրեթե արդեն ավարտած գործ մըն էր այդ, գրված կապույտ թանաքով, սպիտակ և բնտիր լայն թուղթի վրա:

Տեսնելով իմ հրճվանքս և զայն օր առաջ կարդալու փափաքս, Չարենց ավելցուց. «Շույս ունեմ, որ շուտով կավարտեմ»:

Չարենց հազիվ վերջացուցեր էր իր խոսքը, երբ հանկարծ, մանկական անդուսպավունով դեպի սեղանը վազեց իր փոքրիկ Արփենիկը և իր թաթիկներով ուզեց ցրվել «Կոմիտաս»-ի ձեռագիրը:

Չարենց անմիջապես բռնեց փոքրիկը և ըսավ. «Անցյալ օր Արփենիկս առաջին անգամ լինելով նեղացրեց ինձ... գրած պահիս ներս վազեց և մի ակնթարթում գետին փոնց «Կոմիտաս»-ը. դժվար եղավ էջերը կրկին դասավորելս: Եվ գիրկն առնելով փոքրիկ Արփենիկը, Չարենց, ծիծաղով մը, ըսավ. «Այլևս քեզ չի հաղողվի ցրել «Կոմիտաս»-ս», — իսկ ինձ դառնալով ավելցուց. «Ես այն ժամանակ միայն Կոմիտասի հետ եմ լինում, երբ Արփենիկս իր գրչերային քունն է մտնում. և ինձ համար չկա ավելի բաղդըր ապրում, քան մինչև լուսարաց լինելը

¹ Գործվեցավ, որ համերգին եկած էր 39 աստիճան ջերմությամբ:

Կոմիտասի հետ... Իսկ երբ դուրս եմ գալիս տնից, կողպում եմ իմ կարիքների դռները»:

Այդ անմոռանալի օրը Կոմիտաս վարդապետի պոլսական կյանքն իմ պատմած քանի մը հուշերը այնքան հուզեցին Չարենցը, որ ան, այդ օրվան հիշատակով, ինձ նվիրեց իր երկու նոր հանված լուսանկարները: Այդ թվագրված լուսանկարներն ալ կրնան մոտավոր գաղափար մը տալ «Կոմիտաս» պոեմայի ստեղծագործման թվականի մասին:

Վերջին անգամ Չարենցին հանդիպեցա 1935 թվականի խոր աշնան, անձրևալի օր մը, Արոսյան փողոցի մեր տան ներքևի մուտքի վրա, երբ ես ռադիոյի ցերեկային ելույթիս կերթայի:

Չարենց երկու թեերուն վրա բռնած էր մետաքսյա ծրար մը: Տխրեցա՛մ, տեսնելով նոտաները ձեռքիս, և ըսա՛մ. «Ձգում եմ, որ ստիպված ես գնալ. գոնե իմացիր, թե ինչ անակնկալ քաղցր բռնով եմ եկել քեզ մոտ...»: Եվ զգուշավոր գուրգուրանքով բա-


ցավ ծրարի մեկ ծայրը և ցույց տալով իր նորածին աղջնակի դեմքը, ավելցուց. «Ը՛հ չէ, մեր սպասած փոքրիկ Կոմիտասը չէ. բայց, տե՛ս, Չարենցի աչքերը ունի... Երանի՛ թե նրա մատիկները մի օր կարողանան Կոմիտասը նվագել...»:

Երբ իմ անապարանքիս մեջ դիտելով փոքրիկի սիրուն դեմքը նշեցի, որ անոր դիմագծերը շատ էին նման իրենին, ան առանձնահատուկ ժպիտով մը հարեց. «Դու էն ասա, ե՞րբ ես գալու աղջկանս տեսնելու, որ քեզ հետ նվեր բերես իմ թալիսման թաշկինակը...»:

Ես խոստացա կարելի եղածին շափ շուտ անցնիլ իրենց տունը և այդ առիթով թաշկինակը նվիրել իրեն: Սակայն, դժբախտարար, այդ իմ վերջին հանդիպումը եղավ Չարենցի հետ:

Չարին եր հետո, Կոմիտաս վարդապետի խնդրո առարկա թաշկինակը, կրկնակ հիշատակներով նվիրականացած, հանձնեցի իր իրավացի ժառանգին՝ Մղիշե Չարենցի փոքր դուստր Անահիտ Չարենցին:





ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՖ. ԳՌԿՏ. Լ. Մ. ՄԵԼԻՔՍԵՆ-ՐՆԿ

(Գիտության վաստակավոր գործիչ)

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՆԱԿԱՆ ՏԱՎՈՒՇԵՑՈՒ ԱՆՏԻՊ ԵՐԿԵՐԻՑ

(«ՊԱՏՃԱՌՔ ԱՌԱՋԱՆՈՐԱՅ ՊԱՀՈՑՆ»)



Նովհաննես Տավուշեցին (1181—1251) միջնադարյան հայ գրականության ականավոր դեմքերիցն է՝ և՛ իբրև Մխիթար Գոշի արժանավոր աշակերտներից մեկը, և՛ իբրև իտրանաշատ վանքի գրական-գիտական դպրոցի հիմնադիրը: Այս Հովհաննեսին լպիտի շփոթել մյուս Հովհաննես Տավուշեցու հետ, որը Մխիթար Գոշի ուսուցիչն է եղել և ապրել է ժՌ դարի երկրորդ կեսին: Ավագ և կրտսեր Հովհաննես Տավուշեցիներին իրարից տարբերելու համար նպատակահարմար կլինի օգտագործել երկրորդի նկատմամբ սվանական հորջորջումը, որով նա հայտնի է րանասերների մոտ՝:

Հովհաննես Վանականի կենսագրության և գրական գործունեության տեսությանը նվիրված է Համազասպ վարդապետ Ռսկյանի հատուկ մենագրությունը «Հովհաննես Վանական և յուր գրական դպրոցը» վերնագրով [«Ազգային Մատենադարան», 93], Վիեննա, 1922, ինչպես նաև, սովորական դասագրքերը չհաշված, և. հալիկյանի և Ռուբեն արքեպիսկոպոս Իրամբյանի հոդվածները. առաջինի՝ «Յաղագս տարիմտին ի Վանական վարդապետէ ասացեալ» («Գիտական

նյութերի ժողովածու» [«Բաներ Մատենադարանի», № 1, Երևան 1941, էջ 151—189] և երկրորդի՝ «Հովհաննես Վանական վարդապետ Տավուշեցի» («Էջմիածին», 1945 թ., մայիս, էջ 22—26), ուր, սակայն, հաշվի չի առնված Ռսկյանի մենագրությունը, որը, հավանական է, վրիպել է հոդվածագիրների ուշադրությունից: Վանականին և նրա աշակերտներին հատուկ գլուխներ ունի նվիրած նաև Մաղաթիա արքեպիսկոպոս Օրմանյանն իր «Ազգապատում»-ի Բ հատորի մեջ (ՏՏ 1145—1146, էջ 1667—1669):

Վանականի կենսագրության շարադրման համար կարևոր են ոչ միայն նրա աշակերտների հաղորդած տեղեկությունները, առանձնապես Կիրակոս Գանձակեցու Պատմության մեջ մտած գլուխները՝ «Վասն գրությունեան վարդապետին Վանականայ և որոց ընդ նմա», «Վանական վարդապետին [Վասն հաւատոյ]» և «Վասն վախճանի սուրբ վարդապետին Վանականայ»², այլև Տեր Խորալի խմբագրությամբ (1251 թ.) հայտնի «Յայտմատորք»-ի համապատասխան գլուխը արեգի 10 = մարտի 18-ի ներքո:

Ավելորդ չենք համարում բերել այստեղ այս վերջինը ամբողջությամբ:

¹ Հմմտ. Լ. Մելիքսեր-Քեկ, «Վարդապետը Հայոց հյուսիսային կողմանց և այլն, Թրիխի, 1928, էջ 214, 250—254 և Ա տախտակը (վրացերեն):


² Կիրակոսի վաղապատի Գանձակեցու «Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1909, էջ 280—289, 224—224:

«Յայսմ սուր յիշատակ վանական վարդապետի հայոց:

Ամենագով և երջանիկ հայրն մեր սուրբ վարդապետն վանական էր յաշխարհէն Աղուանից ի Տաւուշ գաւառէն, և ծնողքն նուիրեցին զնա Աստուծոյ. և սրբութեամբ սնաւ առ երէց եղբօրն իւրում, որոյ անուն էր Պօղոս կուսան և սուրբ քահանայ: Եւ թողնալ զերկիր ծննդեան իւրոյ՝ զնաց առ մեծ վարդապետն Մխիթար, և եղև ուսումնասէր յոյժ, և ձեռնադրեցին զնա քահանայ ի վանսն Գետիկ, և մականուն վարդապետին Գաւշ, Եւ ուսաւ ի նմանէ զմեկնութիւն Հին և Նոր Կտակարանացն, և եղև կատարեալ գիտնական և արժանի լեալ աստիճանի և անուան վարդապետի՝ զնաց յաշխարհն իւր և շինեաց վանս և ի նմա փառաւոր եկեղեցի սրբատաշ վիմօք, զմբիթաւոր և քաղմախորան, և անուանեաց զվանս Նորանաշատ:

Եւ համբաւ իմաստութեան Նորա համանգամայն տարածեցաւ ընդ տիեզերս, և գալին առ նա յամենայն կողմանց և ուսանէին ի նմանէ զվարս պարկեշտութեան և սրբութեան և զգիտութիւն աստուածեղէն գրոց, և յուսաւորեալ զնային յուրաքանչիւր տեղիս, և լինէին յոյսք աշխարհաց:

Եւ եղև ի ժամանակին յայնմիկ Զալալիդին ոմն բոնաւոր խորասանայ, և աւերեաց զամենայն աշխարհս Հայոց և Աղուանից: Գնաց նա (վանական— Լ. Մ.—Ք.) յանապատ տեղի, յորում էր քար մեծ յոյժ, և փորեաց ի նմա այլս քրածոյս և եկեղեցիս փորեալս, և զաղարեաց ի նմա քաղում ժամանակս մինչև եկն թաթար զօրքն ի վեց հարիւր և ութսուն և չորս ամի թուականութեանս Հայոց, առաջնորդ ունելով զՇարմաղանոյին՝ հրամանօք Հոթթաղանին, և աւերեաց զքաղում զաւառս Թուրքաց և Պարսից, Հայոց և Վրաց, և գերեաց: Գերեցաւ և նա աշակերտօք իւրովք և քաղում ժողովրդովք, և շնորհօքն Աստուծոյ ազատեալք ի նոցանէ՝ եկն դարձեալ յառաջին վանսն իւր ի խորանշատ և մխիթարէր զքաղումս, զի զուարթամիտ էր իբրև զԲառնարաս, այլ շափահասակի, մեծ և յայնամօրուք տեսն փառաւոր և ամեննին շնորհալից, միտք ծննդական, յանդիմանիչ հերձուածողաց, մեղաւորաց դարձուցիչ և կոշող յապաշխարութիւն, պահող, աղօթական, և սուրբ հոգւով և մարմնով, քաղում որդիս ի փառս ածեալ, համեալ ի խորին ծերութիւն, ալևորեալ և լի աւտորք՝ հանգեալ ի Քրիստոս ամաց եօթանասնից, ի թուականին Հայոց 2, արեգի ժ և մարտի ժԸ, ի տօնի սրբոյն Կիրղի Սրու-



ՄԻ ԷՋ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԱՎՈՒՇԵՑՈՒ ԶԵՌԱԳՐԻՑ

սաղեմայ հայրապետին և Ռրենդի և վեց եղբարցն³:

Հետեապես, յստ այս հիշատակարանի, Հովհաննես վանական Տավուշեցիին ծնվել է 1181 թվականին և վախճանվել 1251 թվականին՝ 70-ամյա հասակում:

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը այսպես է բնորոշում վանականի գրական գործունեությունը. «վանականի պատմությունը դեռ երևան ելած չէ, իրեն վերագրյալ մեկնություններուն մասին կասկածներ կհայտնվին, իսկ ժառանգորդներուն և հավաքածոներու մեջ քաղական գրություններ կգնտվին յուր անունով: Այս կարգեն են երկու հատվածներ, որոնց մեջ կխոսվի հայոց առաջին յուսավորիչներուն և անոնց հետևողներուն վրա (Թղթ. 533—536): Հիմնավոր և կանոնավոր տեղեկություններ չեն տրվածները, գուցե վանականի վավերական գրություններ ալ չեն»⁴:

³ Տե՛ր Եսայիի «Յայսմաւորք»-ը, հրատ. Գ. Ռայանի, «Պատրիզիա Օրինետախա», հատ. ԻԱ, Փարիզ, 1830, էջ 1225—1226 (181—182), հայերեն և ֆրանսերեն:

⁴ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, «Եզգայատում», հատոր Բ, Կոստանդնուպոլիս, 1813, էջ 1688:

Համազասպ վարդապետ Ոսկյանը Վանականի գրական գործերը 4 խմբի է բաժանում. ա) պատմական երկ, բ) մեկնողական երկեր, գ) մանր երկեր, և դ) անհարազատ կամ տարակուսական մանր երկեր:

Մասնավորապես, խոսելով Վանականի պատմական երկի («Պատմութիան») մասին, որը հիշատակված է Վարդանի և Կիրակոսի մոտ, բայց ցայսօր երևան հանված չէ, 2. Ոսկյանն իրավացիորեն նշում է. «ետրանաշատի հիմնադրին պատմական երկը սակայն կթվի թև անհետ կորսված է, գոնե հայտնրված չէ անկե ձեռագիր օրինակ մը»:

Մեկնողական երկերի մեջ հիշատակվում են 6 մեկնություններ այլևայլ բովանդակությամբ, որոնց թվում «Մեկնութիւն Յորայ» և «Բացատրութիւն աղօթից Ամբակումայ մարգարէի»:

Մանր երկերի շարքում հիշվում են նույնպես 6 գրվածքներ, որոնցից մեկը՝ դավանության մասին՝ մտած է Կիրակոսի պատմության մեջ⁷. Ապա կարևոր գործ է «Յազագս տարեմտից» կամ «Յազագս տարեմտին»⁸, Մանր երկերի շարքին է դասում 2. Ոսկյանը նաև «Պատճառք վասն Առաջաւորաց պահոցն... վասն հակառակացն և այլանդացն զսուրբ պահն», որը հատուկ քննություն է առնված սույն հոդվածում, երկի անդրանիկ հրատարակությամբ հանդերձ:

Վերջապես, անհարազատ կամ տարակուսական մանր երկերի շարքին 2. Ոսկյանը դասում է 8 գրվածքներ՝ և սրանց թվում՝ «Գիրք թղթոց»-ի վերջում կցված 2 հոդվածները հետևյալ վերնագրով. ա) «Վանական վարդապետին ասացեալ Բան հաւատի աղգիս մերում»⁹ և բ) «Այլ բան է ասացեալ

Վանական վարդապետին»¹⁰, որպիսիք, ըստ 2. Ոսկյանի, ոչ թե Վանականի, այլ Վարդան Արեւելցու գործերն են¹¹:



Վանականի երախտիքը հայ մշակույթի պատմության մեջ ոչ միայն այն էր, որ նա նորանաշատի պատմագրական դպրոցի հիմնադիրն ու շունչ տվողն էր, որի ձեռքից հանդես եկան Կիրակոս Գանձակեցու, Վարդան Արեւելցու և Գրիգոր Ակեներցու (Կեղծ-Մաղաքիա արեղայի)¹² նման ղեմքեր, այլև այն, որ նա որոշ ներդրումներ է արել հայ հնագրության ասպարեզում:

Կիրակոսը, խոսելով «Վասն գերութեան վարդապետին Վանականայ և որոց ընդ նմա» նյութի շուրջը, հիշում է այն քարանձավը «ի կատարս բարձրագոյն քարի միջը, որ կայ հանդէպ դեղջն, որ Ուրուտն կոչի, ք հարատոյ կողմանէ Տաւու բերդի», ուր սկայր զետեղեալ՝ ժողովեալ բազում գրեանա»¹³, և թի ինչպես թաթարները «խուզեալ առին... որ ինչ յայրի անդ էր, և որ ինչ սպասք է եկեղեցւոյն, կամ շուրջառ, կամ այլ անօթ ինչ, կամ խաչ արծաթի, և երկու Աւետարանս ընդելուզեալ արծաթով»¹⁴:

¹⁰ Նույն տեղում, էջ 536:

11. 2. Ոսկյանին համամիտ է 2. Մլուղիեմաներ՝ «Գիտություն Վանական վարդապետին ասացեալ Բան հաւատայի աղգիս մերում», «Հանդէս ամսօրեայ», 1925, էջ 462—463 (Յրաններէն):— 1. Մեխիսեթ-Քեկ, հիշյալ գիրքը, էջ 253, ձեռագր. 4.— Նուրյու եպիսկոպոս Պողոտյան, «Մայր ցուցակ ձեռագրաց Ս. Յակոբեանց», հատ. Բ, Երուսաղեմ, 1953, էջ 117, 197, հատ. Գ, Երուսաղեմ, 1954, էջ 57, 172, 250, հատ. Դ, Երուսաղեմ, 1956, էջ 12, 30, 33, 43, 195 և այլն:

12 Տե՛ս շայկազ ժամկոչյան. «Պատմութիւն վասն ազգին նեոտղացս երկի հեղինակը. Երևանի պետական համալսարանի դիտական աշխատություններ», ԿԴ. 1948, էջ 367—388.— Ներսէս վրդ. Ակիեյան, «Գրիգոր քահանայ Ակեներցի. պատմագիր թաթարաց պատմության, 1250—1335», «Հանդէս ամսօրեայ», 1948 թ. № 7—8, էջ 387—403, 444—446:— 1. Մեխիսեթ-Քեկ, «Վրաստանի պատմության գրավոր աղբյուրների հրատարակությունները. Կատարող Ան, Քրիստի, 1949, էջ 263—264 (Վրացերէն). «Պատմութիւն վասն ազգին նեոտղաց (մոնղոլներէ)», Ի ձեռն Գրիգորի յԱկանց, որ վերագրվում էր Մաղաքիա արեղային, հայերեն ընդգիրք հրատարակեցին հանդերձ անդիերեն թարգմանությամբ և ձեռնթագրություններով Ռոբերտ Պիրպոնտ Քլեյլը և Ռիչարդ Ն. Յեր, շարվարդ, 1954, 294 (16) — 383 (115) էջ, հայերեն և անգլերեն:

13 Կիրակոսի վարդապետի Գանձակեցույ «Պատմութիւն շայոց», էջ 230:

14 Նույն տեղում, էջ 233—234 (ընդգծումը մեջքերումի մեջ մերն է— 1. Մ.—Բ.):

5 Համազասպ վարդապետ Ոսկյան. «Հովհաննէս Վանական և յուր դպրոցը», Վիեննա, 1922, էջ 23:

6 «Ճոճագաղ» (Մոսկվա), 1859 թ., № 5, էջ 147—151, № 6, էջ 195—199, № 7, էջ 227—230.— «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հատ. Բ, կազմեց Նուրյու եպիսկոպոս Պողոտյան, Երուսաղեմ, 1953, էջ 197, նույնը, հատ. Գ, Երուսաղեմ, 1956, էջ 43:

7 Կիրակոսի վարդապետի Գանձակեցույ «Պատմութիւն շայոց», Թիֆլիս, 1909, էջ 324—330 [«Վանական վարդապետ»]:

8 Ս. վրդ. Տայեցու հրատ., «Բազմավէպ», 1897 թ., էջ 335—339.— 1. Խայիկյան, «Յազագս տարեմտի ի Վանական վարդապետէ ասացեալ», «Գիտական նյութերի ժողովածու» [— Բանբեր Մատենադարանի], № 1, Երևան, 1941, էջ 151—169, տեքստը՝ 156—167:

9 «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 533—535:

Ահա այս՝ արծաթով ընդելուզեալն կամ արծաթապատ Ավետարաններից մեկն էր, գրված 1224 թվականին, որին կցված է Վանականի ինքնագիր հիշատակարանը 1238 թվականի ներքո և որը երկար ու ձիգ դարերի ընթացքում պահվում էր Վասպուրականում, երբեմն Վանի Ս. Վարդան եկեղեցում (այժմ Հայաստանի Մատենադարանումն է № 4823, նախկին № 994 ներքո) և որի մանրամասն նկարագրությունը բազմիցս տրվել է ակադեմիկոս Հայագետների կողմից¹⁵։ Այս Ավետարանը արտագրվել է Տփղիսում։

Մյուսը հավանական է այն լինի, ձեռքանաչատիս Ավետարան կոչվածը, որը մի ժամանակ պահվում էր Վանի Ս. Սահակ եկեղեցում և որի նկարագրությունը տվել է Ե. Լալայանը¹⁶։

Առաջին Ավետարանի հիշատակարանը հետաքրքիր է իր հարուստ բովանդակությամբ, որը կարդացվում է այսպես (20 տող)։

Են, Վանական, գրեցի իմով՝ ձեռամբս ի Տփղիս քաղաքի ի դրան Սուրբ Քառասնիցս. Ղի գերեալ էր Ա. Ետարանս ի Տալրչոյ ի Մուղան ի թաթարէն և յետ երից ամաց աստ բերեալ անվնաս վաճառեցին ի Ոջէ թուխս։ Ղոր փառաւոր աւաղէրէց Սարգիս հասարակ պատուական լքահանալիւք և աստուածասէր ժողովրդական տանուէրաւք բազում ծախաւք և աշխատութեամբ գնել էտուն ի մեզ։ Որոց տացէ Քրիստոս փոխադարձ գուրբ արքայութիւն և գորխախն արձակել ի կազանաց մեզաց և հանել ի խաւարէ ի լոյս անմատոյց։ Աստէն պահելով ի շինութեան և ի խաղաղութեան, բարէխաւսութեամբ Սուրբ Աւետարանիս և ամէնայն | սրբոց իւրոց Ամէն¹⁷։

15 Գաբեղի վարդապետ Առվենձոյան, «Փորոս-Ադրաք», հատ. A, Կոստանդնուպոլիս, 1885, էջ 272—275, — Է. Ղ. Ալիշան, «Հայագատուած», Վենետիկ, 1801, էջ 483, — Զ. Ոսկյան, «Հիշված աշխատությունը», էջ 14—15, — Ա. Տեր-Ավետիսյան, «Շուվհանէնս Վանական Տավուշցոս, մտնողական ժամանակաշրջանի հայ գրողի ինքնածեղագրութեան», «Կոստանդնուպոլիսի Տեղեկագիր», IV, Քիֆլիս, 1928, էջ 51—54, նկարը Ա տախտակում (տուներեն)։— Գաբեղի Ա կարողիկոս. «Հիշատակարանը ձեռագրաց», հատ. Ա, Ալեքիսիս, 1951, էջ 839—842, 903—904։

16 Ա. Լալայան, «Ժողովրդի հայերեն ձեռագրաց Վասպուրականի», հատ. Ա, Քիֆլիս, 1916, էջ 127—130։

17 Ա. Տեր-Ավետիսյան, «Հիշյալ հողվածը», էջ 52—53 և Ա տախտակ։

Այսպիսով, ինքը Վանականը խոստովանում է, որ Ավետարանը նրա ձեռքն է անցել 1238 թվականին Տփղիսում ձեղած պահին, երբ նա իբր էր սի դրան Սուրբ Քառասնիցս, այսինքն հետագայում «Հիշատակարանաց» կամ «Բերդի փոքր եկեղեցում» կից, ուր մինչև ժՑ դարը Սանահնի վանքի վանատուն (ՊՈԾԾՈՐԵ, վրացերեն սմետորի) էր հանդիսանում վրաց մայրաքաղաքում¹⁸։



Ինչպես Չ—է դարերում Մովսես վրաց եպիսկոպոսի «Պատճառք Դ ժողովոյն երկարահացն» երկից¹⁹ երևում է, «Հինգաբարսայ յառաջաւոր պահուցն»²⁰ Հայոց եկեղեցին պաշտպանում էր հինավուրց ավանդական սովորույթներից մեկը²¹, որը հավանաբար գաղիս էր հեթանոսական շրջանից և որի շուրջը եկեղեցիների քաժանումից հետո թունդ վիճարանություններ են ծագել քրիստոնեական աշխարհում, իսկ Հայաստանում «Առաջաւորք»-ը հետագայում նույնիսկ նույնացրել էին Ս. Սարգսի պահելի հետ։

Հույն-բյուզանդական գրականության մեջ այս վեճը կամ, ավելի ճիշտն ասած, հարձակումները «Առաջաւորք»-ի առթիվ ամենաուժեղ արտահայտությունն են գտնել «Բաահակ Հայոց Մեծաց կաթողիկոս»-ին վերագրվող, իսկ իրականում կեղծ իսահակի գրվից ելած

18 Լ. Մելիքեթ-Քեկ, «Սոագատիկ առթիվ 1107 թ. Քիֆլիսում տեղի ունեցած երկպառակության մասին», «Կոստանդնուպոլիսի Տեղեկագիր», III, Քիֆլիս, 1925, էջ 48—80 (տուներեն)։— Լ. Մելիքեթ-Քեկ, «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», III, Երևան, 1955, էջ 288, 272—273, 18 «Գիրք թղթոց», էջ 119—127։

20 Նույն տեղում, էջ 124։

21 Ն. Մառ, «Նախնական հաղիսություն Արևաթիսան և Երուսաղեմում 1903 թ. կատարած աշխատանքի մասին», «Հաղորդագիր Կայսերական Պաղեստինյան ընկերության», հատ. XIV, յ. 2, 1904, էջ 13 (տուներեն)։— Ի. Ջովղիսով, «Վրաստանի և Հայաստանի միջև եկեղեցական անջատման մասին է դարի սկզբին», «Կայսերական Գիտությունների ակադեմիայի Տեղեկագիր», 1908 թ., էջ 555 (տուներեն)։— Լ. Մելիքեթ-Քեկ, «Առաջավորաց պատի մասին աստուծոյ վրացական գրությունը, «Քրիստոնեական Արևելք», հատ. V, Պետրոգրադ, 1916, էջ 85—98 (տուներեն)։— Լ. Մելիքեթ-Քեկ, «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատ. I, Երևան, 1954, էջ 36, 48—50։

երկերում²², որոնցից մեկը «Ժառ ընդդէմ հայոց վերնագիրն է գրում: Այստեղ «Առաջատրք»-ի մերկացմանը, որը հոնարեն սարցիվորս է կոչվում, հատկապես նվիրված է առաջին ճառի ԺԴ գլուխը և երկրորդ ճառի ԻԳ կետը²³:

Անկախ սրանից, սարցիվորս-ի մասին եղած առասպելը հետագա մշակումով առկա է, ըստ վկայության Հր. Աճառյանի²⁴, «Աֆթի-միոս Սեկտուտինոսի Ջեն կատարյալ գործում, Նիկեոսորաս Կայսրի Պատմության և Աթենքի Մեխիտոս արքեպիսկոպոսի Եկեղեցական պատմության մեջ, որ՝ Ջենատիոս Արտյաքիոս սարկավաֆի ձեռքով համառոտվելով՝ տպված է նախ Զմյուտնիա (1861) և հետո արարեբեն թարգմանությանը Երուսաղեմ (1867), այն ժամանակի հունաց Երուսաղեմի պատրիարք Կյուրեղի հրամանով²⁵:

«Առաջատրք»-ը վրաց մատենագրության մեջ, «ալաջորի»-ի ձևով, հանդես է գալիս, նախ, Եփիմիոս (Էքզիթիմե) Աթոնեցու կամ Սուրբ Եննեցու (Աթոնելի-Մթոմիդելի) խմբագրած Զ տիեզերական ժողովի կանոնների վրացական վերստիպում²⁶, ապա անսուն հեղինակի թե հեղինակների (ԺԱ դարի) պամֆլետների մեջ հետևյալ վերնագրերի տակ՝ «Պետրոս Թափիլի և ալաջի պատմությունը և «Հաղորդագրություն Սուրբուլյան որդի Սարգսի մասին»²⁷:

22 Լ. Մելիքսեր-Քեկ. «Նույն-բյուզանդական գրականության մեջ գոյություն ունեցող կեղծ-Իսահակյան պամֆլետների մամանակագրության հարցի շուրջը», «Վիզանտիակի Վրեմենիկ», հատ. VIII, Մոսկվա—Լեհնգրադ, 1956, էջ 108—222 (նուսերն):— Նույնի գերմաներեն համառոտությունը՝ «Քրիստոսի կրօնական օրինակներ», Բեռլինի ակադեմիայի հրատարակություն, տետր 2, Բեռլին, 1957, էջ 82—85:

23 Մին. «Պատրիարքի գրեկա», հատ. 182, հրատ. 1864, էջ 1197 (1198)—1203 (1204), հունարեն:— Նույնը՝ «Եւ նարրաջիո դե րեբոս Արմենիե», քննական հրատարակություն և ծանոթագրություններ Ժեռուրդ Գաբրիելի, Լուվեն, 1952 (հունարեն և ֆրանսերեն):

24 Հր. Աճառյան, «Հայերեն արձատական բառարան», Ի, 1926, էջ 495—496:

25 Մին., հիշյալ հրատարակությունը, էջ 1203 (1204)—1235 (1236):

26 Լ. Մելիքսեր-Քեկ, «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատ. I, էջ 104:

27 Նույն տեղում, էջ 118—116:— Լ. Մելիքսեր-Քեկ, «Առաջավորաց պատի մասին ասմունքի վրացական իրույցը», «Քրիստոնեական Արևելք», հատ. V, էջ 85—96 (նուսերն):— Հմմտ. Մեուսպ վարդապետ Մախուրյանի գրախոսականը, «Արարատ», 1918 թ., Յ 1, էջ 148—150:

Վերջապես, ուսուսլավոնական մատենագրության մեջ տարածված է մի գրույց, որն, անկասկած, հույն-բյուզանդականի կնիքն է կրում, հետևյալ վերնագրով «Сказание арменския ереси о неделах фарисеов и мытаря»²⁸, որ «առաջավոր» (-վրաց «ալաջորի») «սարցիվորս» է կոչվում, որը ուսումնական միջավայրում «սարցիվորցի» է դարձել²⁹:



«Պատճառը վասն առաջատրաց պահուցմ, ասացեալ Վանական վարդապետի, վասն հակառակացն և այսանողացն զսուրբ պահսնս վերնադիրը կրող՝ Հովհաննես Վանական Տավուշեցու երկասիրությունը մեկն է հայկական իրականության մեջ ծագած կամ մշակված այն բազմաթիվ շատագովական-հակաճառական գրվածքներից, որոնք հորինվում էին Հայ Եկեղեցու ավանդական կարգերը, ծեսերը և սովորույթները պաշտպանելու համար քաղկեդոնականների հարձակումներից և տունձգություններից:

Բնական է, որ իր այս երկը գրելիս Վանականը օգտագործել է նախորդ գրականությունը տվյալ խնդրի մասին և ապա ինքն ևս, իր հերթին, որոշ ազդեցություն է գործել հետագա գրողների վրա նույն հարցի կապակցությամբ:

Առաջին շարքի երկերից հիշատակություն արժանի են.

ա) Ջենոթ Գլակի—Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն»-ը³⁰:

բ) Պողոս Տարոնեցու «Թուղթ ընդդէմ Թէոփիստեայ»³¹ և «Յաղագս առաջատրացն պահուց գրվածքը»³²:

28 Ի. Մանվետով, «Արևելյան Օրթոդոքս Եկեղեցու պատերի մասին», Մոսկվա, 1886, էջ 64—65 (նուսերն):

29 Հր. Աճառյան, «Հայերեն արձատական բառարան», Ի, էջ 496:

30 Յովհան Մամիկոնեան, «Պատմութիւն Տարոնոյ», հրատ. Ա. Արտառամյան, Երևան, 1944, էջ 73—74:

31 «Թուղթ Երանեղոյն Պաղոսի Տարոնացու յազթաղ ախոյան վարդապետի ընդդէմ Թէոփիստեայ հոռոմ փիլիսոփային», Կոստանդնուպոլիս, 1752, 275—278:

32 Հմմտ. Յակովբոս վրզ. Տաշյան, «Յուզակ հայերէն Առաջորդ մատենագրարանի Մխթարեանց ի վիճենա», Վիճենա, 1895, էջ 769:— Բաբոնդ վրզ. Արագիտեան, «Մայր ցուցակ հայերէն Առաջորդ մատենագրարանի Մխթարեանց ի վիճենիկ», հատոր II, Վիճենիկ, 1924, էջ 529—530:

- գ) Ներսես Շիրազու ժընգհանրական-ը³³.
- դ) Մխիթար Գոշի ժԳճագրութիւն յաղագս վրաց-ը³⁴.
- Իսկ վանականին հետեոյ հեղինակների գրվածքներից պիտի նշել.
- ա) Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը³⁵ և «Գիրք քարոզութեան, Ձմերան հատոր»-ը³⁶.
- բ) Ղազար Զահկեցու «Դրախտ ցանկալի»-ն³⁷.
- Վերջին շարքին կարելի է կցել և Լիմ անապատի միաբան՝ Գորեցի Գևորգ վարդապետ կակարենցի հոգվածը, գրված վրացերեն, «Աուրը Սարգսի պասը» վերնագրով (1748 թ.)³⁸.



«Առաջաւորք» (< առաջաւորաց») բառի ստուգաբանութիւն շուրջը գոյութիւն ունեն մի քանի կարծիքներ:

Դրանցից առաջինը ավանդականն է, որով առաջաւորք-ը դուրս է բերվում առաջը բառից՝ նախընթացի իմաստով Մեծ պասի նկատմամբ, որին Առաջավորքը նախորդում է. Այս առաջավորի աղավաղումն է համարվում, մի կողմից, վրացերեն յալաչորի (առաջոր-ալաչոր-ի, իբրև հետևանք ետընթաց տարնմանութիւն) և մյուս կողմից՝ հունա-

կան-սլավյանական արցիվուրք-ը բազմաթիվ տարբերակներով³⁹.

Մյուս կարծիքը կապում է այդ բառը հեթանոսական շրջանի հավատալիքների և մասնավորապես, յալաչը (ալըչ) — յալաչ-ի պաշտամունքի հետ⁴⁰, որը վերջնական հաշվով տանում է մեզ առիգնների պաշտամունքի աշխարհը⁴¹.

Ավելի հավանական է, մեր տեսութիւնը, երրորդ կարծիքը, որով առաջաւորքը կապվում է արչառի գաղափարի հետ, այլապես ասված՝ ընդունվում է իբրև մսի կամ, ավելի ճիշտն ասած, ուսուցիական մսի⁴² պաս, որը հեթանոսական ժամանակ-

33 «Թուրք Շնդհանրական», էջմիածին, 1885, էջ 141—143.

34 «Թուրք Մխիթար վարդապետին, որ Գոշն կոչիւր», «Արարատ», 1801, էջ 60; Հմմտ. Լ. Միլիխեբ-Քել, «Վարդապետը հայոց հյուսիսային կողմանց և այլն, Քրիչոսի, 1928, էջ 247—248 (վրացերեն):

35 «Գիրք հարցմանց երկուս երանեալ սրբոյն հորն մերոյ Գրիգորի Տաթևացոյ», Կոստանդնուպոլիս, 1729, էջ 649—650.

36 «Գիրք քարոզութեան որ կոչի Ձմերան հատոր, արարեալ սրբոյ հորն մերոյ Գրիգորի Տաթևացոյն եօթնալուս վարդապետին», Կոստանդնուպոլիս, 1730, էջ 146ր—147ա, 152ա:

37 «Գիրք աստուածաբանութեան, որ կոչի Գրախտ ցանկալի, շարադրեալ ի Ղազարոս աստուածաբան վարդապետէ Մահկեցոյ», Կոստանդնուպոլիս, 1734, էջ 428—431.

38 Լ. Միլիխեբ-Քել, «Գևորգ Գորեցի, վրաց և հայոց անեանոթ գրողը 18-րդ դարի առաջին կեսին», «Վրաստանի պետական թանգարանի Տեղեկագիր», X—B, Քրիչոսի, 1940, էջ 114—115 (վրացերեն); Հմմտ. Լ. Միլիխեբ-Քել, «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատ. III, էջ 93—94.

39 Մանրամասնութիւններ տե՛ս Լ. Միլիխեբ-Քել, «Քրիստոնեական Արևելք», հատ. V, 1916, էջ 73—111 (ռուսերեն); Հմմտ. Մեծոպ վարդապետ Մեթոնոյանի գրախոսականը՝ վերջինիս վրա՝ «Արարատ», 1918, հունվար, էջ 48—50. Լ. Միլիխեբ-Քել, «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատ. I, էջ 111—118;— Նր. Աճառյան, «Շալիքն արմատական քառորան», I, էջ 496.

40 Ա. Մառիկյան, «Երկուցաբանական շունը հարաբերութիւնը Միքայիլ-Փարբիկի հրեշտակներու և Ս. Սարգսի», «Շանդէ ամսօրեայ», 1927, էջ 43—55. Նույնի՝ «Արա գեղեցիկ» [«Արգայի մատենադարան», 186], Վիեննա, 1930, էջ 147—170. Գր. Ղափանցյան, «Արա Գեղեցիկի պաշտամունքը», Երևան, 1945, էջ 85—88. Հմմտ. Լ. Միլիխեբ-Քել, «Որեանայում հայտնագործված ժն գարի ձեռագիր շարականը», Քրիչոսի, 1913, էջ 6 և ծանոթ. 2, նույն տեղում (ռուսերեն); Բոլշայա Սովետսկայա էնցիկլոպեդիա, Ա հրատ., հատ. XV, էջ 400 (ռուսերեն):

41 Լ. Միլիխեբ-Քել, «Մի քանի խոսք առիգի պաշտամունքի մասին», «Արարատ», 1918, № 7—8, էջ 125—128. Նույնի՝ «Շալ հին գրականութիւն պատմութիւնը», Քրիչոսի, 1941, էջ 35 (վրացերեն); Հմմտ. Ն. Մառ, «Անփառների կրոնական հազատալիքների մասին», «Քրիստոնեական Արևելք», հատ. IV, 1916, էջ 128, ծանոթ. 1, (ռուսերեն); Հմմտ. նույնի ծանոթագրութիւնը, նույն տեղում, հատ. V, էջ 79, ծանոթ. 2 (ռուսերեն):

42 Ն. Մառ, «Շաբթական էյեմնետները Հայաստանի լեզուներում, IV, երկն-արլառ՝ խոշոր եղջուրավոր աստուան. «Կայսերական գիտութիւնների ակադեմիայի Տեղեկագիր», 1912, էջ 831—834 (ռուսերեն);—Հմմտ. նույնի՝ «Ռուսական գիտութիւնների ակադեմիայի լեզուները», 1924, էջ 25—26 [= Նույնի՝ «Շաբթական աշխատութիւնները», հատ. II, էջ 145—146] (ռուսերեն):— Նույնի՝ «Շալական մշակույթը, երա արմատները և նախապատմական կապերը ըստ լեզվագիտութեան», Փարիզ, 1925 (վերջինիս ռուսերեն թարգմանութիւնը հայերենից՝ ժողովածուում «Շալան և մտածողութիւնը», I, Լենինգրադ, 1938, էջ 32):— Լ. Միլիխեբ-Քել, «Շալիքի պետական ուղևորութիւն», «Սովետական Վրաստան», 1957, 4 հունվարի, № 3:

ներում նվիրված է եղել աստված-ասված-ասվատին՝ իրեն որսորդության աստծու⁴³,

Հեռեակապես, «առաջադրած» (առաջադրաց) բառը ոչ այլ ինչ է, բայց եթե իմաստարաններում փորձ ժողովրդական բառից, խոշոր և զգեցրած անասնի առումով, երբեմն ոչ խարի, խաշան, երնչի, զվարակի և նույնիսկ էջի հակադրությամբ⁴⁴,

Հենց այս իմաստով «ալաչա»-ն գործածված է հատկապես Գուրխյում (արևմտյան Վրաստան), ուր համապատասխան շարաթը «ալաչայս կվիրա» է կոչվում:



Հովհաննես Վանական Տավուշեցու անտիպ երկը, որը «Պատճառք վասն առաջադրաց պահոցն, ասացեալ Վանական վարդապետի, վասն հակառակացն և այլանդացն զսուրբ պահանքն ընդարձակ վերնագիրն է կրում և ըստ մեր տեսության, իրականում, «արջառորաց» պատին է վերաբերում, մենք լույս ենք ընծայում ստորև ըստ Հայկական ՄՍՌ Մինիստրների Մոլիեթին առնթրեր Պետական մատենադարանի մեզ մատչելի հինգ գրչագրերի⁴⁵, այն է՝

ա) №—1952 (1978), ժողովածու ժգարի, էջ 339—345:

բ) №—2111 (21), Քարոզգիրք, 1652 թ., էջ 144ա—145ա:

գ) №—495 (223), Ճառերտիր, ժԾ—ժԶ գ. 7., էջ 113ա—116ա:

դ) №—5618 (929), ժողովածու, ժԳ գար, էջ 355—369:

ՊԱՏՃԱՌՔ ՎԱՍՆ ԱՌԱՋԱՒՈՐԱՅ՝ ՊԱՀՈՑՆ, ԱՍԱՑՆԱԼՉ ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ, ՎԱՍՆ ՀԱԿԱՌԱԿԱՅՆ ԵՒ ԱՅՊԱՆՈՂԱՑՆ ԶՍՈՒՐՔ ՊԱՀՍՆՑ

Յուզվագոյնք⁴ են բանք վասն պահոցն Առաջադրաց, այլ դսական ասասցուք՝ ի բազմացն:

43 Ինչպես հայոց «աստուած»-ը, նույնպես և կովկասյան լեռնականների «աստված»-ը, մեր կարծիքով, տարբերակներ են միևնույն բառի, որը հեթանոսական շրջանում մինչև միաստվածության գաղափարին հասնելը, որսորդության աստուծո անունը պիտի լիներ: Հեռեակապես, բնությունի չէ ն. Մատի փորձը հայոց «աստուած»-ը հունական Սարազիոսի հետ կապելու ուղղությամբ (ն. Մատ, «Սարազիոս աստվածը հայոց մեջ», «Կայսերական դիտարկումների ակադեմիայի Տեղեկագիրք», 1911, էջ 760—774, ռուսերեն):

44 Համարաբարտ Հին և նոր կտակարանաց, երուսաղեմ, 1895, էջ 231, 232-րդ. Արշըրայ զիզ («Մայր ցուցակ ձեռագրաց Ս. Ցակոբանց», հատ. Բ, Երուսաղեմ, 1953, էջ 117):

45 Նույնը երուսաղեմի Ս. Հակոբյանց հավաքածուի մի շարք ձեռագրերում («Մայր ցուցակ ձեռագրաց Ս. Ցակոբանց», հատ. Բ, 1953, էջ 117, հատ. Գ, 1956, էջ 33, 195 և այլն):

ն) №—4670 (205), Ճառերտիր, 1401 թ., էջ 222ա—226ա:

Հեղինակն իր այս երկը գրելիս, ինչպես ընագրի համապատասխան տեղերում փակագծերի մեջ նշած ունենք, «գտագործել է հետևյալ աղբյուրները:

ա) Աստվածաշնչից՝ Մարմոս ճժԸ 49, Ավետարան Մատթեոսի Գ 2, Գ 17, ԻԳ 39, ԻԳ 37—38, Ավետարան Ղուկասու ժԳ 35, ժԷ 26—27, Պողոսի առաքելո թուղթ առ Հռովմայիցիս ժԲ 12, և այլն:

բ) Բարսեղ Կեսարացու Ճառ ի Մեծ Պահս (անտիպ):

գ) Կյուրեղ Աղճաքացու Կոչումն ընծայության (հրատ. Կոստանդնուպոլիս 1728, Վիեննա 1832) և այլն:

Անկախ զուտ մատենագրական նշանակությամբ, Վանականի երկը, իբրև հայ միջնագրի ծնունդ, կարևոր նյութ է պարունակում հայ բարբառագիտության տեսակետից ևս:

Այսպես, օրինակ Վանականը «գտագործում է հետևյալ բայածները՝ «կու լինի», «լըմանն կու միարանին», «կու դայր», «կու խրտչէին», «կու խառնէր»:

Այսպես, հետաքրքիր են խ-ի գործածության օրինակները հ-ի փոխարեն՝ «նախապետքն» (ծանոթ. 48), «զնախատակութիւն» (ծանոթ. 88), «խաղորդեցարուք» (ծանոթ. 116) և այլն:

Երանելի⁶ Բարսեղ ասէ, թէ «Պահոցն նախ ի դրախտին օրինագրեցաւ և հասակակից է նախահօրն Աղամայ⁸, Պահոց պատուիրանն և⁹ շուտել¹⁰ ի ծառոյն դիտութեան, զոր ոչ պահեաց, զողացեալ¹¹ հեշտութեամբ և մերկացեալ անկաւ ի հաւասարութիւն անասնոց և ի համարս¹² մեռելոց» [Բրս. ՊՀ.], Արգ, այս պահս այնմ¹³ պահոցն հաստեցաւ¹⁴ յառաջնորդացն մերոց, զի զոր ոչ¹⁵ պահելովն արտաքս անկաք ի դրախտէն և կորուսաք զփառսն. թերեւ¹⁶ պահելովն այսրէն առցուք զնա: Եւ զի Ե զգացութեամբն մեղաւ Աղամ, Ե-օրեայ պահօքս¹⁷ սրբեսցուք զգալութիւնս մեր:

Այս է առաջին պահոցը: Եւ յորժամ ել Աղամ ի դրախտէն, ասեն, թէ մահու մնալով Աղամայ ոչ կամէր ուտել ինչ: Եւ զկնի Ե ատուր գթացեալ Աստուած ողորմեցաւ և հրամայեց հրեշտակի¹⁸ իւրոյ մխիթարել զնա¹⁹ և խոստանալ նմա զառաքումն Միածնին և մարմնանալ²⁰ Բանին Աստուծոյ վամն փրկ-

կուժեան նորա. և հրամայէ ուտել ի պողոյ աշխարհին²¹, Զայս խոստումն յիշեցուցանէ Դաւիթ ի դիմաց Ադամայ՝ ասելով. «Յիշեալ զքան ծառայի քո, յոր և²² յուսացուցեր զիս» [Սղմս. ՃԺԸ, 49], Դարձեալ Ս աւուրք²³ յառաջ քան զլինելութիւն մարդոյն արարչագործեցան արարածք և ապա յետ Ս աւուրք²⁴ ստեղծ Ադամ. Պահէր Աքէլ Ս օր²⁵ և ապա զպատարագն²⁶ իւր մատուցանէր. Եւ Սէթ զպահեաց աւուրս Ս, յորժամ մեռաւ Ադամ. Պահէր և Սնովք ի մուտս ամսոյն աւուրս Ս: Պահեաց և Նոյ աւուրս Ս նախ քան զմտանելն ի տապանն. Եւ յետ ելանելոյն պահեաց դարձեալ աւուրս Ս և ապա մատոյցն զպատարագն. Պահեաց և Աբրահամ յաւուրս Ս, յորժամ խոստացաւ նմա Աստուած տալ իսահակ որդին. Եւ դարձեալ պահեաց, յորժամ ապրեցաւ Խահակ ի մահուանէն. Եւ ամենայն անդրանիկքն²⁷ պահէին Ս օր²⁸ ի վախճանել հարցն, ի Սէթայ²⁹ սկսեալ և հայր որդու աւանդելով, որպէս ասէ Բարսեղ, Թէ կեկաւ եհաս մինչ ի Մովսէս [Բրս. Պհ.]: Եւ նա կարդեաց խ օր պահս վասն Խ-օրեայ³⁰ առեալ տախտակին. Եւ Ս օր³¹ պահելով տրոնչեաց ժողովորդն և ապա բարեկենդանացոյց նոցա. Եւ Ս աւուրն³² հրամայեաց ամի ամի պահել վասն քառութեան յանցանացն որթուն. Եւ ոմանք յաճախ յիշեն զասացեալս, Թէ Աբրահամ պահեաց Ս օր զկնի հրկիզութեան Սողոմայ³³ և Ս օր³⁴ Յակոբ, յորժամ ետես զսանդուխտքն, և Ս օր, յորժամ կոտորեցին որդիքն Յակոբայ³⁵ Շմաւոն և Ղեկ զՄկիմացիան, և Ս օր³⁶ պահեցին³⁷, Եւ Յակոբ³⁸, յորժամ լուաւ զքօթն³⁹ Յովսէփու, Ս օր պահեաց⁴⁰, Եւ Յովսէփ պահեաց Ս օր⁴¹, յորժամ եմուտ ի բանտն⁴² Փարատնի. Եւ զայս ամենայն ծոմով առանց ուտելոյ և ըմպելոյ անսուղ⁴³ պահեցին⁴⁴, որ նախ քան զօրէնան⁴⁵ օրինաւորք⁴⁶ և յառաջ քան զԱւետարանն աւետարանիչը. Եւ զի առանց պատարագի և ընթերցուածոց⁴⁷ է, այն է՝ զի այսպէս պահեցին նահապետքն⁴⁸ և արդարացան:

Ոմնիմք դարձեալ և նոր պատճառ. Սուրբ Լուսաւորիչն մեր Գրիգոր, յորժամ ել ի վիրապէն, Կ օր⁴⁹ վարդապետեալ քարոզեաց Թագաւորին և ժողովրդեանն. Եւ ապա Ս օր պահել հրամայեաց⁵⁰ սբրութեամբ⁵¹, Եւ էր ժամանակն ամառնային. Եւ սուրբն Մեղքեստրոս, յորժամ մկրտեաց զԿոստանդիանոս, Ս օր⁵² պահս եղ նմա և ժողովրդեանն. Եւ վասն առ իրեարս միաբանութեան աստեղին զերկոսեանն. Այլ սոքա թողեալ կորուսին զիւրեանցն. Եւ մեք հաստատուն կա-

լաք զմերս և պահեցաք շնորհօքն⁵³ Քրիստոսի:

Է և այլ պատճառ Առաջաւորաց ասացեալ պահեցաւ Նինուէացիքն քարոզութեամբն Յովնանու⁵⁴ յանդուներս հրաւիրեցան և Գ-օրեայ⁵⁵ պահօք⁵⁶ ապրեցան. Այսպէս և հաւատացեալք, որք վասն մեղաց ակն ունին⁵⁷ դժոխոց, պահեն և ապրին հոգով Գ օր Նինուէացոցն⁵⁸, իսկ Գ շաքաթն⁵⁹ և ուրբաթն բնական պահք. Զրովանդակ տարույ յանցանքն Ս զպարանցս Ս-օրեայ⁶⁰ պահօք⁶¹ քնչէ ողորմութիւն Աստուծոյ. Վկայն և հարաւային հապարացիքն, զի ասելի պահեն քան զմեզ, զի և զանասունս ևս ծոմացուցանեն նման Նինուէացոցն⁶², վասն ի գութ ածելոյ զԱստուած. Դարձեալ Գ քառասունքն, զոր պահեաց Մովսէս, ժնութեան⁶³ և Ը ժն երեք Ս ժն է յորհրդաւոր (?), հինգն է⁶⁴ Ս զգայութեանցս օրինակ⁶⁵ և Գ-ե⁶⁶ մարմնայն, հոգոյն և մտացն. Դարձեալ ամէն Խ-ը հինգ է⁶⁷ և Ե-ը հինգ Ս զգայութիւնս⁶⁸, և Ը-ն զիսաւոր մեղացն ամբարտաւանութեան, որ է հպարտութիւն, սնափառութեան, որ է փառասիրութիւն, բարկութեան, արծաթասիրութեան, ձանձրութեան, որկորստութեան, ծուլութեան, բղջախոհութեան⁶⁹ և այսպիսի միտս ունի յինքեան Խ թիւն, զոր պահեցին սուրբքն և արդարքն առաջինքն՝ Մովսէս, Յեսու, Եղիայ, Եղեկիէլ⁷⁰ և Դանիէլ. Պահեաց և Տէր մեր յետ մկրտութեան. Պահեաց և յետ յարութեան և ապա համբաձաւ յերկինս:

Ասի յաւանդութեանց, եթէ ⁷¹ առաքեալքն 2 օր կարգեցին զպահքն⁷² և եդին պահել քրիստոնէիցն. Բայց նորահաւատ քրիստոնեայքն տրտնչեցին վասն բազմութեան. Ապա առաքեալքն բարեկենդանացոյցին զԲ-շաքաթն⁷³ և զայս շաքաթս ամի ամի պահել⁷⁴ հրամայեցին՝ արագ պահոցն առաջաւոր աւետանելով. Այլքն ասեն՝ Ս օր եդին առաքեալքն պահել. Երբ շաքաթ մի պահեցին, իմացան, որ⁷⁵ Բ փնաս կա լինի. Ա, որ ընդ հրէից լրմանն կու միաբանին, և Բ⁷⁶, որ շարձարանքն Քրիստոսի ի ներքոյ⁷⁷ հասարակածին⁷⁸ կու գայր, որ է զարեանամուտն. կամ պիտէր 2 օր⁷⁹ պահել և նոր հաւտացեալքն կաւ⁸⁰ խոտչին և Ս օրն ի հրէից լրումն կու խառնէր: Ապա զԲ շաքաթն բարեկենդան արարին. Եւ յետ ժամանակաց մեծն Կիւրեղ Երուսաղեմացին զնոյն արար զեկեալսն ի մկրտութիւն առ նա, ընդ որս էր Ակակ Պարսիկ, որ⁸¹ Ս օր⁸² պահօք⁸³ փորձեաց և զԲ շաքաթն ուտել հրամայեաց և երախայացուցանել կարգեաց ժԸ ընթերցուածս⁸⁴ յուսումն նոցա, և անուանեաց⁸⁵ զայն Կոշումն բնծայութեան [Կիւրղ. Եր.

4 ոչ. 1, որ կոչեցան նորընծայքն ի հաւատս Քրիստոսի, և մկրտեաց անձինս ՃԹ ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

Յետ ժամանակաց եղև մարտիրոսանալ սրբոյն յարքայէն Պարսից ի գլուխ Առաջաւորաց պահոցս յունուարի⁸⁶ ամսոյ կէ. վասն այնորիկ տօնեմք⁸⁷ զնահատակութիւն⁸⁸ նորա յաւուր շարաթու: Եւ մեք զպահս ոչ նմա աւանդեմք, այլ առաջաւոր՝ ըստ ասացելոցս. և ոչ թէ նորա պահեմք, այլ Աստուծոյ. Եւ որպէս աղուհացից առաջին⁸⁹ շարաթուն շարաթօրն⁹⁰ սրբոյն թէղորոսի տօնեմք⁹¹, և զշարաթն բաղումք նմա անուան⁹² են: Այսպէս և աստ զպահս Աստուծոյ պահեմք ի թողութիւն մեղաց մերոց և ի մասնակցութիւն առաջին սրբոցն պահողացն զհնգեակս⁹³ և զշարաթ⁹⁴ օր⁹⁵ սրբոյն Մարգարի տօնեմք⁹⁶, որ վերակացու է քրիստոնէից և վրէժխնդիր ոչ պահողացն զսուրբ պահսն Առաջաւորաց պատուհասող⁹⁷, և պահողացն զօրավիգ, և պահպան հրամանան Քրիստոսի Աստուծոյ մերոյ⁹⁸:

Եւ արդ, եղբար՝ք, ունկն զիք և լուարուք⁹⁹, սրբեցէ՛ք զմիտս ձեր¹⁰⁰ և ուսարուք զգորութիւն¹⁰¹ պահոց, զի ամենայն սրբոց պահքն և աղօթքն¹⁰² եղեն առիթ փրկութեան և պատճառ պատուի¹⁰³ փառաց և պարգեացն Աստուծոյ: Իսկ եթէ արդարոցն պահքն է, որ հանձ ի նեղութենէ՝ յանդորր, ի շարշարանաց՝ ի հանգիստ, ի ծառայութենէ յազատութիւն, ի մեղաց՝ յարդարութիւն, յանարդանաց՝ ի վերաբերումն¹⁰⁴, ի խաւարէ՝ ի լոյս, ի մահուանէ¹⁰⁵, ի կեանս: Ապա քանի՛ օգուտ¹⁰⁶ է մեզ՝ մեղաւորացս, որ ի պէսպէս մեղաց¹⁰⁷ ցանկութիւնս¹⁰⁸ եմք, և ոչ ոք գտանի ի մարդկային ընութիւնս, որ ուտե-

լովն և ըմպելով կարէ առնուլ զպարգեսն Աստուծոյ, այլ պահօք¹⁰⁹ և աղօթիք¹¹⁰, նեղութեամբ և շարշարանօք¹¹¹, որպէս¹¹² վկայէ Պողոս, թէ բազում նեղութեամբ պարտ է մտանել մեղ¹¹³ յայն հանգիստ¹¹⁴, և յորդորելով ի բարիս՝ ասէ. «նեղութեանց համբերեցէ՛ք, աղօթից¹¹⁵ ստէպ կացէ՛ք, ի պէտս սրբոց հողորդեցարուք¹¹⁶» [Պաղ. Հոռվ. ԺԲ 12] ի պահս, ի սրբութիւնս, յերկայնամտութիւնս¹¹⁷, ի Հոգի Սուրբ, ի սէր առանց կեղծաւորութեան: Իսկ զօրինակ¹¹⁸ ներողացն և զարեցողացն Տէր մեր յայտ առնէ՝ ասելով. «Տճաւուրս Նոյի ուտէին, ըմպէին, կանայս առնէին և արանց լինէին» [Մատթ. ԻԳ 37—38], մինչև եկն քրհեղեղն և կորոյս զամենեսեանս: Եւ վասն մեղաց մարդկան ամենայն ինչ, որ էր ի վերայ երկրի, սատակեցան և փորեան [Ղուկ. ԺԷ 26—27], Եւ այլուր ասէ Տէր մեր. «Ամէն, ասեմ ձեզ, եթէ ոչ ապաշխարիցէք, ամենեքեան նոյնպէս կորնչիցիք» [Մատթ. Գ 2, Գ 17], վասն որոյ աղայեմ զձեզ, եղբար՝ք, ի բաց թողէ՛ք ի սրտից ձերոց զխեղ և զնախանձ և զամենայն անկարգութեան բանս և զօրացարուք ի պահս և յաղօթս¹¹⁹ և յողորմութեանս: Մի՛ լուծանէք զպահոց պատուիրանս, զի մի՛ ստարագիր լինիք¹²⁰ յարքայութենէն Աստուծոյ: Այլ պահօք¹²¹ և աղօթիք¹²² տուք ողորմութիւն և եղիցի ձեր ամենայն ինչ սուրբ: Եւ արժանաւորիք յսել¹²³ զերանաւէտ բարբառն որ ասէ. «Եկա՛յք, օրհնեալք¹²⁴ Հօր¹²⁵ իմոյ» [Մատթ. ԻԳ 39, Ղուկ. ԶԳ 35], ժառանգեցէք¹²⁶ պատրաստեալ ձեզ զարքայութիւն ի սկզբանէ աշխարհի, որում և զմեզ արժանիս արասցէ¹²⁷ Ցիսուս Քրիստոս Աստուած մեր¹²⁸:

Վ Ա Ր Ի Ա Ն Տ Ն Ե Ր

- 1 առաջաւորացն. 2 արարեալ. 3 պահս.
- 4 յուրիք. 5 ի] փոխանակ. 6 երանելին.
- 7 արիւնադրեցան. 8 նախահօրն Ագամայ]
- մարդկութեանս. 9 եզ abs. 10 շուտելն. 11 գողացաւ.
- 12 համար. 13 այնր. 14 հաւատեցաւ]
- փոխանակեցաւ. 15 ոչն. 16 թերևս abs.
- 17 պահաւքս. 18 հրեշտակին. 19 զնուս.
- 20 մարմնանայ] մարդ լինել. 21 աշխարհին]
- էրկրին. 22 որով. 23 ատուրք. 24 ատուրն.
- 25 ար. 26 զպատարագն. 27 անդրանիկն.
- 28 եւ (sic) ար. 29 Սեթայ. 30 քառասնօրեայ,
- 31 հինգ ար. 32 զհինգ արն. 33 Սողոմայ.
- 34 ար. 35 Ցակորայ abs.

- 36 ար. 37 պահեցին abs. 38 եւ Ցակոր abs.
- 39 դրաւթն. 40 Ե օր պահեաց abs.
- 41 ար. 42 բանդն. 43 անսուաղ abs. 44 պահեց.
- 45 զարէնսն. 46 արիւնաւորք. 47 ընթերցածոց.
- 48 նախապետքն. 49 կն ար. 50 պահել
- հրամայեաց] հրամայեաց պահել. 51 սրբութեամբ abs.
- 52 ար. 53 շնորհաւքն.
- 54 Յունանու. 55 երեքարեա 56 պահաւք.
- 57 ունէին. 58 նինչացուցն. 59 չորեքշարաթն.
- 60 Ե-արեայ. 61 պահաւքս. 62 նինչացուցն.
- 63 ուրէին (sic). 64 է abs. 65 արիւնակ.
- 66 էր քն (sic). 67 Ե է. 68 զգայութիւնս]
- զգայարանս (զգարանացս

- sic). 69 բղբանոճութեանս (sic). 70 էգեկիէլ. 71 թէ. 72 զպահան. 73 շարաթն. 74 ար. 75 որ] եթէ. 76 Բ]Ա. ալլ. 77 ներքեւ. 78 հասարակացին. 79 ար. 80 կու abs. 81 որ abs. 82 ար. 83 պահաւք. 84 ընթերծւածս (sic). 85 անւանեաց. 86 յունարի. 87 տանեմք. 88 զնախաասակութիւն. 89 առաջի. 90 արն. 91 տանեմք. 92 անւան. 93 զհրեկեայս (sic). 94 շարաթ. 95 ար. 96 տանեմք. 97 պատուհասօզ. 98 մերոյ abs [+mem. որ որդրմեսցի ստացողի գրոցս և գրողի սորին և ծնողաց նոցին և որ զամէնն ասէք]. 99 լրարուք. 100 ձեր abs. 101 զզարութիւն. 102 աղաթքն. 103 պատուի. 104 վերբերումն. 105 մահւանք. 106 աւզուտ. 107 մեղաց abs. 108 ցանկութիւն. 109 պահաւք. 110 ազաւթիք. 111 շարշարանար. 112 + և. 113 մտանել մեզ] մեզ մըտանել. 114 հանգիստն. 115. աղաւթից. 116 խաղորդեցարուք. 117 յերկանմտութիւն. 118 զարինակ. 119 յաղաւթս. 120 լինիլիք. 121 պահաւք. 122 ազաւթիք. 123 լրսել. 124 ահեալք. (sic). 125 հար. 126 ժառանգեցէք]ժ. 127 արացէ. 128 Աստուածն մեր] որդին Աստուծոյ [+mem. Վանաւանդ զՍահակն և զԱստուածատուրն և զՅոհանէսն և զԱղութն և զԿարապետն և զՄկրտիչն և զՅովաննէսն և զԹումայ քահանայն և Սուրաթն և ըսլկաքան (sic) և զՅակոբ զծողաս]:





Ա. ԱՂՈՅԱՆՅԱՆ

ԲՐՈՒՍԱՅԻ ԾՐՋՄԵՆԻ ՀԱՅՏԵՐԸ*

(ԻՐԵՆՑ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈԳԼՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ)

Ա. ՀԱՅՏԵՐԸ ԲՐՈՒՍԱՅԻ ԸՆԴ ՍՄՄԱՆՑՈՒՆԵՐՈՒ ԳՐԱՎՈՒՄԵՆ ԱՌԱՋ

Բրուսա Բյուզանդական տիրապետության շրջանին կարևոր և մեծ քաղաք մը չէր, այլ երկրորդական վայր մը, ուր հայ գաղթականներ հավանորեն զոյւթյուն ունեին, ինչպես Փոքր Ասիոյ ամեն մասերուն մեջ, ամենն արեւմտյան ծայրին մինչև Հայաստանի սահմանը, նույնիսկ շատ կանոխ ժամանակներն, այսինքն է, Բ. և Ք. դարերին սկսելու:

Դժբախտաբար հատուկ հայ գաղութին վերաբերյալ որոշ հիշատակութիւններ չունինք, սակայն մակարերաբար դիտարկել հետեցնել, թե ինչպես Անատոլիան բազմաթիվ քաղաքները հայ գաղութներ ունեցած են, նույնպես նաև Բրուսա, Բյուզանդական Ողիմպոս լեռան ստորոտը շինված այս քաղաքը, ունեցած է հայ գաղութ մը:

* Վերջերս ամերիկահայ մը նախաձեռնարկ եղած էր իր Նյութական ձեռնարկութեամբը պատրաստել սայլու և հրատարակելու Արեւմտյան Փոքր Ասիոյ գրեթէ բոլոր հայրենակ վայրերու գաղութներուն պատմութիւնը:

Այս նպատակով կազմված էր Հայկաթի մեջ հանձնարարութեամբ մը, որուն մինչև հիմա կատարած աշխատանքին մասին տեղեկութիւն չունիմ:

Նպաստ մը բերելու համար այս գործին, Բրուսայի հայ գաղութին մասին մտաւարակապես երևտուն տարի առաջ պատրաստած մեկ աշխատութեանս, որ ցարդ անտիպ կմնա, մաս մը հրատարակութեան կուտամ, հուսալով որ դուրսն օգուտ մը բնծայած կըլլամ գիրքը պատրաստողներուն: — Ա. Ա.:

Մասնավորապես հիշատակելի է, որ Ողիմպոս լեռը, ինչպես հեթանոսական, նույնպես քրիստոնեական շրջանին, նվիրական նկատված է:

Հոն հաստատված էին վանքեր մենակյացներու համար և պատմութիւնը կհիշատակե, թե հոն այդ վանքերու մեջ, ինչպես Բյուզանդական կայսրութեան բազմաթիվ մենաստաններու մեջ, ավելորդ է ըսել հունադավան, հայեր զոյւթյուն ունեցած են: Այսպես, պատմութեանն զիտնեք, թե Մամիկոնյան հայ կայսրուհին՝ Թեոդորայի իշխանութեան օրերուն կհիշվին անունները Ողիմպոսի հունական մենաստաններուն հայ ճգնավորներուն:

Թեոդորա իր ամուսինին, Թեոփիլոս կայսեր մահէն ետք, պատկերապաշտութեան հարեցավ իր խորհրդականին և նախարարին՝ ներքինի Թեոկտեստի խորհրդով, որուն համաձայն էին նաև բազմաթիվ վանականներ, առաջնորդութեամբ Մեթոդիոս անուն եպիսկոպոսի մը: Կպատմվի, թե պատկերապաշտութեան շարժումին իսկական դեկավարներն էին Ողիմպոս լեռան երեք ճգնավորները՝ Հովհաննիկ, Արշակ և Տուայի, որոնցմէ գոնե երկրորդը առանց կասկածի հայ մըն էր: Այս երեք մենակյացներն Հովհաննիկ նախատեսող զուշակի համրավ կվայելեր, վասնզի 855-ին Միքայել կայսեր հրոսնացուներուն շարքին հիշատակված երկու կապաղովկացի քույրերն էին՝ Իրտնե,

համաձայն իր գոյակության, փոխանակ կայսերական ժիրանիի, վանականի սքեմ կրնդունի և կմտնե խրիստոբուլանդ (Ոսկե պարկ) մենաստանը Ասպարի ավազանին մոտ՝ (Acta Sanct. Iulii, 28, Vol. VI, 602):

Մյուս երկու մենակյացներն էլ կթվին ըլլալ ազդեցիկ վանականներ, որոնք Մեթոդիոս եպիսկոպոսի միջոցով դիմած են կայսրուհիին և առաջարկած վերահաստատել պատկերներու պաշտամունքը (տե՛ս De Theophylact Imp. Absolutione Analecta Byzantina, Russica, էջ 25. Ն. Աղոնց, «Պատմական ուսումնասիրություններ», Փարիզ, 1948, էջ 444):

Կպատմվի, թե կայսրուհին և ժերակույտը հարցուցած են Նովահանիկին, թե ո՞վ է արժանի պատրիարքական գահուն և ան հանձնարարած է Մեթոդիոսը, մինչ այդ ժամանակ ավելի ժողովրդական էր ուրիշ եպիսկոպոս մը՝ Միքայել Կինկելի (Ն. Աղոնց, նույնը, առնելով Vita Michaelis Synceilli [Zvestia Konst. Instituta, XI, էջ 249, ուսերեն գործեն]):

Հավանական է որ Մեթոդիոս հաջողած է տիեզերական պատրիարքի աթոռը գրավել շնորհիվ Քեոկղիատին, որ այս փառասեր եպիսկոպոսը իր կողմը շահած էր զայն, հրապուրելով պատրիարքության խոստումով (Ն. Աղոնց, նույն, էջ 444):

Մեթոդիոս, որ աննշան և անարժեք մեկը չէր, այլ գիտնական անձ մը, (ևեռն Հայկազնի կայսեր օրով պատկերամարտության դեմ ելած էր) Պահ մը չոտմ գացած էր և Միքայելի Բ-ի ատեն դարձած՝ Կոստանդնուպոլիս, ուր բանտարկված էր 221—228 (Vita Methodii, Migne, P. G, 100, col. 1249, կամ Ն. Աղոնց, նույն, էջ 444):

Քեոփիլ գայն արձակած էր և պայատին մեջ պահած, չոն մտերմացած էր Քեոփիլի հետ և դարձած էր ճկունությամբ պատկերամարտ և սիրելի կայսեր:

Քեոփիլի մահեն ետք, ազդեցիկ Քեոկրիստին հետ միանալով, կրկին պատկերապաշտության հարեցավ, և իրեն գործակից ունեցավ լեոան վերոհիշյալ ճգնավորները, որոնցմե մեկը ապահովաբար հայ, ինչպես տեսնվեցավ:

Քեռև ուրիշ շատ հայ ճգնավորներ ալ ապրած են նույն մենաստաններում մեջ:

Իսկ քաղաքը, որքան որ ալ այն ատեն աննշան եղած ըլլար, շատ հավանական է, որ ուներ առավել կամ նվազ թվով հայ բնակիչներ, քանի որ բովանդակ Անատոլուն մեկ ծայրեն մյուսը լեցուն էր հայերով և գրեթե չկար քաղաք մը, որ հայ բնակիչներ ունեցած չըլլար:

Ասոր ապացույցները շատ են և ավելի աննշան քաղաքներ ունեցած են հայ գաղութներ, նույնիսկ Բրուսայի մոտավոր շրջանակին մեջ, ինչպես էր Նիկիո հունադավան հայ եպիսկոպոսը Վահան, զոր 882-ին Փոս պատրիարք իր պատվիրակ Հայաստան դրկած է (Զամյան, «Պատմութիւն հայոց», Բ հատ., էջ 685—688):

Այսպես, վավերական վկայություն մը ունինք ապահովաբար ԺԲ դարու վերջերեն և ԺԳ դարու սկիզբն, քանի որ 1204-ին կհիշվի, թե հայկական ստվար գաղութ մը կար հաստատված Տրովադայի շրջակայքը, այսինքն Բրուսայի արևմտյան կողմը, Գարգանելի նեղուցն դեպի ասիական կողմը, հին Տրովադայի շրջակայքը կամ արդի Պիղալի սանջագին մեջ (տե՛ս William Miller², Նիկիո կայսրությունը և Կոստանդնուպոլսո վերագրավումը, «Cambridge medieval history», IV, 479):

Այս առթիվ խիստ հետաքրքրական է հիշատակել, թե Կոստանդնուպոլսո լատին կայսեր եղբորը՝ Հենրիի հրամանին տակ գտնվող զորասյուն մը, հրավեր ստացած է Տրովադա բնակող հայերեն, որոնք բառ Ուիլյամ Միլլերի, շահվանաբար կպատկանեին լատին հավատքին (նույն, էջ 481), ինչ որ շատ անմեկնելի իրողություն մը չէր, քանի որ այդ հողերը կպատկանեին այդ միջոցին Կոստանդնուպոլսո լատին կայսրության:

Լատին կայսրությունը կործանեցին Պալեոլոգները, 1261-ին, Կոստանդնուպոլիսը և շրջակայքը կցեցին Բյուզանդական կայսրության, որ երկու հայրուր տարիներու օրհաս մը ունեցավ, հետզհետե կորսնցնելով իր հողերը, որոնք կնվաճվեին օսմանցի թուրքերեն, մինչև որ 1453-ին իր մայրաքաղաքն ալ գրավվեցավ և վերջ գտավ:

Այդ գրավված շրջաններն մին էր Բրուսան, որ սուլթան Օսման 1326-ին վերջապես գրավեց և իր մայրաքաղաքը ըրավ:

¹ Այս մենաստանը կառուցված էր Կոստանդնուպոլիս, Ասպարի ավազանին մոտ, որ է այժմ Զուլուր բոստանը, Քեֆելի մզկիթին մոտ, Էտիքեն Գափուի մոտ:

² Գասախոս Օքսֆորդի Հարգֆորդ կոլեջին և պատվակալ անդամ Չոնաստանի Ազգային համալսարանին:

Ք. ՀԱՅԵՐԸ ՕՍՄԱՆՑԻՆՆՐՈՒ ԳՐԱՎՈՒՄԵՆ ԵՏՔ

Բրուսայի գրավման ատեն տակավին հայ բնակիչները մնացած էին Բրուսայի մեջ, հայտնի չէ՛ Գուցե թրքական գրավումին սարսափը պատճառ եղած էր մասամբ կամ ամբողջովին անոնց հեռացման, սակայն վստահորեն կրնանք ըսել, թե օսմանյան գրավումեն ոչ շատ ետքը, ինչպես օսմանյան տիրապետության ենթարկված ուրիշ քաղաքներու մեջ, հայեր բավական թվով կրնակին Բրուսայի մեջ, գրավումեն հազիվ հարյուր տարի ետքը, և ունեին հոգեոր կազմակերպություն:

Բրուսայի հայերը հոն չեն գացած մեկ անգամեն:

Գտնված հիշատակարաններեն, բերեն բերան պատմվածներեն, բնտանեկան ավանդություններեն, և մանավանդ մասնավորապես գերեզմանաքարերու արձանագրություններեն շատ դյուրին է հետևցնել, թե հայերը Բրուսա եկած են երեք տարբեր շրջանակներե:

Ա. Փոքր Ասիայի, ուր շատ կանուխ հայեր հաստատված կային: Ասոնք պարբերաբար թիչ-թիչ Բրուսա եկած են:

Բ. Կիլիկյան շրջանակեն, բայց մանավանդ Միս քաղաքեն:

Գ. Ժե գարուն սկիզբեն սկսյալ թուրք և պարսիկ երկարատև պատերազմներու հետևանոց Հայաստանի զանազան մասերեն Բրուսայի մեջ տեսնված են գերեզմանաքարեր, որոնց տակ հանգչող հանգուցյալներուն արևելցի, ջուղայեցի, նախիջևանցի, ազուլիսցի, ցզնացի, կիլիկեցի, սսեցի ըլլալը ցույց կուտան:

Այս գաղթականությանց ժամանակամիջոցը որոշելու համար հարկ է պատմության դիմել:

Բրուսա կղզիացյալ անշատ վայր մը չէ, ընդհակառակը ան Փոքր Ասիո ընդհանուր աշխարհամասին մեկ շրջանակը կզրավե. հետևաբար պետք է նախ գտնել, թե ե՞րբ Փոքր Ասիա հայեր գաղթած են: Առձեռն գտնված գրավոր հիշատակարաններեն հանված տեղեկություններեն սա որոշ և հայտնի է, թե նփրատի արևմուտքը հաստատուն հայեր կային ամենահին ժամանակներն սկսյալ, սակայն ասոնց նշանակելի թիվի մը հասնիլը հազիվ թե Ժ գարուն կհասնի: Այդ գարուն մեջ սակայն միայն ետքերդի, Սերաստիո, և մանավանդ Տավրոսի լեռնակողմերուն մեջ սահմանափակված էին: Արևմուտյան Փոքր Ասիո մեջ Բյուզանդական կայսրության երկիրները հաստատված հայերը կրոնական հրաժանքներու ենթարկված էին և այս պատճառով կորսված էին մեծ մասամբ, հետևաբար նոր գաղթական-

ներ իրենց նախորդներուն պես զժվարություններու շահնդիպելու համար կզգուշանային Բյուզանդական երկիրներ գաղթելի: Մասնավորապես Բյուզանդական կայսրության մեջ գաղթականներ հողատեր ըլլալու իրավունքեն զրկված էին և ճորտություն կատարելու պարտավոր: Տուրքերն ալ շատ ծանր էին, հետևաբար հավանական չէ, որ հայ ստվար գաղթականություններ գոյություն ունեցած ըլլան: Սակայն երբ կհաստատվի Իկոնիո Սելջուկյան սուլթանությունը՝ պայմանները կփոխվեն: Մասնավորապես Պետրոս Գետադարձ կաթողիկոսի (1019—1054) կենդանության և անոր մահեն ետք Բյուզանդիոնի ընթացքը, որ կրոնական հայածանքներու վերանորոգությունը գուշակելու տար, թելադիր պատճառներ էին հայոց համար Բյուզանդական երկիրներեն սելջուկյանց երկիրները պատասխանելու:

ԺԱ գարուն մեջ առաջին անգամ Փոքր Ասիո զանազան մասերը հայեր կհաստատվեին, ԺԲ գարուն ընթացքին Իկոնիո շրջակայքը հայեր կբերվեին Մարաշի և Մամուսարի կողմերեն, ԺԳ և ԺԴ դարերուն թաթար աշխարհակալություններ արևելյան գավառներու բնակիչներուն կստիպեին վերստին գաղթականության դիմելու և երթալ ստվարացնելու իրենցմե առաջ գաղթողներուն թիվը:

Այսպես, այս շորս դարերու շրջանին է, որ հետզհետե կբազմանան հայ բնակիչներ Տրապիզոնի, Սերաստիո, Կեսարիո, Իկոնիո, Գաղատիո, Կուտինայի, Բրուսայի, Կոստանդնուպոլսո և այլ մերձավոր քաղաքներու մեջ, ուր հաստատուն բնակության հետքեր գտնվիլ կսկսին այդ թվականներեն սկսյալ:

Ամենեն դիմավորը այդ փաստերուն՝ նույն քաղաքներու անունով, եպիսկոպոսներու հիշատակությունն է, որոնց կհանդիպինք զանազան առիթներով:

Այն թվականներուն դիտելի է, թե Ընդհանրական կաթողիկոսության աթոռը Միս ըլլավով, այդ թեմերուն եպիսկոպոսները Միսի կաթողիկոսներու իրավասության ենթարկված կամ Միսեն ուղարկված էին:

Ուրեմն Սելջուկյանց իշխանության ներքև գտնված հայերը շարունակ Միսի աթոռին հետ հոգեոր հարաբերության մեջ էին և հետևաբար Կիլիկիո հայերը գիտակ էին հայոց այդ շրջանակներու մեջ գտած ընդունելության և հաջողությանը: Հայերը իրենց վայելած դուրությունները կպատրտեին մասնավորապես իրենց ճարտար ձեռքերուն: Անոնք իբր ճարպիկ գործավորներ և բանվորներ աշխատած էին այն հոյակապ շի-

նութուններուն մեջ, զորս Իկոնիոս Աւանդդին սուլթանը (1220—1230) և իր հաջորդները կառուցած էին Մասնավորապես սելջուկ Ռուսի կայսրութեան երկիրներու մեջ իրենց թիվը զգալապէս ավելցած է, այնպէս որ երբ Օսմանյան պետութիւնը հիմնվեցաւ, կուստինյի մեջ գոյութիւն ունեւր մասնավորապէս հախճապակիի արհեստավորներէ բաղկացաւ զաղութ մը, որ երբ երկիրը ընդարձակվեցաւ, նոր գրավված քաղաքներու մեջ ալ տարածվեցաւ: Բրուսան, զոր 1324-ին գրավեց սուլթան Օսման և զայն պետութեան մայրաքաղաքը ըրավ, չէր կրնար լշահագրգռել հայ արհեստավորները և մանրավաճառները: Ուստի կուստինյի, Իկոնիայի և Գարսմայի հայերեն ոմանք եկած հաստատված են Բրուսայ, ինչպէս նաև Թավշանը, Ասարլըք և Բիլիշեք:

1375-ին, Ռուսիայանց թագավորութեան կործանումէն ետք, այս առաջին զաղթականներու վրա կալելուս կիլիկեցի՝ բայց առավելապէս սսեցի զաղթականներու երկրորդ խումբ մը, որ հավանաբար ուղղակի Բրուսա չէ եկած, այլ Անատոլիոի մեջ քանի մը տեղեր կանգ առած, զանազան ճյուղերու բաժնված, աստ անց հատվածներ թողուցած է: Անոնցմէ միայն պզտիկ հատված մըն ալ եկած Բրուսա ինկած է: Այս կարծիքը հաստատել կթվին ոչ միայն տապանաքարերը, այլ նաև Հեթում թագավորին օրով գրված գրչագիր Ավետարանները, որ հավանորեն Կիլիկեցի զաղթականներ իրենց հետ բերած էին, և կպահպանին Բրուսայի եկեղեցիին մեջ:

Այս երկու հատվածներու վրա կալելուս ի վերջո երրորդ խումբ մը, Պարսկաստանի Ատրպատական զավառներ, Ազուլիսներ, Նախիջևաններ, Յղևայնէ կամ պարզապէս Հայաստաններ եկող զաղթականներու խումբ մը, որոնց հետքերը Անատոլիոի ամեն մասերուն մեջ կգտնվին:

Մասնավորապէս նշանակելի է, թէ անեմլսանն կկոչվին զանազան քաղաքներու մեջ այն թաղերը, որոնք հայոց բնակավայր եղած են: Պարսից Հայաստաններ զաղթականներ դեպի Փոքր Ասիա եկած են զանազան թվականներու, սակայն մասնավորապէս ժն դարուն ամենն ավելի զաղթած են, և հաջորդ երկու դարերու մեջ ալ այդ հոսանքը շարունակված է: Դարձալ հարկ է ըսել, թէ այս զաղթականներն ալ ամբողջական և միահամուտ կերպով շն հաստատված Բրուսա, այլ Անատոլիոի զանազան մասերը կայաններ ունեցած են և մասնակի հատվածներ միայն եկած բնակած են Բրուսայ:

Այս իրողութեան հայտնի ապացույցներն են ընտանեկան ինչ-ինչ մականուններ, որոնք մինչև մեր օրերը պահպանած էին և որոնք ցույց կուտային, թէ այդ ընտանիքներուն նախահայրերն ալ ուրկե՛ն եկած էին, Այսպէս Անեմլսանն, Մարաշլըք-օղլու, Մարաշլըք-օղլու մասնականներն հաճախապէս կը գործածական կանուններն էին, Քյոքաբիա-օղլուներ, Թավշանլըք-օղլուներ, Բիլիշիլի-օղլուներ, Մուրադաշլըք-օղլուներ, որոնք ոչ նվազ թիվ մը կկազմեն, ցույց կուտան, թէ Բրուսա տեղափոխված էին կուստինյի Փոքր Ասիո զանազան մասերուն մեջ բնակուցող հաստատող հայերն փոքրիկ հատվածներ: Բրուսայի մեջ բնակ բնակ վտակներու հատվածներ: Բրուսայի մեջ բնակ բնակ վտակներու հատվածներ: Բրուսայի հայերը կկարծեն, թէ իրենց նախնիք Հայաստանն կամ Պարսկաստանն եկած են Չելիպի սուլթան Մուհամմադի (1418—1421) ատեն:

Ավանդութիւնը կհաստատուի, թէ անոնք ընդամենը յոթը տեղուր էին և արքունի հրամանով սրբավայրերու սպասավորութեան կոչված: Անոնք իրր թէ կապրեին իմարեթի թոշակով:

Բոլոր Բրուսայի շրջակա գյուղերու և ավաններու հայերն ալ իրենց մեջ պահած ըլլալով յոթն տեղուրներով հիմնված ըլլալու ավանդութիւնը, տարակուսելի կթվի անոր ճշտութիւնը, մանավանդ Բրուսայի մեջ մինչև 1420-ական թվականները հայեր հաստատված ըլլալը շատ խնդրական է, հավանական է կարծել, թէ Չելիպի սուլթան Մուհամմադի օրով նոր զաղութ մը եկած է, որ հիշալ սուլթանը բնակեցուցած է Պոյաճըր Իսլ Քյոքաբիայի ըսված վայրը, իր անունով կառուցված մզկիթին հանդեպ, որուն շինութեան մեջ աշխատելու եկած էին հայ վարպետները և բանվորները: Այս մզկիթին մեջ, որ արվեստի գեղեցիկ հիշատակարան մըն է, հայերը կրցած են զնտեղել արձանագրութիւններ, որոնցմէ կհասկնալի, թէ ան իրենց ձեռակերտն է: Մասնավորապէս կերևա, թէ մզկիթը բարեղարգված է 1427 թվականին (հիշքեթի) և գործ յարմարեցնել վարպետներու, որոնք ապահովաբար հայեր էին³:

Շատ ավելի տրամաբանական և հավանական է կարծել, թէ սուլթանը, ի նշան գոհունակութեան, հրամայած էր այդ քանի մը տուններուն, որ մզկիթին շինութեան առիթով Բրուսա բերված էին, սահմանել առօրյա ֆոտուլա⁴ այն մզկիթին իմարեթեմ⁵, սովորութիւն մը, որ մինչև վերջերս կպահպար

³ Տե՛ս Եժողովուրդի ձայն, թիվ 618:
⁴ Ֆոտուլա — հացի տեսակ մը:
⁵ Իմարեթ — կարելի է հասկնալ խոհանոց կամ ձրի ճաշարան, ուրկն ճաշ կհալթալթվեր կարոտայներուն:

և այդ քանի մը տուներուն, ով որ ալ ըլլա-
ին հոն բնակողները, կարգէր Ֆոտուլան:

Կարծողներ կան, թէ Պոյաճը-Գուլ-Քյոփ-
րյուսիի անունը այն հայ արհեստավորնե-
րուն հախճապակիի ներկարարներ ըլլալն
առնված է և անկե կոչված է վայրը ԵԼԿա-
ւառ ծառայի կամուրջ: Չեւեպի սուլթան Մու-
համմեդի հրամանով այս հայ վարպետնե-
րու և զործավորներու Բրուսա հաստատվելն
առաջ քաղաքին մեջ հայեր կային: Հայոց ա-
ռաջին բնակավայրն էր Արապա-յաթաղը
Քաղը և իրենց հնագույն գերեզմանատունը՝
Միւրա-Երի, որոնք քաղաքին արևմտյան հա-
րավային կողմերը կգտնվեին:

Այս Քաղին մեջ էր հայերու հնագույն ե-
կեղեցին՝ Ս. Լուսավորիչ, որ կառուցված էր
հայկանորեն թրքաց տիրապետութենէն
(1314) կամ 1375-ի Կիլիկիայէն մեկնող
զարթականներու Բրուսա եկող հատվածին
հոն հաստատվելն քիչ ետք: Այս եկեղեցին
ղեռ գոյութիւն ունէր 1661-ին, վասնզի այդ
թվականին կհիշվի հին ու խարխուլ եկեղե-
ցի մը նույն Քաղին մեջ, որուն անառողջա-
պահիկ հանդամանքը և զիրքը նկատի առ-
նելով, այս Քաղի բնակիչները կխնդրեն Չե-
ւեպի սուլթան Մուհամմեդին իրենք ալ տե-
ղափոխվի իր ձեռքով բերված հայ զաղթա-
կաններու հաստատված Պոյաճը-Գուլ-Քյոփ-
րյուսի Քաղը, որ կգտնվի ստորտուն Բրու-
սայի լավագույն Քաղին՝ Անթ-Բաշիի, զեպի
ուր հայերը կամաց-կամաց կտեղափոխվին:

Հնագույն Արապա-յաթաղի բնակիչներու
մեկ մասն երբ սուլթան Մեհմեդ Չեւեպիի
հրամանով իրենք ալ արտոնութիւն ստու-
ցան Պոյաճը-Գուլ-Քյոփրյուսի փոխադրվե-
ցաւ, այն ատեն հայերը մեծամասնութիւն
կազմեցին Անթ-Բաշիի շուրջը և վերջերս
գրեթէ ամբողջութեամբ հոն ամփոփվեցան:

Այս շրջանին մեջ հայերը կուսենան եր-
կու եկեղեցի ևս: Անոնցմէ առաջինը՝ Ս.
Փետր, համայնորեն շինված է Պոյաճը-Գուլ-
Քյոփրյուսիի և Անթ-Բաշիի կողմերը հայոց
ստվարանալին հետո, այսինքն ժէ գարուն
առաջին քառորդին մեջ:

Այս եկեղեցիին հիշատակ կմնար մինչև
տեղահանութեան թվականը սկիզ մը, որ ժն
դարուն կեսերը (1452 թվականով) Ս. Փետր
եկեղեցիին նվիրված էր: Այս եկեղեցիի տն-
դը, որ Բրուսայի հայերը ավանդաբար ցույց
կուտային, կգտնվեր Անթ-Բաշիի մեջ: Այս
գետիկին մեջ գտնված են քանի մը տապա-
նաքարեր և խաչքարեր, որոնցմէ մեկը կկը-
րեր սա արձանագրութիւնը. «Յիշատակ է
Սսեցի Պեկիճ, ՊԳՓ» (1440), ինչ որ ցույց
կուտա նույն թվականին եկեղեցիին գոյու-
թյուն ունենալը:

Ժէ դարուն սկիզբը՝ 1609-ին, երբ Սիմեոն
դպիր Լեհացի Բրուսա կայցելել, հոն հայերը
ունէին միայն սփայտե ժամատակ միս.
(«Ուղեգրութիւն», էջ 33-35), որ ապահո-
վարար այս եկեղեցին էր:

1641-ին, Կիրակոս Արեւելցի պատրիարքին
այցելութենէն քիչ ետքը, թուրքերը մոլե-
ռանդութեամբ քանդած են այս եկեղեցին, որ
հաջորդ տարին վերաշինված է: 1661-ին,
Նդիազար Այնթաբցիի ժամանակ, Ս. Լուսա-
վորիչ եկեղեցիին հետ այս եկեղեցին ալ
կհիշվի, սակայն համայնորեն քիչ հետո հա-
կերր կհարկադրվին լքել այս եկեղեցին:

Իսկ երկրորդ եկեղեցին՝ Ս. Աստվածածիւ.
համայնորեն շինված պետք է ըլլա ավելի ուշ՝
ԺԶ գարուն մեջ: Այս եկեղեցին նորագած է
նախ Աթանաս եպիսկոպոսը 1617-ին, ինչ-
պես ցույց կուտա ճաշոցի մը հիշատակա-
րանը, և ապա՝ Նդիազար Այնթաբցի, որ
1661 Նոյեմբեր 16-ին սմեծապայծառ հիմ-
նարկութեամբ կնորոգեց այս եկեղեցին,
ճհանդերձ հարաւային վանքովն և հիւսի-
սային վերնատնին և աղբեր չրոյն, որ հո-
սի յաջ և ահեակ սրբոյ եկեղեցոյս»:

Այս հիշատակարանները ցույց կուտան,
թէ Նդիազար Այնթաբցի բոլորովին նոր ե-
կեղեցի մը չէ շինած, այլ գտնված եկեղեցին
նորոգած է:

1783-ին այս եկեղեցին, որ փայտաշեն էր,
չափազանց հինցած էր, ուստի կձեռնարկվի
վերանորոգել: 1794-ին սակայն հաղիվ կա-
րելի կըլլա գործի սկսիլ: Նույն տարվոյն
մարտ 26-ին հիմնարկութիւնը կկատարվի և
ապրիլ 8-ին՝ Չատուկ Երազալույցի, տանի-
քը կծածկվի և տարք օր հետո՝ ապրիլ 18-ին,
Նոր Կիրակի օրը, տակավին շինութիւնը չէր
ավարտած, երբ թուրքերը դիտմամբ կայրեն
այս եկեղեցին: Պողոս եպիսկոպոս Գարագաշ
անվհատ համբերատարութեամբ մը նույն
տարին, սեպտեմբերին, դարձալ շինութեան
կձեռնարկե և Նոյեմբերին կհաջողին ավար-
տել: Այս շենքն ալ այրած է 1863-ի հրդեհին

« Հետաքրքրական է ավելցնել, թէ 1820—1835-ի
միջոցներու ալ Բրուսայի հայոց եկեղեցիներն մեկը
թուրքերը քանդած են, սակայն որոշ հայտնի չէ թէ
ո՞րը: Համանակաւ է կարծել, թէ այդ եկեղեցին պի-
տի ըլլա հնագույնը, այսինքն Ս. Գևորգը կամ Ս.
Աստվածածինը, որ 1617-էն հետո անգամ մըն ալ
զո՛ւր զացած կըլլա թրքական մոլեռանդութեան: Այս
տեղեկութեան աղբյուրն է Գրիգոր Դարանազի, որ
էտիրեն Գափուի Ս. Նիկողոս եկեղեցւոյն թուրքերու
կողմէ զրավման վրա խոսած ատեն անոր թելադիր
ցույց կուտա ժամանակին մյուսթիւն և անոր որդին:
Այս առթիվ մասնավորելով խոսքը տղուն վրա, կըսե-
թէ «զՊուրսայու ժամատեղի խափանեաց և իրանեց
նայիպն այլ գմեր հին եկեղեցոյն պատճառ նդն կոր-
ծանման» (տե՛ս սժամանակագրութիւն», էջ 516):

և անոր տեղը կառուցված է 1866-ին Գևորգ եպիսկոպոսի (հետո կաթողիկոս) ձեռքով Բրուսայի հայոց հոյակապ միակ եկեղեցին։ Բրուսայի հայ գաղութը թուրք խուժանի խիստ ճնշման տակ գտնված է. ինչ որ կհաստատվի 1641-ին Ս. Գևորգ և 1793-ին՝ Ս. Աստվածածին եկեղեցիներուն վրա խուժանի կատարած հարձակումներով և քանդումներով։ Մինչև տեղահանություն կպահպանվին կարգ մը հրովարտակներ, որոնք կարտունեին շայ Եկեղեցվոց արարողությանց և պաշտամանք անխափան կատարումը, ինչ որ փաստեր են, թե անոնք իսլամ մոլեռանդության կողմն երբեմն արգելքի կենթարկվեին։

Այսպես պահված էր Քրիստոսի 1594 թվականին շնորհված հրովարտակ մը, որով հայերը կարտունվեին եկեղեցիին մեջ իրենց սեփական լեզվով սեպուհայեցի-ու։

1641-ին, երբ իսլամ մոլեռանդներու կողմն կքանդվի Ս. Գևորգ եկեղեցին, կերևա, թե ոչ միայն եկեղեցվո շինությունը, այլ հայ լեզվով պաշտամունքին կատարումը կհանգիսի մեծ դժվարության, և ո՞վ գիտն հայերը ինչպիսի ջանքերով կհաշողին 1647-ին ձեռք բերելու երկրորդ հրովարտակ մը, որ կհաստատվի 1594-ի արտունությունները։

Իսլամ մոլեռանդ խուժանը, որ չէր հանդուրժեր եկեղեցիին ներս իսկ հայ բարբառին գործածությունը, բնական է, որ երբեք պիտի չհանդուրժեր անոր առօրյա գործունեության սովորական կյանքին մեջ։ Հետևաբար Բրուսայի հայերը բուն դարձած են թրքախոս, ազատվելու համար թրքական սարսափեն, որ շարունակ կճնշերու Բրուսայի մեջ տիրող մըթնությունը բացատրելու և հակաքրիստոսյա հոգիին որքան տարածված ըլլալը պարզելու համար կրավել ըսել, թե Բրուսան այն վայրերն են, ուր ամենն ուր, հազիվ 1906—1907 թվականներուն կարելի եղած է կուրնակը զանգափի փոխել, այդքան հակառակ էին տեղվույն թուրքերը քրիստոսյաններուն և անոնց կրօնը հիշեցնող քաներուն դեմ։

Այս պատճառով, երբեք մեղադրելի չէ, երբ Բրուսայի հայերը դարձած են թրքախոս, մինչ շրջակա հայ բնակչությունը մեծավ մասամբ պահած էր իր մայրենի լեզուն քացի ԵՔԻ-Շեհիբե, որուն հայ բնակիչները հավանորեն Բրուսայն գաղթած էին։ Իսկ շրջակա հայախոս գյուղերը ժէ դարուն սկիզբը Հայաստանի և Փոքր Ասիո մեջ ջելալիներու հարուցած խառնակության հետևանքով Կոստանդնուպոլիս, Քրակիա և Նիկոմիդիո շուրջը խույս տվող հայ գաղթականության մասերն են, և ժամանակով բավական կրտսեր են Բրուսայի գաղութեն, ինչ որ պատճառ մըն էր անոնց նվազ թրքական մոլեռանդության հետևանքները կրելուն։

Այսպես, Բրուսայի առաջնորդության ենթակա երբեմնի հայաբնակ վայրերն են, ԵՔԻ-Շեհի հայերը գիտեն, թե ժՁ դարուն վերջերը օրի հայերն կողմերն յոթը տնվոր եկած, գյուղերգրումի կողմերն յոթը տնվոր եկած, գյուղերն քառորդ ժամ հետու էտներն գյուղը աղեն քառորդ ժամ հետու էտներն գյուղը աղեն գրադած են իրենց մայրենի արվեստով, տակ գրադած են իրենց մայրենի արվեստով, Բայը բելը տեսնելով անոնց մրջնաշան աշխատությունն ու վտարանդի կյանքը, պաշտոնական թափուով, ընդարձակ ու սահմանավոր վայր մը կնվիրե, ուր եռանկյունաձև դիրքով կշինեն իրենց տնակները, որոնց հետևությունները հոս կցկտուր կգտնվին⁷։

Նման պայմաններով և նույն ժամանակամիջոցներուն հաստատված են հավանորեն նաև Սյալիզի, Ջեբրանի, Մարմարազի, Քարսաբի և Կյուրլիի հայ գաղութները, որոնց նախնական բնակավայրերը և գաղթականություն որոշ թվականը բացարձակապես և ստույգ վավերագրներով ճշտել կարելի չէ, սակայն, կենդանի մնացած ավանդությանց համաձայն, սյուրեցիք կկարծվին գաղթած ըլլալ Աքուչեխեն⁸, շերթահիթ⁹ Պարսկաստանն, ըստ Հ. արքեպիսկոպոս Արշարունիի՝ Մալմաստի և իույի շրջանն, բենլիցիթ¹⁰՝ Խարբերդի Մոլթ գյուղն⁸, քարսաբիցի և Կյուրլիցիթ՝ Վանն և Ակնեն¹⁰, իսկ մարմարազիցիք բնավ չեն պահած իրենց մեջ որեէ ավանդություն։

Այս գաղութները, որոնք ունին 250—300 տարվան հետևություն, երբեմն մեկե ավելի գաղութներ ընդունած են, այնպես որ տեղական ավանդությունները կրնան շատ անգամ իրականության հետ շատ համապատասխան լըլալ։

⁷ Բիւրակն, 1896, էջ 866. Հովհաննես աբեպիսկոպոս Արշարունի կկարծե, թե ԵՔԻՇի հայերը Խարբերդն եկած են։

⁸ Տե՛ս «Արեւիկ», ք. 4796. Վ. Գուրն իր աշխարհագրության մեջ կվկայե, թե սյուրեցիք գաղթած են Վանն և Խարբերդն ժէ դարուն, քուրդերու ճնշումն ազատվելու համար։ Ազգային ավանդությունը և այս օտար վկայությունը իրարու հետ կհաշտվին, եթե նկատի առնենք, որ ժեր ապուլեիցիք, ինչպես Ակնա բուր շրջակայքը, Վանա գաղութ են և Ակն շատ հետու չէ Խարբերդն և անոր ենթակա քաղաք մըն է։

⁹ Հավանական է կարծել, որ երկու տեղերն ալ եկած են կամ իրենց ծագման մասին պահված ավանդությունը պահած ըլլա երկու վայրերուն անունները սա հիման վրա, որ Ակն ալ արդեն Վանա գաղութ մըն է։

¹⁰ Ավանդություն մը, չենք գիտեր որքան հիմնավոր, գյուղի հիմնադիրներուն հոն գալուն պատճառ ցույց կուտա քուրդ աղլիան մը առանկումը։

(Շարունակելի)



2. ԵՂԻՉԱՐՑԱՆ

(Պատմական գիտությունների
քննաձև, ճեղքում)

ՆՈՐ ԳԵՏԿԱ ՎԱՆՔ ԿԱՄ ԳՈՇԱՎԱՆՔ*

Ր. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՏԻՄ-ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գոշավանքի հուշարձանների խումբը յաղկացած է հինգ եկեղեցուց, երեք մատուռից, զավիթից, ժամատնից, գրատնից, զանգակատնից, Գրանց մի նկատելի մասը պատկանում է հայ արվեստի ու ճարտարապետության առաջնակարգ կոթողների թվին, իսկ վանքի մեծ թիվ կաղմող վիճադրություններն արժեքավոր նյութ են հայ պատմագրության համար:

Ա) Ս. Աստվածածին եկեղեցի.— Վանքի գլխավոր եկեղեցին է. գտնվում է հուշարձանների խմբի համարյա կենտրոնում: Նրա կառուցման մասին, բացի Կիրակոս Գանձակեցուց մեջ բերված տեղեկությունից, հուշարձանի վրա պահպանվել է նաև հետևյալ շինարարական արձանագրությունը. «ԽՈՍ. զկեի Գամաց առնլո զԵՐՈՍԱՊԷՄ Ասյանատեիև, սկսեալ եկեղեցիս սուրբ ի նորո Գեառիկ և կատարի յամս Օ. ի խանգար Ջատկին յունաց, ձեռամբ վարդապետին Մխիթարայ, ի ճայրութեան վարդանայ, ձեռնաութեամբ բարեպաշտ իշխանին Վախտանգայ և նորին զուգակցի՝ Արզախաթունի և նորին եղբարզն՝ Սմայատայ, Վասակայ, Խոյղնայ, Գրիգորիսի և նոցին զաւակացն, լիցի նոցա պատարագ յեկեղեցիս ի տաւնի Աուրբ Աստուածածնի յՎաուրսն, բայց զԱՀասանա՝ ճաւր Վախտանգա և զԱմաւր նոցին՝ Մամին և Բճաւր Արզախաթունի՝ Քրդին բարեպաշ-

տին՝ անխափան: Ձաէր Գրիգորէս յիշեցէլ ի Քրիստոս»²⁵:

Ինչպես տեսնում ենք, ոչ Գանձակեցու մտտ, ոչ էլ այդ արձանագրության մեջ որոշակի չի նշված եկեղեցու շինությունն ավարտելու տարեթիվը: Եթե հաշվելու լինենք ըստ տարեթվերի, ապա նրա ավարտումը պետք է տեղի ունեցած լինի 1195 թվականին, որովհետև վերը նշված երկու դեպքերում էլ, եկեղեցու կառուցումը սկսվել է հայոց ՈՍ, այսինքն՝ մեր թվագրության 1191 թվականին և ավարտվել հինգ տարում՝ Սոազատկի օրը, իսկ եթե հաշվելու լինենք լրիվ տարիներով, նրա ավարտումը տեղի պետք է ունեցած լինի 1196 թվականին:

Գրանվից զատ, Սոազատկիը, ինչպես այդ մասին վկայում են պատմական աղբյուրները, տեղի է ունեցել 1197 թվականին: Այդպիսով, եկեղեցու շինությունն ավարտելու ժամանակի վերաբերյալ ստացվում են երեք տարբեր տարեթվեր՝ 1195, 1196 և 1197 թվականները: Այդ խնդրի հիշտ լուծման համար դիմենք պատմական աղբյուրների վկայություններին. նախ Սոազատկի մասին:

ԺԲ դարի մատենագիր Մատթեոս Ուսանցիին խոսելով Սոազատկի առթիվ ծագած կրոնական վեճերի մասին գրում է. «Գարձեալ ի թուսկանութեան Հայոց ՇՄԱ եղև

* Երրոնակված ամսագրի 1950 թվականի X Ե-ից:

²⁵ Այս արձանագրությունը ներկայումս նկատելի չափով վնասված լինելու պատճառով մեջ ենք դնում Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի հիշված աշխատությունից, որոշ ճշտումներով (էջ 123):



ԳՈՇԱՎԱՆՁ.—ԳԱՎԹԻ ՆԵՐՍԸ

շփոթումն մեծ և ահաւոր խառնակումն հաւատոյ, վասն զի ի Սուրբ Զատիկէն եղեն մալորեալք տասն ազգ հաւատացեալոց, և Լայք և Ասորիք միայն մնացին հաստատուն, իսկ Լոռոմք և Փռանգք եղեն հետևողք շար սերմանցն, զոր սերմանեաց պիղծ հերետիկոսն Իսիդորն... որ հանապազ ածէ մոլորումն Զատիկաց յամէն իննսուն և հինգ ամս:

Ուտհայեցու այդ վկայութեան համաձայն, Սոազատիկը, որին ինքը ականատես է եղել, տեղի է ունեցել հայոց ՇՄԱ՝ մեր թվագրութեան 1102 թվականին և, որ այն սիստեմատիկ կերպով կրկնվել է իննսուն հինգ տարին մեկ, եվ որպեսզի ապացուցի, թե դա իրոք այդպես է, մի փոքր հետո նա շարունակում է. «Եւ արդ, յառաջագոյն եղև այսպիսի մոլորումն Յունաց ի Սուրբ Զատիկին, և յՆրուադէմ ոչ լինէր վառումն կանթեղացն, և յայնժամ այլազգիքն զամենայն հաւատացեալս աղօթականացն սրով կոտորեցին ի յաւուրս Վասիլին և յամի ՆՄՁ թուականին»²⁶,

²⁶ Մատթէոս Ուտհայեցի, «Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1888 թ., էջ 288.

Այդպիսով, Սոազատիկը, որը սիստեմատիկ կերպով կրկնվում է իննսունհինգ տարին մեկ, ինչպես այդ մասին տեղեկացնում է Ուտհայեցին, տեղի է ունեցել 1007 և 1102 թվականներին, Լեւոնապես հարորդ Սոազատիկը պետք է տեղի ունեցած լինի 1197 թվականին: Այդ մասին տեղեկացնում են ասորի պատմիչները. «Յայսպիսի շփոթութեան աւուրս ծագեցաւ այլ իմն զամուկ մեծ յաշխարհին վրաց՝ ի մէջ նոցա և ի մէջ հարոց, որք անդն կային, որոց պատճառն այս եղև, զի յամի Տեառն 1197 և ի թուին Լայոց ՈեՁ, դարձեալ դիպաւ այլայլութիւն Զատիկի, որ ասի Սոազատիկ, որպէս և եղեալն էր իննսուն և հինգ ամօց յառաջ՝ յաւուրս Գրիգորի Վկայասիրի... Եւ յոչ առնուկ հայոց յանձն տօնել ընդ վրացիս, այլ շարաթով միով յետոյ քան զնոսա, սկսան վիճել և կազել ընդ միմեանս. և ֆ սաստկանալ կոտույն՝ յարձակեցան վիրք ի մին յեկեղեցեացն հայոց (թերևս ի Տիփսիս քաղաքի) և հրձիգ արարին զայն. յորում այրեցան ոգիք քառասուն, ի ղէն ընթացան յայնժամ հայք՝ առնուկ միարան զվրէժ ի վրաց. և դղրդեցաւ քաղաքն ամենայն. և շեղև նոցա այլազգ խաղաղել զհայս, բայց եթէ վճարելով հարիւր հազար դահեկան վասն շինութեան եկեղեցտան, և այլ ևս քառասուն հազար դահեկան վասն քառասնից՝ որք այրեցան յեկեղեցուդ անդ: Զայս պատմէ նախայիշատակեալդ Բարեբրեյուս Գրիգոր Ապուկ Փարաք ասորի՝ առ Աստեմանեայս (հատ. Բ, դ. 42)²⁷,

Ասորի պատմիչի վերը մեջ բերած վկայութիւնից հաստատ է դառնում, որ Սոազատիկը տեղի է ունեցել 1197 թվականին. հետևապես Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումը պետք է ավարտված լիներ այդ նույն տարում:

Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման ավարտելու մասին, բացի վերը մեջ բերվածից, հիշատակութիւն կա նաև եկեղեցեակն գրականութեան մեջ: Լայսմավուրթի՝ Գոշի վարքին վերաբերող հատվածում ասվում է, որ Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումն ավարտվել է 1196 թվականին և այդ ժամանակ էլ Գոշը մեկնել է Նրուադեմ:

Այդ բոլորից միանգամայն պարզ է դառնում, որ Աստվածածին եկեղեցու կառուցումը, որը սկսվել էր 1191 թվականին, տևել է հինգ լրիվ տարի, ուստի և ավարտվել է 1196 թվականին:

Գոշի Նրուադեմ ուղևորվելու ժամանակը, մեր կարծիքով, պետք է լինի ոչ թե եկեղեցու կառուցումն ավարտվելուց հետո, ինչպես այդ ենթադրում են, այլ մինչև ավարտվելը,


²⁷ Միլայի վարդապետ Գամլյան, «Գաղտնութիւն հայոց, հատոր Գ, Վենետիկ, 1786 թ., էջ 161:

որովհետև կառուցման արձանագրության մեջ պարզ ասվում է՝ «ձեռամբ վարդապետին Մխիթարա, ի հայրութեան Վարդանաս: Գոշը նրուսաղեմ մեկնելիս իր փոխարեն վանքի առաջնորդ պետք է կարգած լինի Վարդանին»:

Չնայած եկեղեցու կառուցումն ավարտված է լինում 1196 թվականին, բայց նրա օծումը, Գոշի բացակայության պատճառով, տեղի չի ունենում: Միայն Գոշի նրուսաղեմից վերապահված «հետո՝ 1197 թվականին կատարվում է եկեղեցու հանդիսավոր օծումը՝ Մուսատիի օրը: Որ Աստվածածին եկեղեցու

Սաղունը, իսկ Վախթանգ իշխանի կին Աղոսիսաթունը, որը Քուրթ իշխանի գուստրն էր, իր դուստրների հետ միասին այժմ փափուկ մազից գործում է եկեղեցու վարագույրը՝ գույնզգույն նախշերով ու սրբապատկերներով զարդարված: Եվ ոչ միայն այդ եկեղեցու, այլև Հաղբատա վանքի, Մակարավանքի և Դաղիվանքի եկեղեցիների վարագույրները: Այդ բոլորի մասին մանրամասն պատմում է Կիրակոս Գանձակեցին (էջ 203—204):

Եկեղեցու կառուցմանը օժանդակում է նաև ոմն Անտոն՝ կառուցելով նրա խորաններից



ԳՈՇԱՎԱՆՔ.— Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԻՆՁ ՎԵՐԱԼՈՐՈՎՈՒՄԸ

կառուցումը, որն սկսվել էր 1191 թվականին, ավարտվել է 1196 թվականին, իսկ օծումը կատարվել 1197 թվականին՝ Մուսատիի օրը, ընդունում է նաև Հ. Զանփուլադյանը²⁸:

Եկեղեցու կառուցմանը մեծ շարժում օժանդակում են Հաթերգի տեր Վախթանգ իշխանը, նրա եղբայրներ Սմբատը, Գրիգորը, Վասակը, Խոյզանը, Գրիգորիսը, Կնչպես և Գոշի բարեկամ Քուրթ իշխանի որդիներ Դավիթն ու

մեկը, որի մասին հիշատակվում է եկեղեցու ներսում եղած հետևյալ արձանագրության մեջ. «Այս խորանս Անտոնի արղեամբ է շինած և ի տառնի Անտոնի պատարագն Անտոնի և իւր արղոցն. խափանողն զատին»:

Ս. Աստվածածին եկեղեցին զմրեթավոր մեծ կառուցվածք է, երկարածիկ, ուղիղ քառանկյունի հատակագծով: Արևելյան կողմում ունի կիսակլոր արսիզ, զուրս շեշտված բեմով, զնպի ուր բարձրանում են ծայրերում եղած քառաստիճան քարե սանդղակներով: Արսիզի երկու կողմերում կան երկհարկանի խորաններ, որոնք արևելյան կողմից ունեն կի-

28 Հովհաննիս Զանփուլադյան, «Մխիթար Գոշը և նոր Գեաղիկի վանքը»: Առանձնատիպ Պետական պատմական թանգարանի «Աշխատություններ»-ի հատ. Ա-ից, Երևան, 1948 թ.:



ԳՈՇԱՎԱՆՑ.— Ս. ԳՐԻԳՈՐ ԵՎԵՂԵՑԻՆ
ՎԵՐԱՆՈՐՈՒՄԻՆԻՍ ԶԵՏՈ

սակնոր փոքրիկ արսիզներ: Ստորին հարկի խորանների դռները բացվում են դեպի արևմուտք՝ եկեղեցու մեջ, փակ վերին հարկի խորանների դռները բացվում են արսիզի մեջ՝ իրար դիմաց:

Հարավային և հյուսիսային պատերը ներսից ունեն ելուստապատեր, որոնց ծայրերից, ինչպես և արսիզի եզրերից ձգվող կիսասյուների միանալով կամարներով իրենց վրա կրում են լայնանիստ, կլոր թմբուկով ու սրածայր վեղարով գմբեթը: Գլխավոր մուտքը արևմտյան կողմից է, որը բացվում է դալթի մեջ. մի ուրիշ մուտք էլ բացվում է հյուսիսային կողմից: Երկու մուտքերն էլ ունեն կիսաշրջան ճակատակալ մեծ քարեր և գեղազարդ պարակալներ:

Ծածկը թաղապատ է, քառաճակատ, երկթեք տանիքով: Յուրաքանչյուր ճակատից բացվում է մեկական երկար ու նեղ լուսամուտ: Գրանց համապատասխան, նույնաձև, համեմատաբար փոքր լուսամուտներ էլ բացվում են գմբեթի թմբուկի շտա կողերի մեջ: Արևելյան և հարավային պատերի մեջ, արտաքուստ, կան երկուական կամարակապ խոր խորշեր:

Կառուցված է վարդագույն տուֆի սրբատաշ մեծ քարերով՝ կրաշաղախով մածուցված. սալահատակած է, տանիքը պատած է սալաքարերով: Կանգուն է. թափված են տանիքի սալաքարերի մեծ մասը, հաճախակի ստորերկրյա ցնցումների հետևանքով գմբեթում առաջացել են մի շարք ճեղքեր, որից գմբեթը գտնվում է խիստ քայքայված ու խարխուլ վիճակում, 1939 թվականի վերանորոգումների ժամանակ գմբեթի թմբուկը ժամանակավորապես ամրացված է երկաթյա լախաշերտ գոտիներով:

1959 թվականին նախատեսվում է ամբողջապես հավաքել և նորից վերաշարել գմբեթը, ամբողջ տանիքը պատել նոր սալաքարերով, ինչպես և վերականգնել թափված երեսապատ քարերն ու քիվերը:

Ք) Գավիթ.— Գտնվում է Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան կողմում՝ կից: Կառուցել է Մխիթար Գոշը ԺՔ դարի վերջերին Զաքարի և Իվանե եղբայրների օժանդակությամբ: Քառակուսի հատակագիծ ունեցող խոշոր կառուցվածք է. չորս ամբողջական սյունները և տասը կիսասյունները միանալով կամարներով կազմում են թաղակապ ծածկը. կենտրոնում հատուկ լուսանցքով՝ երդիկով: Սյունների և կիսասյունների ընկերը, խարխախներն ու խոյակները ամբողջական մեծ քարերից են՝ երկրաչափական ձևերի ու ստալակտիկ զարդաքանդակներով: Արևելյան անկյունում կան երկհարկանի խորաններ, որոնք արևելյան կողմից ունեն կիսակլոր փոքրիկ արսիզներ: Գեպի վերին հարկի խորանները քարձրանում են Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան պատին կից քարյա սանդուխտներով:

Գլխավոր մուտքը արևմտյան կողմից է՝ ճակատակալ մեծ քարով ու պարակալով: Մի փոքր մուտք էլ բացվում է հյուսիսային կողմից, որը տանում է դեպի գրատան սրահը: Արևմտյան պատի մեջ բացվում են երեք, իսկ մյուս պատերի մեջ՝ երկուական փոքր լուսամուտներ: Գավթի ներսում, Աստվածածին եկեղեցու արևմտյան պատին կից, դուռն երկու կողմերում, պատի ամբողջ երկարությամբ պահպանվել են խաչարձանների պատվանդանները:

Գավթի պատերն ու ծածկը շարված են վարդագույն տուֆի սրբատաշ մեծ քարերով, իսկ սյուններն ու կիսասյունները՝ մուգ մոխրագույն բազալտի սրբատաշ քարերով: Երդիկը ներսից զարդարված է երկրաչափական ձևերի ու ստալակտիտ՝ շատ նուրբ ձևով մշակված քանդակներով: Կանգուն է, մասնակի նախատումներով, թափված են տանիքի ողջ սալաքարերը, հարավային և արևմտյան պատերի քիվերը, քանդված են այդ պատերի

վերին քարաշարերը և հյուսիս-արևմտյան արտաքին անկյունը:


Նախատեսվում է 1959 թվականին ամբողջապես վերականգնել բնադաված մասերը և տանիքը պատել նոր սալաքարերով:

Գ) Ս. Գրիգոր եկեղեցի.— Գտնվում է Ս. Աստվածածին եկեղեցու հարավային կողմում: Կառուցել է Գոշին հաջորդող Մարտիրոս առաջնորդը, Կապալեցի Գրիգոր իշխանի օժանդակությամբ, 1231—1241 թվականների ժամանակաշրջանում: Այդ եկեղեցու կառուցման մասին, բացի վերը մեջ բերված մատենագրական տեղեկություններից, շենքի մուտքի ճակատաքարի ու կամարաքարի վրա պահպանվել է նաև նրա կառուցմանը վերաբերող հետևյալ արձանագրությունը. «Յուսովն Աստուծոյ :Բ: եղբարես՝ Մարտիրոս: և Գրիգոր: և Ասել: Քամար: Արէլ և Փերաւոժ շինեցին զեկեղեցիս ի Սավոս: տեկեցին զայգին: Տէր Յովնաննէս և միայրանես էտուն նոցա պատարագ զեկեղեցի սուրբ տաւնն Սրբոյն Գրիգորի: զԵ: խորանս Մարտիրոսի, Գրիգորի, Փերաւոժին, Քամարի, Նազխաթունին և Մաթէասի՝ անխափան: Կատարիչն արձնին յԱստուծոյ: ՈՉ»: (1231 թ.):

Ժամանակի պատմական աղբյուրների տեղեկությունների համաձայն, այդ եկեղեցու կառուցումը դեռ չավարտված, սկսվող Ջալալեդդինի և ապա մոնղոլական արշավանքների հետևանքով ընդհատվում է նրա կառուցումը և որոշ ժամանակ հետո նորից շարունակվում և ավարտվում է: Գանձակեցին շենքի կառուցման ավարտումը դնում է ՈՂ (1241) թվականին՝ «աւարտեաց զնա ի ՈՂ թուականին» (էջ 210), մինչդեռ շինարարական արձանագրության մեջ նըշված է 1231 թվականը: Հավանական է, որ կառուցումն սկսված լինի 1231 թվականին և որոշ ընդմիջումից հետո, շարունակված ու ավարտված լինի 1241 թվականին:

Ս. Գրիգոր եկեղեցու կառուցմանը, բացի Կապալեցի Գրիգոր իշխանից, իրենց նյութական միջոցներով օժանդակել են և ուրիշները, ինչպես այդ մասին վկայում են ստորև մեջ բերված արձանագրությունները:

Հարավային ստորին խորանի մուտքի վերևում. «Մեք եղբարես Արամայ, Արուտամր և Հայրազնդ զմեր հոգւոյ առդիմես յեկեղեցոյ շինութիւնս տուաք յուսով. և մի աւր պատարագ ի տաւնի Սրբոյն Մարգարի մեզ հաստատեցին: Խափանողին դատին»:



ԳՈՇԱՎԱՆՈ.— Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԷ ԵՎՆԵՃՈՒ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԶԱԿԱՏԸ ՄԻՆՉ ՎԵՐԱՆՈՐԴՈՒՄԸ

Հարավային պատի վրա, ներսից, նախորդի կողքին. «Ես Գրիգոր միաբանեցայ յեղբայրանոցս ետու յիմ վաստակս ի շինութիւն եկեղեցոյս. և ստացայ ինձ :Գ: աւր պատարագ ի տաւնի Սրբոյն Յովնաննու և Յակոբայ...»:

Բացի վերոհիշյալներից, եկեղեցու շինությանը մասնակցել են նաև խաչատուր վարդապետը, կառուցելով հյուսիսային խորանը և Գերզն իր ամուսնու ու զավակների հետ՝ կառուցելով հարավային մի խորանը, որոնց մասին պահպանվել են համապատասխան արձանագրությունները, հետևյալ ձևով.

Հյուսիսային ստորին խորանի մուտքի վերևում. «Ի տաւնի Սուրբ Խային :Ա: աւր պատարագ Խաչատուր վարդապետին և եղբարց իւրաց և ծնողացն զի նոցա ինչիւք շինեցաւ խորանս»:

Հարավային խորանի մուտքի ճակատին. «Մառայն Աստուծոյ Գերգ և ամուսին իւր Կատայ և զաւակսն նոցին շինեցին իւրեանց

ընչիւմ զխորանս : Բ: ար պատարագն ճոցա
 է ի տանի Սրբայն Գէորգայ: Խափածողքն
 դատին ի Տեառնէ»:
 Ս. Գրիգոր եկեղեցին կառուցված է
 Ս. Աստվածածին եկեղեցու ոճով. սա

պնս և արսիդի եզրերից ձգվող կիսասյունե-
 րը միանալով կամարներով, իրենց վրա են
 կրում կլոր թմբուկով զմբեթը: Արևելյան
 կողմից ունի կիսակլոր արսիդ՝ դուրս շեշտ-
 ված բեմով, ուր բարձրանում են ծայրերում



ԳՈՇԱՎԱՆՔ.— Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՅՍՎՈՐԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՃԱՎԱՍՔ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԻՑ ԱՌԱՋ


նույնպես կենտրոնազմբեթ, երկարածիգ
 ուղիղ քառանկյունի հատակագիծ ունեցող,
 համեմատաբար փոքր կառուցվածք է: Հյու-
 սիսային և հարավային պատերին կից, ներ-
 սից, կան ելուստներ, որոնք ծայրերից, ինչ-

եղած քարե սանդուխտներով: Արսիդի երկու
 կողմերում կան երկհարկանի խորաններ.
 ստորին հարկի խորանների դռները բացվում
 են դեպի արևմուտք՝ եկեղեցու մեջ, իսկ վերի

հարկի խորանների դռները՝ արսիդի մեջ, իրար դիմաց:

Միակ մուտքը արևմտյան կողմից է՝ գեղեցկադարձ պարակալով և մեծ ճակատաքարով: Ցուրաքանչյուր ճակատից բացվում


վերի վրա քանդակված են կճուճներ, իսկ ճակատների լուսամուտներն ունեն ուղղանկյուն շրջանակներ՝ երկրաչափական ձևերի դարձաքանդակներով:



ԳՈՇԱՎԱՆՔ.— Ս. ԴՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՔ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎՏՅԱՆ ՃԱԿԱՍԸ ՎԵՐԱՆՈՐԳՈՒՄԻՑ ԶԵՏՈ

է մեկական երկար ու նեղ, կամարակապ լուսամուտ. նույնաձև մեկական, համեմատաբար փոքր լուսամուտներ էլ բացվում են ստորին խորանների արևելյան պատերից՝ ղոտկավոր պսակներով: Վերջիններիս թև-

կրեելյան, հյուսիսային և հարավային պատերի մեջ, արտաքուստ, կան երկուական եռանկյունաձև խոր խորշեր՝ կամարակապ դազաթներով: Հարավային պատի արտաքին երեսի վրա, լուսամուտից ներքև քան-



ՊՈՇԱՎԱՆԷ.— Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՈՅ ԵՎԵՂԵՑՈՒ ՄՈՒՅՑԸ

դակված է արևի շատ զեղեցիկ ժամացույցը, կենտրոնում արևը՝ մարդու դիմանկարով:

Ծածկը թաղկապ է, քառաճակատ, երկթեք տանիքով: Ետքված է սև տուֆի սրբատաշ քարերով, կրաշաղախով: Կանգուն է, մասնակի քանդումներով քանդված է գրմբեթը, որից միայն թմբուկի ստորին քարաշարն է մնում, թափված են տանիքի ողջ սալաքարերը, պատերի քիվերն ու վերին քարաշարերը, խիստ քայքայված է տանիքը, թափված են երեսապատման որոշ քարեր: Բացի 1939 թվականի ընթացիկ մանր նորոգումներից, 1958 թվականին հիմնովին վերականգնված են բոլոր քանդված մասերը: վերականգնված են պատերի քանդված քարաշարերը, քիվերը, վերանորոգված է տանիքը և ամբողջապես ծածկված սալաքարերով: գմբեթի անցքի վրա կառուցված է հատուկ, վեղարածե ծածկ:

Հուշարձանների պահպանության կոմիտեի գիտական խորհուրդը 1939 թվականին նպատակահարմար գտավ, որ հուշարձանների

վերանորոգումների մասին, նախկին օրինակով, արձանագրվեն վերանորոգվող հուշարձանի վրա: Այդ մտահղացումը առաջին անգամ իր գործնական արտահայտությունը գտավ Գոշավանքի 1939 թվականի վերանորոգումների ժամանակ, փորագրելով այն Ս. Գրիգոր եկեղեցու արևմտյան ճակատին, հետևյալ ձևով: «Վերակազմված է V—XI 1939 թվ. Ճարտարապետ Ա. Ավետիսյան, վորմնադիրներ՝ Գ. Ալավերդյան, Վ. Ազամյան, Պ. Հ. Պ. Կ.» (Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի):

Այդ մտահղացումը, սակայն, հետագայում տարածում չգտավ և այդ եզակի գեպղեղ ավարտեց իր պատմությունը:

Դ) Ս. Գրիգոր փոքր եկեղեցի.— Գտնվում է գավթի հարավային կողմում, պատի արևմտյան ծայրին՝ կից, Կառուցել է Մարտիրոս առաջնորդը ԺԳ դարի կեսերին, հավանաբար, վանքի անդրանիկ կառուցվածքի՝ նույնանուն փայտակերտ եկեղեցու տեղում: Այդ հուշարձանը շատ անմասն ու հոյակապ ճարտարապետական մի կոթող է, զարդարված պես-պես ձևերի շքեղ քանդակներով, որոնք մշակված են վերին աստիճանի նուրբ ձևով: Միանավ բազիլիկ ոճի նմանությամբ մի փոքրիկ կառուցվածք է. ծածկը թաղկապ է՝ երկթեք տանիքով:

Արևելյան կողմից ունի կիսակլոր արսիդ համաշափ բեմով, որի երկու կողմում կան մեկական խորաններ, որոնք արևելյան կողմից ունեն փոքր արսիդներ: Հարավային և հյուսիսային պատերի կենտրոնական մասերից ձգվում են մեկական որմնասյուներ, որոնք միանում են առաստաղը զոտկող կամարով: նման որմնասյուներ ձգվում են նաև արսիդի եզրերից, որոնք միանում են արսիդի բացվածքը եզերող կամարով:

Արևելյան և արևմտյան պատերն արտաքուստ զարդարված են գլանաձև որմնասյուներով և դրանց կիսախոյակների վրա հենվող որմնակամարներով: Միակ մուտքը արևմտյան կողմից է, շքեղորեն զարդարված պարակալով ու կիսակլոր ճակատաքարով: Արևելյան պատի կենտրոնից բացվում է պսակազարդ զույգ լուսամուտ՝ խիստ յուրահատուկ և գեղեցիկ ձևով մշակված, մեկական փոքր ու գեղեցիկ լուսամուտներ էլ բացվում են արևմտյան և հարավային պատերից, ինչպես և խորանների արսիդներից:

Ետքված է սև տուֆի մաքուր տաշված քարերով, կրաշաղախով, վերանորոգված է 1939 թվականին, 1959 թվականին նախատեսվում է 1939 թվականին կառուցված կղմինդրածածկը փոխարինել սալաքարերով:

(Շարունակելի)



Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈԿՏ. ԶԵՈՖՖՐԻ ՖԻՇԵՐԸ
ԿԱԼԿԱՍՔԱՅԻ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ՆԱԶԱՐԵՅ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Համայն Անգլիո եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ դոկտ. Զեոֆֆրի Ֆիշերը, զեպի Ճապոնիա իր կատարած հովվական այցելութեան ճանապարհին, մարտի 26-ին, հինգ օրով մնացել է Կալկաթայում, որպէս հյուրը Հնդկաստանի անգլիկան եպիսկոպոս Արարինդո Գադերշիի և մարտի 27-ին, Ավագ ուրբաթ օրը, առաւոյտյան ժամը 10-ին, այցելել է Կալկաթայի հայոց Ս. Նազարեթ եկեղեցին և ընդունվել հանդիսավորապէս Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի Հայրապետական պատվիրակ և առաջնորդ գերաշնորհ Տ. Ասողիկ սրբազանի, քահանայական դասի, եկեղեցական վարչութեան անդամների և հավատացյալների հոծ բազմութեան կողմից և «Հրաշափառով» առաջնորդվել և կեղեցի:

Եկեղեցական արարողութեան ավարտին, գերաշնորհ Տ. Ասողիկ սրբազանը, հանուն Հնդկահայ թեմի հոգևորականութեան և հայ համայնքի, բարի գալստյան սրտազին խոսք է ասել մեծանուն հյուրին.

«Մեր և մեր համայնքի անունով սրտազին բարի գալուստ կմաղթենք Ձերդ Գերապատվութեան և կփութանք հայտնել խորին շնորհակալութիւն՝ եզակի և անմոռանալի սույն այցելութեամբ մեզ շնորհված պատվին համար, որ բոլորիս կպատճառե անսահման ուրախութիւն»:

Ձերդ Սրբազնութիւնն իր ամենաթանկագին ժամանակն մաս մը տրամադրելով, հանձն առավ այցելել մեզ և այս ձևով պատեհութիւն տվա՞վ մեզի՞ անգամ մը ևս արտահայտելու այն համակրանքի ու մեծա-

րանքի չերձ դգացումը, որը Հայ Եկեղեցին կտածն Ձեր բարձր անձին հանդեպ:

Քրիստոնեւթեան պաշտպանութեան համար մեր ժողովուրդի խաղացած դերը ծանօթ է Ձերդ Սրբազնութեան: Հին և խավար տարիներուն հայերը այս հեռավոր ափերու վրա ևս բերած են Քրիստոսի Ավետարանը և հարատե նախանձախնդրութեամբ պահպանած՝ իրենց հայրերու հավատքը: Այս եկեղեցին, որուն մեջ կգտնվինք այժմ և որ այս մեծ քաղաքի, Կալկաթայի հնագույն քրիստոնեական աղօթավայրն է, մեր ժողովուրդի հավատքի խորհրդանշաններն մին կհանդիսանա:

Ձերդ Սրբազնութեան ներկայութիւնը այսօր մեր մեջ՝ բացառիկ նշանակութիւն ունի մեզ համար: Այս առթիւ Ձերդ Սրբազնութեան կհայտնենք մեր չերձ շնորհակալութիւններն ու երախտագիտական զգացումը: Խորապէս զգածված ենք և գոհունակութեամբ և հպարտութեամբ միշտ պիտի հիշենք այս անմոռանալի օրը: Ձերդ Սրբազնութեան կներկայացնենք մեր անկեղծ բարեմաղթութիւնները Ձեր ներկա բացառիկ և պատմական նշանակութիւն ունեցող հովվական այցելութեան նպատակներու և առաջադրութիւններու կատարյալ հաջողութեան համար, որոնք շատ մեծ կարևորութիւն ունին Անգլիկան Եկեղեցւո, ինչպես նաև մյուս քրիստոնյա եկեղեցիներու բարօրութեան և հառաչդիմութեան համար:

Պատիվն ունինք ըլլալու Ձերդ Սրբազնութեան եղբայրն ի Քրիստոս: Բարի եկաք Աստուծո այս սուրբ տունը»:

Գերաշնորհ Տ. Ասողիկ սրբազանի ողջու-
նի շնորմ խոսքերին պատասխանեց Քենտրո-
բերիի արքեպիսկոպոսը և ասաց.
«Աիրենցյալ եղբայր իմ ի Քրիստոս, և
դուք բոլորդ՝ այս համայնքի և այս եկեղեց-
վո զավակներ:
Նախ կողջունեմ ձեզ Անգլիո և բոլոր անգ-
լիկան եկեղեցիներու անունով, որպես մեր
ավագ եղբայրները, հիշելով այն իրականու-
թյունը, որ Գուգ Անոր հոտեն ներս բերվե-
ցաք նախքան Անգլիո քրիստոնեական հա-

րսավ, քաջալերված՝ Հայ Եկեղեցվո հետ ու-
նեցած մեր հինավուրց բարեկամութենն,
բարեկամություն մը, որ ինձմե շատ առաջ
Անգլիո եկեղեցվուն սկզբնական շրջանն
սկսած է:
Այս վերջին տարիներուն միշտ սերտ կա-
պեր գոյություն ունեցած են մեր միջև և
մենք բաժնած ենք մեր ցավերն ու ուրախու-
թյունները իրար հետ: Ահա այդ հինավուրց
բարեկամության քացորոշ մեկ ապացույցն
էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելու-



ՔԵՆՏՐՈՆԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԱՍՈՂԻԿ ՍՐՈԱԶԱՆԻ, Տ. ԳՈՂՈՍ ՔԱՀԱՆԱՅԻ ԵՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱՐՑՈՒԹՅԱՆ ԱՆՐԱՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՎԱԹՔԱՅԻ ՀԱՅՈՍ Ա. ՆԱԶԱՐԹ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԿՈՒՄ:

վատքն ընդունին ու անոր մեջ հաստատ-
վիլը:
Խորապես կհուզե զիս այն հանգամանքը,
որ Քենտրբերիի արքեպիսկոպոսի մը կողմն
այս երկրին և քաղաքին տրված առաջին
այցելության ժամանակ ուրախությունը ու-
նեցա ձեր կողմն ընդունվելու և ազոթելու
այս սուրբ տաճարին մեջ, կատարելով մեր
խոնարհության, հնազանդության և ազոթքի
պարտքը Տեր Հիսուս Քրիստոսին: Եվ առա-
ջինը կխոստովանիմ, որ պատրաստ եմ ընե-
լու այս, ոչ թե հանկարծական զգացումն մը
տարված, այլ ինչպես Ձերդ Սրբազնությունն

թյունը Մեզ, Անգլիո մեջ, եթե ես Քենտրբե-
րիի առաջին արքեպիսկոպոսն եմ այստեղ
այցելող, ապա ուրեմն վազդեն Կաթողիկոսը
առաջին Ամենայն Հայոց Հայրապետն էր, որ
ոտք դրած ըլլա Անգլիո հողին վրա: Ի՞նչ
մխիթարական էր տեսնել, թե Մենք ոչ մեկ
հիգ թափեցինք բարեկամություն ստեղծե-
լու, Մենք արգեն բարեկամներ էինք առա-
ջին իսկ հանդիպումն: Մեզմե անոնք, որ
Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանդիպելու
և Անոր հետ խոսելու ուրախությունը ունե-
ցան, տեսան, որ իրապես Մեր միջև որևէ
կարգի արգելքներ չկային, այլ Մենք իրա-

պես եղբայրներ ենք Քրիստոսի շարժարանքներով միացած և Անոր հարությամբ զորացած, Մենք Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուրախ սրտով ճանապարհ մաղթեցինք, երբ կվերադառնար դեպի Իր մեծ գործը, զոր կկատարե Ան ամբողջ աշխարհի մեջ ցրված բոլոր հայ եկեղեցիներու համար:

Ինձի այնպես կթվի, որ Իմ այս այցելությունը խորհրդանշական օրինակ պիտի ծառայե եկեղեցիները իրար միացնելու, անձնական բարեկամության անխորտակելի կապով:

Խորապես կհուզե դիս այսօր, Ավաղ ուրբաթ օրը, Իմ այցելությունը այստեղ: Այսօր կհիշենք մեր Տիրոջ շարժարանքները, որոնք փրկություն բերին մարդկության, և լկա ջրիստոնյա աշխարհի մեջ եկեղեցի մը, ոտ ավելի տառապած ըլլա, քան Հայոց եկեղեցին: Հայոց եկեղեցին դարերու ընթացքին ենթարկվեցավ շարժարանքներու, բռնության, մարտիրոսացման և գերության: Բայց այդ բոլորով հանդերձ ոչինչ կրցավ ընկճել մեր ջրիստոնեական ոգին և հավատքը: Դուք մեր Տիրոջը ծառայած եք ձեզ բաժին ինկած միակ ճանապարհով, այսինքն տառապանքի ճանապարհով:

Երբ կմտածեմ Հայ եկեղեցվո մասին, կմտաբերեմ, որ դարերու ընթացքին դուր կրած եք շատ շարժարանքներ և հղած եք Հայ եկեղեցվո հավատքի վկաները: Ուրեմն այս Ավագ ուրբաթ օրը կողջունեմ ձեզ այն խորունկ գիտակցությամբ, սր գույլ ևս մեզ հետ, և կրնամ ըսել նույնիսկ մեզմե շատ ավելի ծանր տառապանքի բաժինով մը, տված եք Քրիստոսի վկայությունը:

Ցավ կզգամ հայտարարելով, որ տակավին ջրիստոնեական բոլոր եկեղեցիներուն մեջ կան անհամաձայնություններ: Չեմ մոռնար նաև, որ ներկայիս Երուսաղեմի Հայոց եկեղեցիին մեջ ցավալի վիճակ մը կտիրե, իբր արդյունք, ինչքան Ինձ հայտնի է, զուտ քաղաքական հակասության մը, որ առնչություն չունի մեզ իրարու կապող հավատքի

հետ: Իմ միտքը և սիրտը համակրանքով լեցված են դեպի մեր եղբայրներն մեկը՝ Տիրան արքեպիսկոպոս ներսույանը՝ Երուսաղեմի Հայոց եկեղեցվո ընտրյալ մեր պատրիարքը, որ արտոնված չէ իր Աթոռը գրավելու քաղաքական այս տակնուվրայության պատճառով, որ նաև տաղնապետն առաջացուցած է բոլոր երկիրներու եկեղեցիներու մեջ: Ես ուրախ եմ, որ անձնապես բարեկամ եղած եմ Տիրան արքեպիսկոպոս ներսույանին և Անգլիայի մեջ Մեր գործերն մեկը նկատ է օգնության հասնիլ անոր և եկեղեցվո դժբախտության օրերուն: Ես չեմ վարանիր այս ըսելու, որովհետև Իմ ըսածներն ոչ մեկը վստահարար կհակասե վազգեն Կաթողիկոսի տեսակետին, որովհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսը անընդհատ կաշխատի Հայ եկեղեցվո միասնության համար:

Ուրեմն, այս Ավագ Ուրբաթ օրով, կողջունեմ ձեզ ջրիստոնեական խորունկ սիրով և հարգանքով համակված, հիշելով, որ դուք, Հայ եկեղեցվո զավակներդ, դարերու ընթացքին բազմաթիվ վկաներ եք տված ջրիստոնեական հավատքի համար: Եվ այսօր այ բազում ղեկավարություններու մեջն կանցնիք, սակայն կմնաք որպես անզրդվելի վկաները Քրիստոսի հավատքին, զոր Ան հայտնեց և հռչակեց խաչին վրա մեզ համար հարության սիրով, զոր միայն ջրիստոնեական հավատքը կրնա տալ, Եղբայր, կողջունեմ ձեզ մեր Փրկիլի անունովս:

Քննորբերի Արքեպիսկոպոսի՝ Կալկաթայի Հայոց Ա. Նազարեթ եկեղեցուն տված պատմական այցելության կապակցությամբ, որպես հիշատակ, հնդկահայ համայնքի անունից, գերաշնորհ Տ. Ասողիկ սրբազանը դուրս: Ջեռֆֆրի Ֆիշերին նվիրեց ոսկե խաչ: Քննորբերի Արքեպիսկոպոսը, զգացված այս ջերմ ընդունելությունից, հրամեշտ առավ սրբազանից և բոլոր ներկաներից լավագույն տպավորություններով, օրհնելով Հայոց եկեղեցուն և հայ հավատացյալներին:





ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

II. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՁԻ ՇՔԱՆՇԱՆԻ ՏՎԶՈՒԹՅՈՒՆ

1958 թվականի դեկտեմբերի 1 և 1959 թվականի մայիսի 14 թվակիր հայրապետական սրբատառ կոնդակներով Ա. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ականակետ օսկյա շխանառով պարգևատրվել են իրենց աստվածաճաճո և եկեղեցյանվիր գործերի համար Մայր Աթոռի հարազատ զավակներ՝

Մեծահարգ տիար ԵՐԶԱՆԻՆ ԹԱՃԻՐՅԱՆԸ (Թաղղաղ),
Մեծահարգ տիար ՊԵՐՃ ԴԱՆԻԵԼՅԱՆԸ (Կահիրե):

ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻ ՏՎԶՈՒԹՅՈՒՆ

Հայրապետական սրբատառ կոնդակով 1959 թվականի հունվարի 19-ին առևտրյան պատիվ շնորհվեց Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի գործերի վարիչ գերաշնորհ Տ. ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓԵՄԶԱՆՅԱՆԻՆ:

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԼԱՆՋԱԽԱՅԻ ՏՎԶՈՒԹՅՈՒՆ

1959 թվականի ապրիլի 29-ի թվակիր հայրապետական սրբատառ կոնդակով, իրենց աթոռանվիր և արդյունավոր գործունեության համար, ի նշան հայրապետական գնահատանքի և սիրո, վարդապետական ականակետ լանջախաչ կրելու իրավունք շնորհվեց Մայր Աթոռի երիտասարդ միաբաններին՝

Հոգեշնորհ Տ. ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՅԱՆԻՆ (առաջնորդական փոխանորդ Արարատյան թեմի):

Հոգեշնորհ Տ. ՊԱՐԳԵՎ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ (հոգևոր հովիվ Մոսկվայի հայոց):

Հոգեշնորհ Տ. ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՆՍՅԱՆԻՆ (փոխ-լուսարարապետ Մայր Աթոռի):

Հոգեշնորհ Տ. ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԹԱՐՅԱՆԻՆ (փոխ-տեսուչ Հոգևոր ճեմարանի):

Հոգեշնորհ Տ. ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԵՏԻՎՅԱՆԻՆ (վանահայր Ս. Գեղարդի վանքի):

Կիլիկյան Աթոռի Կաթողիկոսական տեղապահ Տ. Խաղ արքեպիսկոպոսի միջնորդությամբ, մայիսի 6-ի հայրապետական սրբատառ կոնդակով, վարդապետական ականակետ լանջախաչ կրելու իրավունք շնորհվեց նաև Կիլիկյան Աթոռի միաբաններ՝

Հոգեշնորհ Տ. ԶԱՎԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆԻՆ (հոգևոր հովիվ Ադդիս-Աբեբայի հայոց):

Հոգեշնորհ Տ. ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՐՊԻՍՅԱՆԻՆ (Բելյուս):

Հոգեշնորհ Տ. ԳՅՈՒՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱԳՅԱՆՅԱՆԻՆ (Բելյուս):

ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻ ՓԱՀԱՆԱՑՄԱՆ ԼԱՆՋԱԽԱՅԻ ԵՎ ԾԱՂԿՅԱ ՓԻՂՈՆԻ ՏՎԶՈՒԹՅՈՒՆ

Քահանայական երկարամյա և անբասիր ծառայության համար, հայրապետական սրբատառ կոնդակով պարգևատրվել են՝

Արժանապատիվ Տ. ՎԱՀԱՆ ՔԱՀԱՆԱ Տ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ (Գյոդակլու), լանջախաչ:

Արժանապատիվ Տ. ՔԵՐՈՎՐԵ ՔԱՀԱՆԱ ՇԱՀԱԶՅԱՆ (Էջմիածին), լանջախաչ:

Արժանապատիվ Տ. ԱՐՄԵՆԱԿ-ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՀԱԿՈՐՅԱՆ (Աթենք), լանջախաչ:

Արժանապատիվ Տ. ՊՍԱԿ ՔԱՀԱՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ (Կահիրե), ավագ քահանայություն, լանջախաչ և ծաղկյա փիղոն:

Արժանապատիվ Տ. ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱ ՇԱՔԱՐՅԱՆ (Կահիրե), լանջախաչ և ծաղկյա փիղոն:

Արժանապատիվ Տ. ՆԵՐՍԵՍ ՔԱՀԱՆԱ ԿԱՏԱՐԻԿՅԱՆ (Մարսել), լանջախաչ:

Արժանապատիվ Տ. ՎԱԶԳԵՆ ՔԱՀԱՆԱ ՂԱՐԱԳՈՋՅԱՆ (Կիրովական), լանջախաչ:

Արժանապատիվ Տ. ԿԱՐԱՊԵՏ ՔԱՀԱՆԱ ՂԱԶԱՐՅԱՆ (Կիրովարդ), լանջախաչ:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿ

1959 թվականի փետրվարի 7-ին, մարտի 31-ին, ապրիլի 29-ին և մայիսի 5-ին, իրենց եկեղեցասիրական, բարեսիրական և կրթական գործունեության համար, հայրապետական օրհնության կոնդակի արժանացել են հետևյալ հավատացյալները.

Մեծահարգ տիար ՇԱՀԱՆ ՍԻՄՈՆ (Թբիլիսի):

Ազնվափայլ տիկին ԶԱՐՈՒՀԻ ԵԱՂԿՈՒՆԻ (Կահիրե):

Ազնվափայլ տիկին ՎԱՐԴՈՒՀԻ ԺՈՂԻԱՅՎԱԶՅԱՆ (Քեռն):

Մեծահարգ տեր և տիկին ՀԱՔԵԹ և ԱՐԱՔ ՍԻ ԵԱՌՈՒԿՅԱՆ (Լոս-Անջելոս):

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը իր սրտագին շնորհավորություններն է հայտնում հայրապետական բարձր գնահատության արժանացողներին և նրանց բոլորին ցանկանում է ցաղառողչություն և հետագա հաջողություններ իրենց եկեղեցանվեր գործերի մեջ:

